


458



ԻՈՒՆ

ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ
ՍՏՐԻԱՐԶՈՒԹԵՄՆ
ՀԱՅՈՓ
ՆՐՈՒՍԱՂԷՄԻ



ԺԱ. - ԺԲ

1980



ՄԻՈՆ

ԾԴ. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ

ԿՐՈՆԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ
ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ ԵՐՈՒՍԱԼԷՄԻ ՀԱՅ ՊԱՏՐԻԱՐԻՈՒԹԵԱՆ

1980	Նոյեմբեր — Դեկտեմբեր	Թիւ 11 - 12
1980	November — December	No. 11 - 12

SION

VOL. 54

A MONTHLY OF RELIGION, LITERATURE AND PHILOLOGY
OFFICIAL PUBLICATION OF THE ARMENIAN PATRIARCHATE, JERUSALEM

Proprietor: His Beatitude the Armenian Patriarch of Jerusalem



St. James Press
Jerusalem



9320

198-98

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Սուրբ Յարութեան Տաճարի Նորոգութիւնները

Անդամ մը ևս կ'ուզենք հայութեան ուշադրութիւնը հրաւիրել Ս. Յարութեան Տաճարի նորոգութեան, յատուկ առիթով մը. Գմբէթին վերաւերելութիւնը: Այս ամիս աւարտեցաւ հսկայական զմբէթին ամբողջական վերակառուցումը, մեր Տիրոջ Սուրբ Գերեզմանը շրջապատող քսանհզոր սիւներուն վրայ բարձրացող: Կաթողիկէ զմբէթին վերաշինութիւնը տեւեց տարիէ մը աւելի և կատարուեցաւ Անգլիական ընկերութեան մը ձեռքով՝ Freeman and Kershaw: Սուրբ Յարութեան Տաճարի շինութեան այս մասը միայն արժեք վեց հարիւր իննսուն եօթը հազար Անգլիական թղթոսկի և վճարուեցաւ երեք համայնքներուն կողմէ. Յոյն, Լատին և Հայ: Հայոց Պատրիարքարանին արժեք երկու հարիւր երեսուն հազար Անգլիական Ոսկի, այսինքն մօտ հինգ հարիւր յիսուն հազար տոլարի պատկառելի զուամբը:

Սփիւռքի տարածքին վրայ կան երկիրներ, ուր հայեր նախարար են, երեսփոխան, պետական պաշտօնեայ, դատաւոր և քաղաքական ազդեցիկ դէմք: Զկայ, սակայն, երկիր մը, ուր հայ կազմակերպութիւն մը ունենայ իրաւունքներ, միջազգային ճանաչումով հաստատուած, բացի Երուսաղէմէն:

Մեր նախնիք ունէին այդ իրականութեան գիտակցութիւնը և ամէն միջոց և ազդեցութիւն կը զործածէին որպէսզի միջազգային իրաւասութիւններով հաստատուած հայոց ներկայութիւնը ամուր մնայ Սուրբ Տեղեաց մէջ:

Օսմանեան իշխանութեան օրերէն, Հայոց Պատրիարքարանի իրաւունքները միջազգային Սրբատեղիներուն վրայ, քրիստոնեայ մեծ Եկեղեցիներու — Կաթողիկէ և Օրթոդոքս — կողքին, եղած են համահաւասար սեփականութիւն և զործածութեան իրաւունք ամբողջ աշխարհի քրիստոնէութեան ամենէն նուիրական վայրերուն — Ս. Յարութեան Տաճար, Բեթղեհէմ և Գեթսեմանիի պարտէզ:

Երուսաղէմ քաղաքն է երեք աստուածապարզ կրօններու Սրբավայրերուն. Հրեան՝ իր Տաճարի մնացորդացով, Մահմետականը՝ Օմարի և Ալ-Աքսա մզկիթներով, իսկ Քրիստոնեան՝ Ս. Յարութեան Տաճարով, երուսաղէմ կը նկատեն իրենց սեփականութիւնը, ոչ թէ քաղաքական հասկացողութեամբ կամ պետական իմաստով, այլ իբրեւ կրօնական նկարագիր ունեցող տաճար-քաղաք մը, ուր, իւրաքանչիւր Սրբավայրի մէջ՝ Հրեան, Քրիստոնեան կամ Մահմետականը կու գան վերանորոգելու իրենց ուխտը նոյն ամենակալ Աստուծոյն:

Այսօր, կրօնական նոյն զգացումով է որ Հրեան՝ Լացի Պատը բրած իր զերագոյն ուխտավայրը, Սրբազան Քաղաքին կապած է իր հոգին՝ անքակտելի

պէսզի Ս. Յարութեան Տաճարի մուտքին՝ Ուշաթափման Վայրը, ուրկէ Սուրբն Մարիամ նայեցաւ իրաւունքով իր Որդիին և ուշքը կորսնցուց, մնայ հայկական. որպէսզի անոր կողքին՝ Խաչեցեալին մեծ մոգայիքը ըլլայ միշտ «յիշատակ ազգիս հայոց», որպէսզի Երկրորդ Գողգոթան, իր զոյգ խորաններով մնայ հայուն սեփականութիւնը, որպէսզի Տաճարին ամենէն հին մասը՝ Ս. Գրիգոր Լուսաւորչի Եկեղեցին, հայկական իր ճարտարապետութեամբ, ըլլայ հայկական յաւիտենական ներկայութիւն մը. վերջապէս, որպէսզի Հայը՝ Յոյնին և Լատինին հետ, հաւասար իրաւունքով զործածէ Քրիստոսի Ս. Գերեզմանը, մատուցանելու համար Ս. Պատարադը՝ իր հայրերու Աստուծոյն:

Ոչ մէկ այլ ժողովուրդ ունի նման իրաւունքներ, Յոյնին չափ՝ որ կը ներկայացնէ Օրթոտոքս աշխարհը և կը հաշուէ երեք հարիւր միլիոն և Լատինը, որ կը ներկայացնէ Կաթոլիկ աշխարհը և կը հաշուէ առաւել քան 700 միլիոն:

Քսան տարիներէ ի վեր կը վերանորոգուի Սուրբ Յարութեան Տաճարը: Յունաստանի կառավարութիւնը կը հոգայ մեծագումար ծախսերը Յունաց Պատրիարքարանին, որոնք անցան երկու միլիոն տոլարը: Լատինաց բաժինը կը հոգայ Վատիկանը, իր անսահման կարողութեամբ: Հայը, որ պէտք է մասնակցի մէկ երրորդով, կը հոգայ ծախսի իր բաժինը նուիրատուութիւններով և Պատրիարքարանի հասոյթներով:

Պատրիարքարանը ծախսած է ցարդ մօտ մէկ ու կէս միլիոն տոլար, ընթացիկ նորոգութիւններուն համար, իսկ այս տարի, զմբէթի նորոգութեան համար միայն՝ հինգ հարիւր յիսուն հազար տոլար: Ընդամենը երկու միլիոն տոլար, մօտաւորապէս: Եւ աշխատանքները վերջ գտած չ'են տակաւին ...:

Խորին երախտագիտութեամբ կ'ուզենք յիշատակել այստեղ Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան իշխանավայել օժանդակութիւնը Ս. Յարութեան Տաճարի նորոգութեան ծախսերուն. ան երեք հարիւր հազար տոլար տրամադրեց ընդհանուր նորոգութիւններուն, առաջին իսկ օրէն, իսկ զմբէթի նորոգութեան համար Պատրիարքարանիս օգնութեան վերջաց՝ տրամադրելով հարիւր ութսուն հազար տոլար:

Ամբողջ ազգին նուիրատուութիւնները Ս. Յարութեան Տաճարի նորոգութեան հասան եօթ հարիւր հազար տոլարի, մօտաւորապէս: Մնացեալ գումարները վճարուեցան Պատրիարքարանիս կողմէ, անցեալ քսան տարիներու ընթացքին և կը շարունակուին վճարուիլ ամէն շաբաթավերջի:

Այսօր, երբ Երուսաղէմի հարցը միջազգային հրապարակի ամենէն տազնապալին է, երբ Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդը, Միացեալ Ազգերու Կազմակերպութիւնը, Իսլամ Ազգերու Կազմակերպութիւնը, Վատիկանը և մեծ մայրաքաղաքները զայն կը նկատեն Միջին Արևելքի թնճուկին կեդրոնական հարցը, հասած է ժամը որ հարց տանք հայ հանրային կարծիքին. ի՞նչ կ'ընէ հայութիւնը զօրավիգ կանգնելու համար Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան՝ հայոց իրաւունքներու պահպանումին և ամրացումին համար: Կը գիտակցինք, առ նուազն, հարցի կարևորութեան:

Ս. ԳՐԱԿԱՆ

ՅԵՍՈՒ ԿԸ ԿԵՑՆԷ ԱՐԵՒԸ

Սեփական հող ունենալու ձգտումը գերադասյն հրայրքն է եղած բոլոր ժողովուրդներուն։ Հայրենիքը հպարտ ու գեղեցիկ ապահովութիւնն է սերունդներու, արիւնին հետ շրջան ընծալ։ Պաշտպան բերդը՝ չարիքներուն դիմաց, հնոցը՝ ուր կը հալին նեղ ու պղծակի կիրքերը, ազնիւ ու բարձրորակ զգացումներու արձակութեանը մէջ։ Հողը որ կարենար ըլլալ սուրբ գերեզմանը հայրերուն, օրօրանը ծնածներուն, կրկէսը մեծցողներուն, ժողովուրդներուն հոգեկան ապրումները մայրաւորող։ Սեփական հողին համար աղգերը չեն վարանիր ամէնէն վայրագ միջոցները գործադրելու։

Յետուն յաջորդն էր Մովսէսին, ընտրուած իր մեծ ուսուցչի փափաքով և Աստուծոյ հաճութեամբ։ Ան այժմ իր ուսերուն ունէր առաջնորդի ճերմակ վերարկուն և դէմքին՝ քողը։ Անապատին մէջ անցնող տարիները և իսրայէլի մղած պատերազմները իր գլխաւորութեամբ, վերածեր էին դինքը զօրեղ և խորհրդազգած անձնաւորութեան մը։ Դէմքին ինքնայատուկ կառոյցը, աչքերուն մութ գոյնը և ճակտին աղեղը զայն կ'ընէին ուշագրաւ, արու և հաստատ։ Ընդհանուր կերպարանքէն բխող այս հոգեմոյնքը անվրէպ լուսապսակն է մեծութիւններու, առանց ներքին ճիգի նպաստին։ Տակաւին, խօսուածքին թևարկել լրջութիւնը, խղճմտանքին խորունկ բղքատւները, խոկումներէ ակօսուած ճակատը, որոնք դիտելին առաւելապէս ապրած, հանգչած մարդերու վրայ, զինքը իր տարիքէն աւելի ցոյց կու տային։ Ան ներկայացուցիչն էր նոր սերունդին, անապատի մէջ հասակ առած, որուն կը վստահուէր ցեղին առաջնորդութիւնը։

Յետուի մեծագոյն յաղթանակը եղաւ

Երիթովի գրաւումը, իսրայէլի դէպի Աւետաց երկիր յառաջացող ճամբուն վրայ։ Արշաւախումբը անցաւ Յորդանան գետէն, որուն կը թափօրապետէին քահանաներ, սուսերակիրներ, նետաձիգներ, փողահարներ, իսկ անոնց առջևէն՝ Ուխտի Տապանակը։ Երիթովը պարսպուած քաղաք էր, արմաւենիներով և թաւախիտ ծաւերով եզերուած, երկարելով իր պարտէզները Փոգօրի կարծր դաշտէն մինչև Սէգոր։ Եօթ օրեր շարունակ Յեսու դարձուց իր բանակը քաղաքի պարիսպներուն շուրջ, սարսափի մատնելով պաշարուածները։ Յետոյ պարիսպներէն մագլցելով ներս մտան և սրակոտոր ըրին բնակիչները։ Երիթովը առաջին քաղաքն էր որ կը գրաւուէր իսրայէլացիներէն։

Յորդանանի հովիտին տիրանալէ յետոյ, Յեսու արագ արշաւանքներով յառաջացաւ դէպի հիւսիսի և հարաւի բարձունքները։ Իրարու ետեւէ ինկան Գոյի և Գարաւոն։ Երուսաղէմի թագաւորը, Ադոնիրեղեկ, երբ իրազեկ դարձաւ իսրայէլի յաղթութիւններուն, մարդեր զրկեց Գերոնի, Յերիմութայի, Լաքիսայի և Ոգոդոմայ իշխաններուն որ իրեն միանան, կեցնելու արշաւանքը։

Սաստիկ եղաւ ճակատամարտը։ Կը հնչէին փողերը, կռուողները՝ հովէն քըշուած կարծես, կատաղօրէն իրարու դէմ կը նետուէին։ Օղը լեցուած էր գոռում գոչումով և անեղ սոււրացներով փքիններուն։ Կը ճշային վերը տրծիւները, թորմարիւնի բոյրէն արբշիւ։ Իսրայէլի մարտիկները վճռական թափով որոշեր էին խորտակել հինգ թագաւորներու միացեալ բանակը՝ որ կը նահանջէր լեռներու ետին։

Իրիկունը կը բացուէր իրարու յաջորդող յաղթանակներով։ Յետու աւելի ժադող յաղթանակներով։ Կերջ տալու նահանջող մանակ կ'ուզէր վերջ տալու նահանջող թշնամիին։ Երկնքին նայեցաւ, «Աստուած իսրայէլի» աղաղակեց, «Դուն ես տէրը ժամանակին և երկնքում արեւուն, թող կանգ առնէ արեգակը, մինչև որ իսրայէլը վերջ տայ իր թշնամիներուն, որովհետեւ այսօրուան նման սերիշ օր մը պիտի չծագի»։ Յաղթական մարդու հոգիէն չծագի։ Յաղթական մարդու հոգիէն չծագի։ Յաղթական մարդու հոգիէն չծագի։ Յաղթական մարդու հոգիէն չծագի։

բուն ուղղուած, սրտառուէ և բանաստեղծական ըլլալէ աւելի՝ խորհուրդն է մարդուն, որ կը փորձէ խորտակել կաշկանդիչ շղթան բնութեան օրէնքներուն, միացնելու իր փափաքը Աստուծոյ կամեցողութեան: Իսրայէլի զինուորները փոթորիկի պէս աւելցին թշնամիները, աբիւնով ներկեցին ջուրները, կարմիրի վերածեցին երկինքը՝ քաղաքներու հրդեհով, շողացնելով իրենց զէնքերուն բոցը մոխրացող ոստաններու վրայ, տակաւին գիշերը հնազած իր սև պատմուճանը:

Չափ հունէր ուրախութիւնը յաղթողներուն: Ռազմիկները հպարտութեամբ կը պատմէին կռիւը և հրաշքով կանգ առնելը արևին: Կիները՝ կրակի խարոյկներուն մօտ հիացումով լիցուած, անպատրաստից երգեր կը յօրինէին, և դափի ու նուագարաններու ընկերակցութեամբ կը դովաքանէին իրենց մարդոց քաջագործութիւնները:

Յետուի յաղթանակներու առթած խրաւովքն ու սարսափը այնքան մեծ էր դրացի ժողովուրդներուն վրայ, որ Մովաբացիներու Բաղակ արքան Միջագետքէն բերել տուաւ Բաղամմ հարցուկը որ նզովէ Իսրայէլը, այն հաւատքով թէ մարգարէին անէծքն ու օրհնութիւնը աստուածային կամքի ոյժ ունէին: Սակայն բախտադուշակը յայտնեց թէ չէր կրնար անիծել, ինչ որ Տէրը չէր անիծած: «Աստուած Եգիպտոսէն հանեց դանոնք և շնորհեց անոնց ոյժ՝ որ չ'ազդուէր ո՛չ հմայքէն, ոչ ալ նզովքէն: Կը տեսնեմ ահա որ Յակոբի աստղը կը ծագի երկնքին մէջ, և հրեշտակները կը քալեն Իսրայէլի բանակին առջևէն, առաջնորդելու զիրենք սուրբ լեռը իրենց նախնիքներուն»:

Մեծ իտէալով լիցուած մարդերու համար դժուար չէ վերահաս մութը լոյսի փոխել: Անոնք որ չեն կորսնցուցած իրենց երկինքը, հեռու չեն այս ամօքիչ և քաղցր կրկներևոյթէն: Անոնց աչքերը կրնան մութիւնէն լոյս առնել, ցերեկուան վերածելու վերահաս գիշերը:

b.

ԸՆԾԱՅՈՒՄՆ Ի ՏԱՃԱՐ(*)

Օրերը կ'անցնէին թեթևօտն ու ժրպտեքեա, կայտառ ու ոստոստուն մանուկներու նման: Աղջնակը հասակ կը նետէր, օրէ օր բազմապատկելով իր գեղն ու գրաւչութիւնը: Տիրոջ անտես բայց ամենակարող ձեռքը բախտի ու յաջողութեան բոլոր դռները կը բանար շնորհընկալ բնտանիքին առջև: Ծանր ու ժպտազուրկ տարիներէ ետք, Յովակիմի և Աննայի անշուք պատասպարանը կը յորդէր զարնա. նային խայտանքով:

Երբ երրորդ տարին կը մօտենար իր լրումին, օրհնեալ ամուլը ժամանակը հասած կը նկատէր դործագրելու Ենովայի հետ լուսիայի կնքած իր ուխտը: Ոչ մէկ ոյժ կրնար զինք դարձնել պարտազանց ու երախտամոռ: Տիրոջ շնորհաց օծումովը բախտաւորուած հոգիներ, որոնց սպիտակ մարմարին վրայ աշխարհի մուրին ու ցեսխին ամուր դաշնակցութիւնն իսկ պիտի չյաջողէր դոյզն հափով բժաւորել: Տուկուն, ամուր հաւատքով մարդեր, որոնք պիտի յօժարէին իրենց ամենասիրելի հարազատներէն կամաւորապէս բաժնուիլ, ըլլալու համար աւելի մօտ ու հաճելի՝ դանոնք զոյաւորող Մեծ Ոյժին:

Անցնելով քաղաքի օժտալար ու բազմախճող արահետներէն, սպիտակահեր ու կորաքամակ ամուլը կտրճ տեսնէն ինքզինքը գտու հոյակերտ Տաճարի բերդանման պարիսպէն ներս: Մանկուհին, մերթ հօրն ու մերթ մօրը ձեռքէն բռնած, անգիտակից երանութեամբ լիցուած, անընդհատ կը ճռուողէր քաղցրաձայն: Աշնանալիւրջի արևին պարտասած ճառագայթները, Տաճարի բարձրավիղ աշտարակէն թեքուելով, տակաւ սաստկացող հովին հետ, կը խաղային դանդուր ու առատ վարսերուն հետը աղջնակին:

(*) Հատուած մը ևս, հեղինակին «Տիրամայրը» խորագրուած անտիպ երկասիրութենէն, որուն առաջամասը երկցաւ Ամապրիս 1979 Սեպտ. - Հոկտ. թիւին մէջ:

կրկնակի իր թևերը հովերու քմայքին յանձնած առաջ դարպասը Տաճարին սըրտորաց հրաւէր մըն էր ուխտակատար զոյգին: Յովակիմ, աշխարհէն ու մարդերէն կտրուած, կը յառաջանար ծանրախոհ: Իրեն կը պակսէր իմաստութիւնը դէպքերն ու պարագաները իրենց ճշգրիտ իմաստովը արժեւորելու: Ահա թէ ինչու իր դէմը պերճօրէն կանգնած Աստուծոյ Տան առաջին հիմնադրին նման, իմաստութիւն կը հայցէր Տիրոջմէ, ամէն բանէ առաջ: Աննա, միւս կողմէն, մայրական սէրը Աստուածսիրութեամբ քողարկելու վնասը իր փորձերէն կաք, նոյն խնդրանքը կը մատուցանէր Աստուծոյ զահին:

Ոսկեհամուկ ու ծոպաւոր պարեգօտին մէջ վտիտ իր իրանը ամփոփած ռարբի մը, աղօթագրքերով բռնաւոր սեղանին առջև բազմած, առաջին դիմաւորողը պիտի ըլլար Տիրոջ այցելութիւնը ընդունած ընտանիքին: Խստակեաց ու բարեկրօն, իր սիրտը կ'արիւնէր իր սեփական ժողովուրդին հոգեւոր ու բարոյական կեանքը կազմալուծող մեղքերու ու մոլութեանց համաճարակին ի տես: Առաստաղի ձուռձև բացուածքներէն թափուած նիւար լոյսը կը շնչէր խորհրդաւորութիւնը տարիներէն ու տառապանքէն խորշոմած իր դէմքին: Մարգարէական յայտնատեսութեամբ պայծառացած հոգիներուն շուքն ու շնորհը կար իր վրան:

Ծերունիին շիջելամերձ աչքերը անսովոր կրակ մը առին անմիջապէս, երբ Յովակիմ և Աննա կը մատուցանէին աղջընակը ռարբիին և անոր միջոցաւ՝ Տաճարին ու Աստուծոյ: Տիրոջ պարգևածը Տիրոջը կ'ընծայէին, մրմնջելով մեղմաձայն. «Զքոյս ի քոյոց քեզ մատուցանեմք»:

Մարիամ պիտի մնար հետը իր տարեկիցներուն մինչև արփուկքի տարիքը: Բոլոր «ուխտի մանկանց» նման, հոգեւոր կրթանքներով ու Թորայի ուսուցումներով պիտի պարսպէր իր հոգին աշխարհի բազմատեսակ անօրէնութիւններուն դէմ, հանդերձելով իր անձը արդարներուն բաժինը եղող երանաւէտ կեանքին:

Յովակիմի և Աննայի մեկնումէն ետք ծերունին մնաց անձնատուր իրար խաչաձեռք մտածումներու, տարտամ որքան տրտում: Իր կանխամտածումները հետըզհետէ գետին կը ճարէին, վերածուելու համար բարախուն իրականութեան: Յեղաշրջումը մեծ էր, քաղցր իր հոգին անհունօրէն դղրդելու չափ: Հեթանոս տիրակալներու խժոժութիւններէն աւելի, իր ժողովուրդէն ներս արմատ բռնած մեղքերը, յատուկ՝ ամբարիշտ ազգերուն, իրենց ծանրացները կը դնէին բարի իր սրտին: Ինչպէ՞ս պիտի արժեցնէր Խորայէլ ընտրեալ ժողովուրդի իր հանգամանքն ու առանձնաշնորհումը, եթէ չկրնար ըլլալ վեր ու տարբեր՝ զինք շրջապատող, հալածող ու նոյնիսկ երանող ժողովուրդներէն: Կը զգար թէ մօտ էր գալուստը Մեսիային ու ազատարարին, սակայն անպատրաստ Խորայէլը ինչպէ՞ս պիտի կարենար ընդունիլ զինք: Մարգարէներու դարը անցած է այլևս: Անոնց շունչովը քերմացած տարիներուն փոխարէն, մենք ունինք հիմա քայքայումի ու բարոյալքման առաջնորդող ցուրտ ու մութ սօրերը: Կոտրած է ողնասիւնը մեր հաւատքին: Բարեպաշտական զգացումի մը գոհացումին համար չէ որ կը մատուցուին երկարապատում ու խորիմաստ մեր աղօթքները: Լերկ են մեր հոգիները Յեղաշրջումի լեռներուն նման, ուր աճող փուշերուն ու տատակներուն առատութիւնը աչք կը ծակէ: Մեսիայէն առաջ, պիտի խնդրէի որ Եհովան անոր գալուստին գետին յարդարող ու մեղ զգօն ու զգաստ կենցաղի մը հրաւիրող մարգարէ մը առաքելու շնորհը ընէր:

Յովակիմ և Աննա տուն վերադարձան գլխիկոր, մունջ բայց թեթևասիրտ: Հողմալար երազներ, ամէն գոյներէ, կը հալածէին իրենց երեակայութիւնը: Շատ ուշ յաջողեցան սթափիլ, այն տանն՝ երբ իրենց քայլերը բնազդաբար կանգ առած էին զրան առջև անշուք ու ամայի իրենց յարկին՝ որուն խանդ ու ոգի պարգևող էակը յօժարակամ ընծայաբերած էին Աստուծոյ Տաճարին:

ԿՐՈՆԱԿԱՆ

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ՍԱՀՈՒԹՅԱՆ ԳՐԻՍՏՈՍԻ ԶԱՐԶԱՐԱՆԱՑ ՄԷՋՊ

Մասնաթեման գիշերը, Գեթսեմանիի պարտեզին մէջ, մեր Տէրը՝ Յիսուս կը պատուիրէ իր աշակերտներուն իրեն հետ արթուն կենալ և աղօթք ընել՝ որպէսզի փորձութեան մէջ չմտնեն:

Մաղկազարդի օրուան ամէն տեսակի փառաբանութիւններուն և օրհնութիւններուն՝ «Ովսաննա, որդւոյ Դաւթի», «Օրհնեալ է իսրայէլի թագաւորը, որ Տիրոջ անունով կու գայ», յաջորդած էր Գեթսեմանիի գիշերը, առանձնութիւնը, և... աղօթքը:

Նման պարագայ մը ևս ունեցած էր մեր Տէրը Բեթսալիդայի մօտերը, ուր հացերու հրաշքը կատարելէն ետքը, ներկայ ժողովուրդը ըսած էր թէ «Ասիկա է ճշմարտապէս այն Մարգարէն որ աշխարհ պիտի գար»: «Եւ Յիսուս գիտնալով որ պիտի գան զինք յափշտակեն, որպէսզի զինք թագաւոր ընեն, նորէն առանձին լեռը գնաց աղօթք ընելու» (Յովհ. 2. 14-15, Մրկ. 2. 46, Մաթ. 26. 23):

Այս անգամ, սակայն, այլևս ժամը հասած էր որ Յիսուս այս բոլոր չարչարանքները կրելէ ետք յաւիտեանական և ճշմարիտ թագաւորը ըլլար աշխարհի:

Գեթսեմանիի պարտեզին մէջ, մասնաւորաբար իր սիրելի երեք աշակերտներուն՝ Պետրոսի, Յակոբոսի և Յովհաննէսի կը պատուիրէ արթուն կենալ և աղօթք ընել:

Յիսուս յաճախ աղօթք կ'ընէր: Այսպէս՝ մկրտութեան ատեն (Ղկս. 9. 2), անապատ տեղեր, ուր կ'երթար առանձին՝

(*) Հանդիման կը հրատարակենք Հոգւ. Տ. Վաչէ Ծ. Վրդ-ի սոյն շահեկան յօդուածը, որ խօսուած է իրր քարոզ՝ Մարտիրոս Ս. Թադէոս եկեղեցիին մէջ, անցեալ Ապրիլի 3ին, տաւարման խորհրդաւոր գիշերին: Յօդուածը լոյս պիտի տեսնէ նաև առանձին գրքոյկով:

աղօթք ընելու (Մրկ. Ա. 35), Թաքս լեռը (Ղկս. Թ. 29), Տէրունական աղօթքը սորվեցուցած ատեն (Ղկս. Ա. 1), Պետրոսի համար (Ղկս. ԻԳ. 32), վերջին ընթրիքի յուզումնալից բազմենքուն (Յովհ. Ժէ. 1-26)(*) և խաչին վրայ (Ղկս. ԻԳ. 34) ու հոգին աւանդած պահուն (Ղկս. ԻԳ. 46):

Քրիստոս իր աշակերտներու խնդրանքին վրայ սորվեցուցած էր Տէրունական Աղօթքը (Ղկս. ԺԱ. 1-4):

Արդարեւ, Տէրունական Աղօթքը պիտի մնայ բոլոր աղօթքներուն մէջ ամենէն սեղմն ու համապարփակը որ երբեք զբոռած ըլլայ: Այն տ'յնքան պարզ է բոլորին և նոյն ատեն տ'յնքան խորիմաստ՝ որ կրնանք ըսել թէ դարերու հանճարներն անգամ չեն կրցած խորաշափել զայն:

Ահաւասիկ այս աղօթքն է զոր սորվեցուցած էր Յիսուս իր աշակերտներուն: Նոյն ատեն իր ժամն ալ հասած ըլլալով՝ անոր բովանդակութիւնը պիտի կատարէր բառացիօրէն, իր չարչարանքներուն և խաչելութեան ընթացքին:

Հայր մեր որ յերկինս ես

Յիսուս իր առաքելութեան երեք տարիներու շրջանին, իր քարոզներով և առականքով խօսած էր և սորվեցուցած՝ մեր երկնաւոր Հօր մասին, թէ Աստուած այնչափ սիրած էր աշխարհը — մարդ-

(*) Այս երկու Տէրունական աղօթքները՝ «Հայր Մեր» և Յովհաննու Աւետարանի մէջ յիշատակուած Քրիստոսի աղօթքը (Ժէ. 1-26) եթէ բաղդասելու ըլլանք՝ պիտի նշմարենք որ առաջինը գրեթէ կրկնուած է երկրորդին մէջ, սակայն շատ աւելի ընդլայնուած ձևով: Նոյն սգիով, նոյնատեսակ դաղափարներով, և մինչև անգամ նոյն բառերու գործածութեամբ: Կ'արժէ ուրիշ առթիւ ուսումնասիրութեան նիւթ դարձնել զայն:

կուսիւնը — որ նոյնիսկ իր Միածին Որդին տուած էր՝ զայն փրկելու համար մեղքէն ու չարիքէն (Յովհ. Գ. 16):

Աստուած անհուն սէր է (Ա. Յովհ. Գ. 8): Եւ ամէն հաւատացեալ այս հայրական սիրոյն կ'ապուինի, մանաւանդ նեղութեան և տաղնապնկոյ ընթացքին, ինչպէս մեր Տէրը յաճախ կ'աղօթէր և կը խօսէր իր Հօրը հետ: Իսկ Գեթսեմանիի մէջ ծուկի գալով զԱյն կը կոչէ Աբբա, Հայր (Մրկ. ԺԴ. 36): (Աբբա Արամեօքէն բառ մըն է, որ կը նշանակէ հայր: Ծիշգ ֆրանսերէն *papa* բառին համազօր է: Եւ մեզի ցոյց կու տայ թէ Յիսուս որքան կ'ապուած է իր Հօրը հետ): Արդէն Քրիստոս աշխարհ կ'ած էր ճիշդ տասը համար, ցոյց տալու և սորվեցնելու մարդոց այս ճշմարիտ և յաւիտենական սիրոյ մասին: Մեր երկնաւոր Հայրը կը սիրէ մեզ հարազատ հօր մը նման: Ան կը հոգայ մեր պէտքերը, նախ քան մեր խնդրելը իրմէ (Մատթ. 2. 33, Ղկս. ԺԲ. 31): «Անառակ Որդի»ի առակով ալ կը սորվեցնէ մեզի, թէ Ան չ'ուզեր որ մեղաւոր անհատը կորսուի այս աշխարհի մէջ, այլ կ'ուզէ որ անկեղծ զգլումով վերադառնայ իր հօրենական տունը (Ղկս. ԺԵ. 11-32, Մատթ. ԺԸ. 14): Մեր երկնաւոր Հայրը անյիշատար է, բազմազան և երկայնամիտ:

Յիսուս ապացուցանելու համար մեր երկնաւոր Հօր բարութիւնը, հարց կու տայ իր ունկնդիրներուն. «Դուք որ չար էք, և աղէկ ընծաներ տալ գիտէք ձեր զաւակներուն, որչափ աւելի ձեր Հայրը, որ երկինքն է, բարի բաներ պիտի տայ անոնց՝ որ իրմէ կը խնդրեն» (Մատթ. Է. 11, Ղկս. ԺԱ. 13):

Քրիստոնէութեան մէջ յատկանշական է Աստուծոյ Հայր կոչումը: Մինչև Քրիստոս, Հին Ուխտի մէջ, Աստուած տիեզերքի ստեղծիչն ու տէրն էր: Կար անշուշտ հոն ալ, որոշ չափով, ակնարկութիւնը Աստուծոյ հայրական զգացումին, զոր ունէր իսրայէլի ժողովուրդին հանդէպ, որովհետեւ այդ ցեղէն պիտի գար Քրիստոս՝ Աստուծոյ Որդին և աշխարհի Փրկիչը: Ասոր համար Աստուած շնորհք մը ըրած էր հրեայ ժողովուրդին: Քրիս-

տոս աշխարհ կ'ած էր, որպէսզի Աստուծոյ մօտեցնէ և երկնաւոր զաւակներ դարձնէ մարդերը, եթէ անոնք հաւատան, անշուշտ, իր՝ Աստուծոյ Որդին ըլլալուն և Ասոր քաւարար խաչելութեան և մանաւանդ հրաշափառ սուրբ յարութեան յաւիտենական վարդապետութեան:

Հասած էր ժամը որ մեր Տէրը հաշտեցնէր մեզ Հօր Աստուծոյ հետ, ինչպէս կը կարգանք. «... մէջտեղի բաժնող պատը, այսինքն թշնամութիւնը, իր մարմնովը քակեց» (Եփես. Բ. 14, Կողոս. Ա. 21, Բ. Կորնթ. Ե. 18-19):

Աղամական մեղքով Աստուծոյ և մարդոց միջև գոյացած թշնամութեան պատը քանդուած էր: Քրիստոս իր խաչելութեամբ ջախջախած էր Սատանայի գլուխը, հաշտութիւն հռչակելով աշխարհի բոլոր մարդոց համար հաւատարմապէս:

Սուրբ եղիցի աճուն Բո

Մեր երկնաւոր Հայրը սուրբ է: Աստուածաշունչը մեզի կը սորվեցնէ թէ Քրիստոս յաճախ խօսած է Աստուծոյ սերբութեան մասին: Եւ քանի որ այդ երկնաւոր սուրբ Հօր զաւակները եղած էինք Քրիստոսով, մենք ալ պէտք է որ սուրբ ըլլայինք, որովհետեւ «հարազատ զաւակը իր հօրը նմանութիւնը կը բերէ». կատարեալ ըլլայինք. որովհետեւ մեր երկնաւոր Հայրը կատարեալ է, կատարեալ ըլլայինք՝ մեր կեանքով և գործերով, որպէսզի այդ կերպով փառաւորէինք զԱստուած և նոյն ատեն ուրիշներ մեր բարի գործերը տեսնելով՝ փառաւորէին մեր երկնաւոր Հայրը (Մատթ. Ե. 16):

Քրիստոսի միջոցաւ ճանչնալէ ետքը Աստուծոյ սերբութիւնը, մեզի կը մնայ զԱյն փառաբանել երկինքի սերովքէն երեւոյթանք ըսելով. «Սուրբ, սուրբ, սուրբ է զօրաց Տէրը. բոլոր երկիր Ասոր փառքով լեցուն է» (Եսայի, 2. 3): Քրիստոս իր առաքելութեան շրջանին փառաւորած էր իր երկնաւոր Հայրը. «Ես Գեղ երկրի իր երկնաւորացի. այն գործը, զոր ինծի վրայ փառաւորեցի. այն գործը, զոր ինծի տուր ընելու՝ կատարեցի» (Յովհ. ԺԷ. 4): Վերջին ընթրիքի ընթացքին, Քրիստոս կ'աղաչէր իր Սուրբ Հօրմէն, որ

սրբէր և պահէր իր աշակերտները (Յովհ. Ժէ. 11): «Սրբէ զանոնք Քու ճշմարտութեամբ, Քու խօսքդ ճշմարտութիւն է» (Յովհ. Ժէ. 17):

Հասած էր ժամը, ուր Քրիստոս իր խաչովը սրբէր մեզ՝ բոլոր իրեն հաւատացողները. «Եւ անոնց համար ես իմ անձս կը սրբեմ, որպէսզի իրենք ալ ճշմարտութեամբ սրբացած ըլլան» (Յովհ. Ժէ. 19): Քրիստոս մեզ նորէն կը ծնէր իր խաչելութեամբն ու Յարութեամբը (Յովհ. Ա. 13, Ա. Պետ. Ա. 3):

Եկեացէ աբխազութիւն քո(*)

Աստուծոյ այս թագաւորութեան ամէն հաւատացեալ ինքզինք անգամ պէտք է նկատէ, ինչպէս մեր Տէրն ալ իր առաքելութեան սկիզբը յայտարարած էր, թէ «Երկնքի թագաւորութիւնը մօտեցած է» (Մատթ. Դ. 17, Մրկ. Ա. 15): Նոյնպէս պատուիրած էր իր առաքելներուն, որ իրենց քարոզութեան մէջ յայտարարեն այդ թագաւորութեան մերձեցումը (Մատթ. Ժ. 7, Ղկոս. Ժ. 9):

Ի՞նչ է Աստուծոյ թագաւորութիւնը, պիտի հարցուի անշուշտ:

Աղամական մեղքով՝ մարդկութիւնը կորսնցուցած էր Աստուծոյ այս թագաւորութիւնը, և դարեր շարունակ ցանկացած էր անոր վերահաստատումը: Տէրը իսրայէլի ժողովուրդը եզրիպտոսէն՝ զնորութեան երկրէն ազատագրելէ ետք, Մովսէսի ձեռքով այս թագաւորութեան նախատիպարը հաստատած էր անոնց մէջ, որուն թագաւորը ինք էր, և իր ներկայացուցիչները երկրի վրայ կ'ըլլային իրմէ ընտրուած մարդիկ: Մովսէսով սկիզբ առած այդ ընտրեալները շարունակուեցան Յեսուով և Դաւաւորներով, տեւելով մինչև Սամուէլ մարգարէն: Սակայն, Սամուէլի որդիներուն դատաւորութեան շրջանին, Հրեայ ժողովուրդն ալ ուրիշ ազգերու նման ուղեց թագաւոր մը ունենալ, որով վերջ գտնէր կրօնական դրու-

թեամբ հաստատուած վարչաձևը: Ասով նոյն ատեն Աստուծոյ թագաւորութիւնն էր որ կը մերժուէր (Ա. Թագ. Ը. 7): «Տէրը ըսաւ Սամուէլի. 'Անոնք քեզ չեն մերժեր, այլ զիս կը մերժեն, որպէսզի անոնց վրայ չթագաւորեմ'»:

Այս կրօնական թագաւորութեան շնորհիւ էր որ Աստուծոյ ընտրեալ Մովսէս մարգարէն հրաշքներով ազատագրած էր Հրեայ ժողովուրդը եզրիպտական գերութենէն: Քառասուն տարիներ անապատին մէջ կերակրած էր զայն մանանայով և լորամարգիներով: Հրաշքով ժայռէն ջուր բխեցուցած էր, որպէսզի խմեն և նոյն ատեն ալ Աստուծոյ վրայ հաւատք ունենան: Մէկ խօսքով, իսրայէլի ժողովուրդը Աստուծոյ թագաւորութեան սուրբ աղօղն էր (Ելք. Ժ. 6), և իբրեւ այդ թագաւորութեան ժողովուրդը՝ դրակց Աւետեաց երկիրը, ուր և հաստատուեցաւ: Սակայն եթէ աշխարհիկ թագաւոր մը ունենար, շատ ծանր պարտաւորութեանց տակ պիտի իյնար, թագաւորը ժողովուրդին հոգերը պիտի գրաւէր, ծանր տուրքեր պիտի դնէր, ժողովուրդին կտրիճ երիտասարդները իր բանակին պիտի զինուորագրէր և իր հպատակներուն գանձերը իր պալատը պիտի հաւաքէր, ու վերջապէս բոլոր ժողովուրդը թագաւորին ծառայ պիտի ըլլար:

Այս բոլորը Աստուծոյ մարդը, Սամուէլ մարգարէն, բացատրելով՝ զգուշացուցած էր զանոնք: Բայց ապարդիւն եղած էին իր յորդորները: Ժողովուրդը մարգարէին մօտիկ ընել չուզելով՝ ըսաւ. «Ոչ, անպատճառ մեր վրայ թագաւոր մը ըլլայ» (Ա. Թագ. Ը. 19):

Այսպէս, աշխարհիկ իմաստով թագաւորութիւնը հաստատուեցաւ յանձին Սաւուղի, և ապա փոխանցուեցաւ Դաւիթ թագաւորին, որուն հարստութեան իշխանութիւնը (dynastie) տեւեց մինչև Բաբելոնի գերութիւնը (586 Ն. Ք.): Անկէ յետոյ միշտ երազուեցաւ նոր թագաւոր մը, որ Աստուծոյ կոզմէ պիտի զրկուէր. այդ իտէալ թագաւորը կամ Մեսիան՝ որ նիւթ պիտի հայթայթէր մարգարէներուն ու Սաղմոսերգուի ներշնչումներուն և նախատեսութեան (Եսայի, Երեմիա, Եզեկիէլ,

(*) Տե՛ս նաև մեր «Քրիստոս» մեր Ս. Պատարագը, հրատարակութիւնը (էջ 72-77):

Դանիել, Ովսե, Միքիա, Ջաքարիա, Մա-
ղաքիա և այլն)։

Վերջապէս այդ խոստացեալ թագա-
ւորութիւնը իրականացաւ յանձին Գի-
սուսի Քրիստոսի։

Ուրեմն Քրիստոս հաստատած էր այդ
հոգեւոր թագաւորութիւնը, «եւրկնքի ար-
քայաւթիւն» անուան տակ, որ աշխարհիկ
իշխանութեանց ճիշդ հակապակերն էր,
ինչպէս յաճախ Քրիստոս յիշեցուցած էր
իր հետեւորդներուն՝ ըսելով. «Ազգաց
թագաւորները, որոնք կը տիրեն ժողո-
վաւորդներուն՝ բարերար կը կոչուին։ Բայց
դուք այնպէս պիտի չըլլաք, բայց ան որ
ձեր մէջ մեծ է, պիտի լինի պէս թող ըլ-
լայ, և առաջնորդը՝ սպասաւորի պէս»
(Ղկա. ԻԲ. 25-26)։ Ուրիշ առթիւ ըսած
էր. «Եթէ մէկը կ'ուզէ առաջին ըլլալ,
ամէնուն յետինը պիտի ըլլայ և ամէնուն
սպասաւորը» (Մրկ. Թ. 34, Մտթ. Ի. 26)։

Եւ այս թագաւորութեան ժառան-
գորդները, այս աշխարհի մէջ, չորսու-
րանքի, դառնութեան բաժակէն պէտք է
լսմէին, որպէսզի արժանի ըլլային անոր.
«կրնա՞ք լսել այն բաժակը՝ զոր ես կը
լսեմ» (Մրկ. Ժ. 38)։ Այսպէս պատաս-
խանած էր մեր Տէրը Ջերեմիայի հղաւթ-
ներուն, երբ անոնք փափաքած էին այդ
թագաւորութեան աջ և ձախ կողմերը
նստիլ։

Եւ այս թագաւորութեան սրդիները
հալածանք պիտի կրեն այս աշխարհի մէջ
(Մտթ. ԺԶ. 24, Յովհ. ԺԶ. 2-3, Բ. Տիմ.
Գ. 12 և այլն)։

Վերջապէս, երեք տարիներ այս թա-
գաւորութեան մասին խօսելէ և քարոզելէ
ետք, Քրիստոս հաստատեց զայն Վերջին
Ընթրիքին մէջ, իր պատարագութենէն ա-
ռաջ, ըսելով. «Ես ալ ձեզի թագաւորու-
թիւն մը ուխտ կ'ընեմ, ինչպէս իմ Հայրս
ինձի թագաւորութիւն մը ուխտ ըրաւ.
որպէսզի դուք իմ սեղանէս ուտէք ու
խմէք իմ թագաւորութեանս մէջ, և ու-
թոռներու վրայ նստիք՝ իսրայէլի տա-
ներկու ցեղերը գտնելու (Ղկա. ԻԲ. 29-30)։

Դաւիթ թագաւոր օժտւած էր ողջա-
կէզի զոհի սեղանին առջև, ձեռամբ Սա-
մուէլ մարգարէին (Ա. Թագ. ԺԶ. 1-13)։

ԹԱՐԳՄԱՆԶԱՑ

Յորժամ հեծծես, յայնժամ կեցցես

Աստուածաշնչական այս պատգամը
մէկն է այն ճշմարտութիւններէն որ ի-
րապէս ու լաւապէս կը պատշաճի Ս. Մես-
րոպ Մաշտոցի անձին ու կատարած աշ-
խատանքին։

Հայ ժողովուրդի պատմութեան մէջ
Դ. և Ե. դարերը առանձին գաղաթիւներ կը
ներկայանան մեզի։ Այս ժամանակամիջոցը
որքան յղի է արհաւիրքներով, այնքան
և աւելի լեցուն՝ պատմական ու ճակատա-
գրական փոփոխութիւններով։

301 թուին, շնորհիւ Ս. Գրիգոր Լու-
սաւորչի աքնաջան աշխատանքին, կա-
րելի եղաւ Քրիստոնէութիւնը հասցնել
մինչև հայկական արքունիք։ Ու պալա-
տական աւագանին, Տրդատ թագաւորի
գլխաւորութեամբ, մկրտուեցաւ Քրիս-
տոնեայ ու քրիստոնէութիւնը դարձաւ
Հայաստանի պետական կրօնը ու Հայաս-
տան դարձաւ առաջին քրիստոնեայ պե-
տութիւնը։

Այդ թուականէն ետք սկսաւ հե ի հե
վազքը քրիստոնէութիւնը տարածելու
Հայաստանի մէջ։ Հայաստանի որոշ շըր-
ջաններ, գլխաւորաբար Գողթան գաւառի
մէջ, քրիստոնէութիւնը ինքզինք դառաւ
դժուարութեան առջև։ Սակայն, ընդհա-
նուր առմամբ, քրիստոնէութիւնը եկաւ
լուսաւորելու Հայաստանը։

Դ. դարու սկիզբը քաղաքական վերի-
վայրումներու և արհաւիրքներու շրջանն
էր Հայաստանի համար։ Արքունիքը որ-
քան հաւատքի՝ այնքան ալ քաղաքական

Իսկ Քրիստոս իր ուխտած թագաւորու-
թիւնը հաստատելու համար իր Անձը իբրև
թագաւոր փրկագին պիտի տար այս աշ-
խարհի իշխանին՝ որ մեղքով գրաւած էր
մարդկութիւնը (Յովհ. ԺԴ. 30)։

ՎԱԶԷ Ծ. ՎՐԴ. ԻԳՆԱՏԻՈՍԵԱՆ
(Մնացեալը յաջորդիւ)

գրգռապատճառներով ընդունեց քրիստոնէութիւնը: Եւ այդպէսով, Հայաստան ինքզինք զատորոշեց հարեան երկիրնէրէն: Նոր կրօնքը արգելք հանդիսացաւ անոնց քաղաքական ու կրօնական ազդեցութեան: Քրիստոնէութիւնը զէնք ու զբաժնեղաւ որ Հայաստանը պաշտպանեց արտաքին ազդեցութենէ, որքան կրօնական՝ նոյնքան քաղաքական յետին նպատակներ հետապնդող հականերէ:

Սակայն այս վիճակը երկար չտևեց: Բիւզանդիոնի քրիստոնէացումը և Պարսկաստանի հեթանոսութիւնը երկու սուրբերու մէջ պահեցին մեր երկիրը:

Յիշեալ ներհակ գաղափարաբանութիւններու անխուսափելի բաղխումին ի հետեանք, 387 թուին, Հայաստան աշխարհաբաժանօրէն բաժնուեցաւ Բիւզանդական և Պարսկական հզօր պետութիւններու միջև:

Պարսկական մասի թագաւորը՝ Վաամշապուհ, իր հեռատես և իմաստուն զեկավարութեամբ, կրցաւ հասկացողութեան գալ Պարսիկ արքունիքի հետ ու Հայաստան ապրեցաւ համեմատաբար խաղաղ պայմաններու մէջ: Ան զգաց թէ կը մօտենայ Հայ Գահի վախճանը, ուստի մտածեց հայ ժողովուրդին տալ ապրելու, գոյատևելու այնպիսի միջոց մը՝ որը կապ չունենար գահերու փոխադրման հետ:

Հայոց կոսրով թագաւորի օրով արքունիք ծառայութեան մտած Մեսրոպ-Մաշտոց անունով լուսամիտ անձնաւորութիւնը, որ քաջածանօթ էր Պարսկերէնի, Ասորերէնի և տեղեակ Յունարէնի, պալատի դիւանատան իր աշխատանքին մէջ զգաց ու տեսաւ հայ ժողովուրդի գլխուն վրայ ճօճուող Դամակիւսի սուրբը: Լքեց գինուսրական-պալատական պաշտօնը ու անցաւ վանական կեանքի:

Սահակ, օրուայ շրջահայեաց կաթողիկոսը, յունական կրթութիւն ստացած և յունասէր անձնաւորութիւն, մնաց պարսկական բաժնի մէջ ու ստիպուած՝ որոշ զիջումներով համակերպեցաւ քաղաքական փոփոխութեան ու զարկ տուաւ վանական-անապատական կեանքին, անոր մէջ գտնելով իր հոգեկան հանգիստը:

Մեսրոպ, որպէս վանական, դարձաւ Սահակ կաթողիկոսի աջ բաղաւկն ու անբաժանելի գործակիցը: Ան, վերջինիս ցուցմունքներով, քառողեց Գողթան դաւառի մէջ, ինք ալ իր կարգին հանդիպելով արգելքներու և դժուարութիւններու: Գողթան դաւառը տակաւին պահած էր հեթանոսական կրօնի մնացորդներ և ունէր անգիր կամ բերանացի գրականութիւն: Այս երևոյթները մտածել տուին ու զգացողին անհրաժեշտութիւնը գիրով գրականութիւն ստեղծելու: Մեսրոպ վերադարձաւ Սահակ կաթողիկոսի մօտ, պարզեց իր միայն ու միակ մտասեւեռներ՝ նախ գիր ստեղծելու, ապա գիտակցական քրիստոնէութիւն տարածելու: Կաթողիկոսը գրկարաց ընդունեց Մեսրոպ-Մաշտոցն ու անոր ծրագիրը, որուն իրագործման համար անհրաժեշտ էր նիւթական ու բարոյական աջակցութիւն: Իսկ Վաամշապուհ թագաւոր, որ արդէն կը մտածէր հայուն տալ ապրելու ու գոյատևելու տուր կռուան մը, միացաւ Սահակ-Մեսրոպի ու կազմեցին երրորդութիւնը ապագայ ծրագրի: Ան իր իշխանութիւնն ու բարի կամեցողութիւնը դրաւ Սահակ կաթողիկոսի և Մեսրոպ-Մաշտոցի տրամադրութեան ներքե, և նիւթական օժանդակութիւնը՝ գիրքերու գիւտը յաջողեցնելու համար:

Վաամշապուհ մտաւորական ու գաղափարական թագաւորի ցուցմունքներով, Միջագետքէն՝ Դանիէլ Ասորի եպոս. ի քովէն բերուեցան այսպէս կոչուած Հայերէն գիրքերը: Սկսան գոտաւանդութիւններն ու երկու տարիներու յամառ աշխատանքէ հետք երեան եկաւ թէ բերուած գիրքերը անկատար ու պակասաւոր են: Այս տեսնելով, Մեսրոպ խումբ մը աշակերտներով խաւար ու դժբախտ Հայաստանէն ճամբայ ելաւ լոյս ու գիտութիւն որոնելու: Եղեսիա և Ամիդ քաղաքները չբաւարարեցին իր հետաքրքրութիւնը, աշակերտներէն խումբ մը թողեց Եղեսիա ու մնացեալներով իր ճամբան շարունակեց դէպի Սամոսատ, յունական կրթութեան օճախը:

404 թուին, Մեսրոպ-Մաշտոցի կեդրոնացումով, ապրումով ու խոր հաւատ-

քով է որ տեղի սենեցաւ հրաշալի գիւտը
Հայկական Այրուբէնին:

Հայաստանի արքունիքն ու եկեղեցա-
կան դասը, ինչպէս նաեւ համայն ժողո-
վուրդը, գիրերու գիւտը ընդունեցին մեծ
խանդավառութեամբ ու բոլորը մէկ ընդ
առաջ եկան դիմաւորելու մեր նոր օրե-
րու Մովսէսն ու իր աշակերտները, անով
պաշտօնապէս ընդունելու և վաւերացնե-
լու գիրերու գիւտը, սրուն կարեւորու-
թեան և անհրաժեշտութեան ամբողջապէս
գիտակցեցաւ Հայաշխարհը, թէ Մեսրոպ-
Մաշտոցի բերածը միմիայն գիր չէ, այլ
զէնք ու զրահ. որ պիտի ապահովէր հա-
յուն գոյութիւնը մինչև այսօր: Երկնա-
ռաք բարիք մը՝ զոր ամբողջ Հայաստանն
ու հայը վայելեց ու կը վայելէ տակաւին:

Գիրերու գիւտը մարդկային մտքի
ամենահրաշալի նուաճումներէն մին է,
որ զարկ տուաւ հայ քաղաքակրթութեան
յառաջգիմութեան:

Մեսրոպ Հայաստան վերադարձաւ որ-
պէս նոր օրերու Մովսէս: Ան արժանա-
ցաւ աստուածային բարերար այցին: Փո-
խան տառնաւորեալ պատուիրանին՝ իր
հետ 36 տառեր բերած՝ յաղթական մուտք
գործեց Հայաստան:

Մովսէս Սինա լեռնէն վար իջաւ
Տառնաւորանեան ձեռքը, դիմաւորուելու
հրեայ ժողովուրդի թերահաւատութեամբ,
ուրացումով ու յանցագործութեամբ: Ս.
Մաշտոցի աստուածային այցն ու անոր
փայլքը մնաց ու կը մնայ մեր ժողովուրդի
հոգիին ու մտքին մէջ մինչև օրս:

Շատ քիչեր իրենց կենդանութեան
համարուած են որպէս սուրբեր: Անկաս-
կած Մաշտոց մէկն է անոնցմէ: Որովհետեւ
իր մտասեւեռումը եղաւ հայերէն տառեր
ստեղծել, այդ միջոցով քրիստոնէական
կրօնը Հայաստանի մէջ ամրացնելու և
հայացնելու համար: Այդ օրէն ասդին է
որ հայը ունեցաւ ճշմարիտ ու լրիւ հաս-
կացողութիւնը իր որդեգրած նոր կրօնին:

Անկէ ետք, Սահակ-Մեսրոպ զոյգը
անբաժան մնաց իր գործունէութեամբ:
Հայերէնը փոխաբիւնց Յունարէնը, Ասո-
րերէնն ու Պարսկերէնը: Բացուցան

դպրոցներ, ուր սկիզբ առաւ Հայերէնի
ուսուցումը: Զգալի եղաւ կարիքը պատ-
րաստուած ուսուցիչներու՝ նոր ու հա-
րազատ իր հանդերձանքը զգեցած լեզուին
ուսուցման համար: Աշակերտներ զրկուե-
ցան Աթէնք և Ասորիք: Եգեհիա, Աթէնք
և Աղեքսանդրիա հանդիսացան աշակերտ-
ներու գիտական, կրօնական ու փիլիսո-
փայական դաստիարակութեան գլխաւոր
կեդրոնները, ուր կազմակերպուելով ու
կազմաւորուելով որպէս միտք, բազմա-
կողմանի պատրաստութեամբ ու պաշարով
բնականորեւթ վերադարձան Հայաստան:
Շնորհիւ անոնց, Սահակ-Մեսրոպեան նը-
ւիրական ու սուրբ գործը նոր թափ ստա-
ցաւ ու ստեղծուեցաւ բարձր մակարդակի
գրականութիւն մը: Նախ այժ տրուեցաւ
թարգմանական աշխատանքին, որուն կո-
թողական արդիւնքը եղաւ Աստուածա-
շունչի թարգմանութիւնը Ասորական Բի-
շիթՕ օրինակէն ու անոր սրբագրութիւնը
Յունական ԵԾԹԱՆԱՍՆԻՅ ամբողջական
ու կատարեալ օրինակէն, որը արդարօ-
րէն արժանացաւ «Թագունի թարգմանու-
թեանց» կոչումին: Թարգմանական աշ-
խատանքի ղեկավարութիւնը ստանձնեց
Սահակ Կաթողիկոս, մինչ Մեսրոպ-Մաշ-
տոց Հայաստանի զանազան մասերը շըր-
ջադայելով լուսաւորեց հայ ժողովուրդը:
Ան պէտք չունեցաւ բանակի ու պետական
հրահանգի կամ ստիպողութեան, այլ գիր
ու գիրքով, դպրոց ու դպրութեամբ լու-
սաւորեց նաեւ ամբողջ Գողթն գաւառը:

Թարգմանական շրջանին յաջորդեց
ինքնուրոյն ստեղծագործութեան ու յատ-
կապէս գաղափարական գրականութեան
ժամանակաշրջանը, որուն աիտանները
հանդիսացան Եղիշէ Պատմիչ իր «Վարդա-
նանց»ով ու Եզնիկ Կողբացի իր «Եղծ Ա-
ղանդոց»ով: Ե. դարը իրաւամբ կոչուե-
ցաւ Ոսկեդար ու մնաց այդպէս, եզակի
գաղաթ մը իր ստեղծած գիրով՝ որ դի-
մացաւ դարերու հոլովոյթին ու վերի-
վայրումներուն:

Մեսրոպ-Մաշտոց ու Թարգմանչաց
խումբը գիրն ու գրականութիւնը Հայաս-
տանի Պարսկական բաժնին մէջ տարա-

ծելէն ետքը անցան Յռնական կողմը: Սկիզբը հանդիպեցան պետական - քաղաքական արգելքներու և դժուարութիւններու, Յոյներու համալի կեցուածքին պատճառով: Սակայն Ս. Մաշտոցի գլխաւորութեամբ պատուիրակութիւն մը համոզիչ փաստարկութիւններով յաջողեցաւ արտօնութիւն ձեռք ձգել Թէոդոս կայսրէն ու լուսաւարութեան աշխատանքը հոն ալ տարածել: Այդպիսով զօրաւոր կապ մը ստեղծուեցաւ հայութեան զոյգ, տարանջատ հատուածներուն միջև:

Հայ եկեղեցիին լման դար մը (Դ. դար) եռանդագին ու աշխուժօրէն պայքարելով, քաղաքական փոթորիկներու կռիւի տուաւ ու յաղթական դուրս եկաւ: Իսկ ե. դարու մուտքին, Ս. Մեսրոպի տառերով, ան ստացաւ նոր ոյժ ու եռանդ: Հայ գիրը եկաւ իր անհուն նպաստը բերելու մեր ժողովուրդի պահպանման ու գոյատեւման, ճիշդ ինչպէս ըրած էր հայ ռազմիկը հերոսական իր մահով:

Ճակատագրի բերումով, հայ ժողովուրդը միշտ շրջապատուած մնաց մեծ ազդերով, որոնց պետական կազմակերպութիւնը հիմնուած էր կրօնի վրայ: Պարսիկը, Յոյնը, Մոնկոլը, Թաթարը, Սելճուքը, Արաբն ու Թուրքը հայուն մէջ նախ և առջ տեսան տարբեր կրօն մը, որը մեզ զատորոշեց միշտ: Կրօնական դրութիւնը հպատակութեան հարցէն դուրս հանգամանք մըն է: Քաղաքականօրէն հպատակ ըլլալ ոչինչ կը նշանակէ ու այդպէս եղած է հայուն համար: Այս պատճառով ալ եկեղեցին ազգային առանձին նշանակութիւն ու կարեւորութիւն ստացաւ մեզի համար: Միւս կողմէ, արտաքին ազդակներ մեզ աւելի սերտօրէն կապեցին մեր եկեղեցիին, կրօնին ու հաւատքին: Պայքարի առաջին զծի վրայ մնաց եկեղեցին, որ եղաւ մեծագոյն պատուարը արտաքին ազդեցութիւններու դէմ ու հայ ժողովուրդի գոյութիւնը պահելու ու պահպանելու մեծագոյն ու բարերար ազդակը: Սակայն այս ընելու համար պէտք եղաւ անցնիլ «կարմիր մկրտութեանէն»: Ու հայը իր բովանդակ էութեամբը

փարեցաւ ազգային նկարագրով հարուստ այդ կռուանին: Ու ահա գիրերու գիւտը կու գար նոր ու զօրաւոր կռուան մը հայթայթելու Հայց. եկեղեցիին:

Գիրերու գիւտը սովորական դէպք մը, հասարակ եղելութիւն մը չէ միայն, այլ ընդհանուր միտք մը, խորհուրդ մը՝ ազնեցւոցի իր մեծութեամբ:

Հայ ժողովուրդի երկար ու արտուժ պատմութիւնը զերծ չէ եղած մեծ ու փոքր յաղթանակներու ոսկեայ շարանէ մը: Սակայն Մեսրոպ - Մաշտոցի նորագիւտ տառերով Հայաստան վերադարձը յաղթանակներու յաղթանակն է: Այդ երեւոյթը մեր պատմութեան մէջ առաջին ու մեծագոյն դէպքն է զոր կարելի ըլլայ իրրեւելաբար ճանաչել յաղթանակ մը բնորոշել:

Ձէնքերէ ու բանականիէ աւելի՝ հոգին ու միտքը լուսաւորող գործօններն են որ կը կերպագրեն տուեալ ժողովուրդի մը ճակատագիրը: Առանց հաւատքի լոյսին ուժեղ ու կենսունակ, ինքնուրոյն ազգ չի կրնար ըլլալ: Մեծն Տիգրանի յաղթանակներէն մեզի ոչինչ մնաց իբր ժառանգ, մինչդեռ մօտ 16 դարերէ ի վեր կը վայելինք անվթար ու անկողոպտելի զանձը՝ Մեսրոպ - Մաշտոցի անզուգական յաղթանակովը շահուած:

Մեծ են այն դէմքերը որոնք չեն աղօթիր ժամանակի մշուշներէն, որոնց դորձը կ'արհամարհէ բռնութիւնը դարերուն: Սահակ և Մեսրոպ, իրրեւ մտքի հսկաներ, անշուշտ թէ մաս կը կազմեն երախտաւորներու այդ փառանքին:

Ս. Մեսրոպ մեր մէջ արժանացած է բացառիկ յարգանքի:

Տրտմութիւն է հաստատել թէ Մաշտոցի թոռնորդներէն շատեր հայ գաղթաշխարհի տարածքին մեր ճոխ ու քողքը լեզուով չէ որ կը յարարեր իրար հետ: Որովհետեւ լեզուէն ուժացումը մեր առջև կը բանայ մին՝ դէպի ապագայնացում առաջնորդող դռներէն:

Օշականի անմահ սուրբը հանգիստ կը ննջէ, երբ իր լեզուն մաքուր, անաղարտ ու կենդանի պահենք:

ԱՂԱՆ Ծ. ՎՐԴ. ՊԱՆԻՕԶԵԱՆ

Սիսնի, Աւստրալիա

Ք Ա Ռ Ե Ա Կ Ն Ե Ր

1.

Հայաստանի հողին համար վրնարեցին Եւս սուղ գին,
Տըւին արցունք, Տըւին արիւն՝ անգին հոյզը մեր կեանքին.
Անոր դիմաց կը ըռի չեն գար ոչ արծաթը, ոչ ոսկին.
Մեր գոյութեան խարխիւն է ան, պատճառները մեր փառքին:

2.

Շինել կ'ուզես բոյն մը քեզի, մի՛ փանդեր բոյնն ուրիշին,
Կերել կ'ուզես տուն մը քեզի, մի՛ արեւ տունն ուրիշին.
Տուներ շինուած անէծքի տակ՝ կը կործանին չարաչար,
Օրհնութիւնով դըրուած հիմեր՝ կը դիմանան դարեդար:

3.

Համբերութեամբ դառն ագոյսը կ'ըլլայ խաղող ֆաղցրահամ,
Տերեւները բուրբի ծառին՝ կը վերածուին մեհափի.
Ժամանակն է հակադէպը ամէն տեսակ վրնասի,
Այն կը բուծէ ամէնավատ, դառնակսկիծ վերքն անգամ:

4.

Որքան խոր է վերքը սրտիդ՝ նոյնքան կ'ըլլայ երգդ յուզիչ,
Որչափ մեծ է վիշտն հոգիիդ՝ նոյնչափ տաղդ ալ տրամալուծ.
Մի՛ անիծեր սիրքդ խոցող անգութ լեզուն կամ գրքիչ,
Երգի փոխէ վերքդ թափուն՝ ոխ հանելէն տալով խոյս:

5.

Ապահով չէ՛ շէնքը շինուած հողին վրայ օտարի,
Օտարները կ'ընդունին քեզ, այո, փանի մը տարի.
Օր մը կու գայ ժամը ճիշտը, կը գցաս ցաւը զոյնով,
Թէ՛ շինուածը, թէ՛ շինողը, երբ կեր կ'ըլլան օտարի:

6.

Փորձուածը կրկին փորձել յիմարութիւն է, կ'ըսեն,
Յիմարութիւն է, լաւ գիտեն, բայց չեն դադարի փորձել.
Մարդն այսպէս է, կ'ուզէ ճանիլ, կ'ուզէ ըլլալ միշտ յաղթող,
Իմաստութեամբ չեղաւ կ'ըսէ, յիմարութեամբ ըլլայ բող:

Ծ Ո Վ Ա Կ Ա Ն

Լ Ք Ո Ւ Մ

Թուլցուցած եմ կապերն նորէն
Ինձ ագուցող ընկերներուս,
Ըլլալու մօտն իմ Աստրծոյս:

Ու փակուած եմ մէջն իմ խաւար
Մտի, սրտի մենարանին,
Լուռ ունկնդիր
Չայներու նոր, ձայներու հին,
Անհագանգող քափով մ'անդու՜
Պատերէն իմ ներաշխարհին:

Ու կը պեղեմ խորը հոգւոյս
Որ ա՛լ զսնեմ ակը անյայտ
Երբեմն զիս լիացուցած,
Խանդ ու հաւատք, սէր պարգեւած
Հրաշագլան հին գինիին:

Սակայն եղո՛ւկ,
Երբ ես ինծի
Տուած հովեր մենակեացի
Կ'ընեմ հիգերն իմ անպտուղ .
Եղո՛ւկ վասնած օրերուս սուղ:
Քանզի համբան երջանկութեան,
Ուղին՝ տանող զիս Աստրծոյս
Կ'անցնի սրէն ընկերներուս:

Ա Մ Լ Ո Ւ Թ Ի Ի Ն

Միտքս, խոսքս արտ մ'ինչպէս,
Ա՛լ կորուսած կը թըլի
Արտադրելու հուրքը վէս,
Ու ինքն իր դէմ կը կռուի:

Գո՞հ է արդեօք անցեալի
Բերէն իր նիղն ու ճխեղծ,
Ձէ՞ որ կօչումը կը զգար
Ըլլալու մեծ բանաստեղծ:

Ձէի կրնար հաւ՛սալ թէ
Դրի, զրբի սիրահար
Միտքն իմ ուրիշ աղբիւրէ
Պիտի հանոյք ըստանար:

Պիտի գա՞յ օրն արդեօք, ուր
Իր խոհերէն թափափուր,
Զերթ վաղաճէջ հրաքուխ,
Կրկին դուրս տայ հուր ու մուխ:

Գ. ՀԱՐՏԱՐ

ՍՏԵՓԱՆՈՍ ՍԱԼՄԱՍՏԵՑՈՒ ԱՌԱՔԵԼՈՒԹԵԱՆ ԲՆՈՅԹԸ

Յայտնի է, որ Ստեփանոս Սալմաստեցին Արեւելեան Հայաստանի մելիքների յանձնարարական նամակներով, որոնք ուղղուած էին Հռոմի պապին եւ Արեւմուտքի մի քանի քրիստոնեայ պետութիւններին, անցնում է Եւրոպա՝ Հայաստանի ազատագրման համար օժանդակութիւն ապահովելու յայտով։ Այդ կարծիքին է նաեւ Պետրովիչը¹։ Մեր տարակարծութիւնը նրա հետ՝ ըստ երեւոյթին կայանում է իր նպատակների իրագործման համար Սալմաստեցու ձեռք առած միջոցների դնահատման մէջ։

Սալմաստեցին գիւանադիտական բանակցութիւնների մէջ էր մտնում Հռոմի եւ Եւրոպական կաթոլիկ իշխանութիւնների հետ եւ հասկանալի է, որ, եթէ նրանցից օգնութիւն էր խնդրում, ինքն էլ պիտի արամադրութիւն ցոյց տար ինչ որ բանով ու Հափով փոխադարձութիւն անելու կամ խոստանալու, եւ դա՝ մի եկեղեցու գերագոյն պետի համար չէր կարող լինել այլ բան, քան զիջումներ անել կամ խոստանալ՝ կրօնական հարցերի բնազատաւում։

Եւ, ահա, մենք տեսնում ենք, որ գիւանադիտական այդպիսի հաշիւներով է, որ Սալմաստեցին 1548/1549 թուականներին յանկարծ յայտնուում է Հռոմում՝ ցնցող ապուրրութիւն գործելով այդ միջավայրում։

Յայտնի մտաւորական Պ. Պ. Գ. Արեւիկոսը գրում է, որ հայոց կաթողիկոս Ստեփանոսը «Հռոմ եկաւ 1548 թուականին եւ հպատակութիւն յայտնեց Պօղոս Գ պապին ու իր դաւանութիւնը տուեց համաձայն այն դաւանանքի, որը սահմանուած էր Փլորենտեան ժողովում՝ Եւդինիոս Դ-ի ժամանակ»²։ Իսկ վատիկանեան գիւանի մի վաւերագրի համաձայն՝ 1549 թ. օգոստոսի 21-ին տեղի ունեցած կարգինաւական նիստում (Consistorium) խօսուում է այն մասին, թէ վերջերս Հռոմ էր ժամանել մի հայ պատրիարք՝ արամադրութիւն ցոյց տալով «Նաղանդութիւն յայտնել Նորին Սրբութեանը եւ Հռոմէական Ս. Եկեղեցուն, խնդրելով, որ ժողովրդի կողմից իր անձի որպէս հայոց պատրիարք կատարուած ընտրութիւնը հաստատուի Նորին Սրբութեան կողմից» եւ թէ երեք կարգինաւների յանձնարարուում է ուսումնասիրել այս հարցը՝ «խորհելու համար, թէ ի՞նչ կոյ անելու եւ Նորին Սրբութեանը տեղեկացնելու»³։

Միամտութիւն կը լինէր, սակայն, կարծել, թէ հայոց ազգային եկեղեցու դիտապետ Ստեփանոս Սալմաստեցին մինչեւ հեռաւոր Հռոմ հասնելու յոգնութիւնը յանձն էր առել պարզապէս նրա համար, որ կամաւորապէս Լատինական Եկեղեցուն նուիրաբերէր իր դարաւոր անկախ եկեղեցին, եւ ընդունէր նրա դահակալի հպատակութիւնը։ Եթէ նա խօսում էր այդպիսի՝ տարապայմանօրէն խոշոր զոհողութեան մասին, այն էլ մի ամբողջ ժողովրդի անունից, դա չէր լինի առանց ակնկալութիւնների եւ առանց երկկողմանի ու հաւասար պայմանների։ Եթէ մենք ընդունում ենք, որ Սալմաստեցու այս ուղևորութեան շարժառիթը հայկական հարցն էր, ինչպէս ընդունում է եւ Պետրովիչը, եւ նա պաշտօն ունէր այդ մասին բանակցութիւններ կատարելու Հռոմում, ապա միաժամանակ պիտի ընդունենք, որ նմանօրինակ բանակցութիւնները միակողմանի պայմաններով չէ, որ կարող էին կատարուել։ Քաղաքական ու գիւանադիտական աշխարհում բանակցութիւնները աննպատակ, հետեւաբար՝ ձրի, չեն լինում երբեք։ Կողմերը առաւել կամ նուազ Հափով պահանջներ են ներկայացնում եւ իւրաքանչիւր կողմ աշխատում է նուազագոյն զիջման փոխարէն

1 ՊՍ էջ 11 եւ շար.։

2 Steph.-Evod. Assemanus, «Bibliothecae Mediceae Laurentianae et Palatinae codicum mms. orientium catalogus», Florentiae, 1742, p. 60.

3 Archivum Secretum Vaticanum, Aca Consistorialia incipientia ab anno 1537, tempore Pontificatus s. m. Pauli Papae III, per totum annum 1550, sub Iulio Papa III, p. 1035, 1042-1043. տես Օ. Raynaldus, «Annales ecclesiastici», Lucae, 1755, ad annum 1549, № 35. Հմտ. ՊՍ էջ 17. PChA p. 91.

ձեռք բերել առաւելագոյն շահ: Պէտք է ա՛յս տեսանկիւնից նայել նաեւ այս բանակցութիւնների վրայ:

Ստեփանոս Սալմաստեցին, իր Հոռոմ հասնելու օրուանից, չլացուցիչ յայտարարութիւններ էր արել՝ պապին հնադանդուելու և Հայ Եկեղեցին լատինականին ենթարկելու իմաստով: Բայց նմանօրինակ դործերը լոկ յայտարարութիւններով չէ, որ լինում են: Այդ յայտարարութիւնների իրացման ճանապարհի վրայ կային երկու ուրոյն հանգրուաններ: Առաջինն այն էր, որ բանակցող կաթողիկոսը ինքն անձամբ համաձայնութեան եզրեր գտնէր Լատինական Եկեղեցու ներկայացուցիչների հետ. իսկ երկրորդն այն էր, որ նա, իր երկիրը վերադառնալով, իր գլխաւորած եկեղեցու հաւանութիւնն ու համաձայնութիւնը ապահովէր Հոռոմում իր կատարած բանակցութիւնների արդիւնքների հիման վրայ:

Այս հաշուով՝ Հոռոմում Սալմաստեցու կատարած բանակցութիւնները դեռ կրում էին նախնական ու պայմանական, եւ քաղաք դէպքերում՝ անհասկանալի, բնոյթ: Այդ բանակցութիւնների համար էական նշանակութիւն ունեցող կէտերից մէկը պապի հանդէպ նրա անձնական հպատակութեան (ապագայի առումով) արտայայտութիւնն էր, որ նա կարող էր կատարել նոյնիսկ առանց իր եկեղեցու պաշտօնական հաւանութեան, եւ նա կատարել էր այդ, որպէսզի բացուէր բանակցութիւնների դուռը: Այդպիսի նշանակութիւն ունեցող կէտերից մէկն էր նաեւ դաւանական հարցը եւ հայոց կաթողիկոսը կարող էր դրանում եւս չզգալ որեւէ կաշկանդաւածութիւն, քանի որ դաւանականի էութիւնը հիմնականում ամփոփուած էր երկու եկեղեցիներում՝ ընդունուած Նիկիական հանգումակի սահմաններում. իսկ երկու բնութեան վարդապետութեան հարցում, որին այնքան մեծ նշանակութիւն էին տալիս Հոռոմում, Սալմաստեցին կարող էր անայլալօրէն յայտարարել, թէ Հայ Եկեղեցին արդէն միշտ էլ դաւանում էր Քրիստոսի մէջ «անխառն և անշփոթ միացմամբ» երկու բնութիւն: Սալմաստեցին իր այս յայտարարութիւններով Հայ Եկեղեցու համար պարտադիր յանձնառութիւններ չէր ստեղծում. բայց դրանք, ի հարկէ, Լատինական կողմի համար ունէին առաջնակարգ նշանակութիւն և վատիկանը, բանակցութիւնների այսպիսի սկզբնաւորութեամբ բաւարարուած, իր կողմից առաջին քայլն էր անում հայկական կողմի պահանջներին ընդառաջելու ուղղութեամբ: Յուլիոս Գ պապը 1550 թ. ապրիլ 25 թուագրութեամբ յանձնարարական երկու նամակներ է յանձնում Սալմաստեցուն, որոնցում ուղղուած Գերմանիայի Կարոլուս Ե կայսրին եւ Լիսաբոնի Սիդիմանդ նամակներ՝ ուղղուած Գերմանիայի Կարոլուս Ե կայսրին, որոնք նոյն բովանդակութեամբ Բ Աւգոստոս թագաւորին. այդ երկու նամակներում, որոնք նոյն բովանդակութեամբ էին, պապը նրանց յանձնարարում էր լսել հայոց կաթողիկոսի խնդրանքը⁴:

Այսքանը, սակայն, բանակցութիւնների համար առաջին հանգրուանն էր կազմում:

Երկրորդ հանգրուանի համար դռները բաց էին թողնուած Սալմաստեցու կողմից: Վերջինս, Հոռոմում պապի առջեւ իր յարգալիւր խոնարհումը ըստ պատշաճի միջ: Վերջինս, Հոռոմում պապի առջեւ իր յարգալիւր խոնարհումը ըստ պատշաճի կատարելուց եւ երկու եկեղեցիների դաւանական նոյնութեան կամ ձայնակցութեան կատարելուց եւ երկու եկեղեցիների դաւանական նոյնութեան կամ ձայնակցութեան մասին հաւաստիք տալուց յետոյ, մնացածը թողնում էր առկալս. մնացածի մասին

4 Այս մասին տեսնել մեր յոգուածը՝ Ներսէս Շնորհալին եւ Արմատ Հաւատոյ ժողովա-
ծուն, Էջմիածին, 1973, № 12, էջ 84-85:

Բեն. Հերբեստը, որ շատ մօտիկից է ծանօթ եղել Լիսաբոնի հայերին եւ նրանց կրօնական ըմբռնումներին, 1566 թուականին գրում էր, թէ շրանց քահանաների հետ ունեցած խօսակցութիւններից չկարողացանք հասկանալ ուրիշ բան, քան այն, որ հայերը, թէեւ տարբեր ձէսով, մեղ հետ դաւանում են նոյն հաւատը, Վերջապէս տեսանք նրանց հաւատոյ դաւանութիւնը եւ նրանում չպատահեցինք որեւէ բանի, որը լինէր նուազ ուղիղ. հաւատի կողմից հայերը միաբան են մեղ հետ եւ իրենք իսկ ընդունում են այդ (տես B. Herbest «Wypisanie drogi», MLUR, vol. 5, p. 4-8. Հմտ. PChA p. 148-149):

«Wypisanie drogi», MLUR, vol. 5, p. 4-8. Հմտ. PChA p. 148-149):

5 Archivum Secretum Vaticanum, Minutae Brevium Iulii PP. III, Arm. 41, t. 55, № 363. Հմտ. ԳՍՍ էջ 21. PChA p. 93 e 108 (ուսապատճէնը):

կարելի կը լինէր խօսել միայն այն ժամանակ, երբ իրական յոյսեր կ'երեւային հայկական հարցի համար, Գերմանիայի եւ Լեհաստանի այցելութիւններէն յետոյ, եւ, իրօք, Հռոմում Սալմաստեցիին ձեռնպահ է մնում Հայ Եկեղեցու անուշով զիջումներ անելու կէտում: Նրանից պահանջուել էր ջուր խառնել պատարագի բաժակի մէջ, բայց նա վաղաժամ էր համարել այդ պահանջը՝ ասելով, թէ այդ հարցը պատկանում է բանակցութիւնների հետագայ հանգրուանին: «Եւ որովհետեւ, — գրում է Արեւի. նոսր, — նա պատարագի խորհրդի մէջ ջուր չէր խառնում գինու հետ, համաձայն. ունեց, որ ինչպէս ինքը, այնպէս եւ իրեն ենթակայ 27 նպիսկապոսները հետագայում գինու հետ ջուր կը խառնեն՝ ըստ սովորութեան Հռոմէական Եկեղեցու»⁶: Արեւի. նոսր յետոյ աւելացնում է. «Բաղձաթիւ եւ ծանր եղան մեր միջև վիճարանութիւնները՝ կրօնական հարցերի շուրջ» (plura fuerunt et gravia, quae de religione inter nos disseruimus)⁷: Այս խօսքերի թարգմանութեան հարցում մենք հետեւում ենք Հ. Մ. Չամչեանին, որը ճիշտ է⁸: Պետրովիչը յարմար է համարել՝ մեղմել Արեւի. նոսր այս խօսքերի իմաստը եւ այդ նպատակով, մերժելով Չամչեանի թարգմանութիւնը, ինքը թարգմանել է այսպէս. «Բաղձաթիւ եւ լուրջ եղան մեր խօսակցութիւնները կրօնքի վերաբերեալ հարցերու շուրջ»⁹:

Այս բոլորն ասում են, որ Հռոմում Սալմաստեցիին հանդէս էր եկել ո՛չ որպէս անվերապահ եւ միակողմանի զիջումներով ընթացող բանադնաց: Մեզ թուում է, սակայն, որ Պետրովիչը վերոյիշեալ փաստերից իր հանած եզրակացութիւններով համաձայն չէ մեզ հետ: Նա հենց սկզբում ընդունել է, որ Հայաստանի անկախութիւնը վերականգնելու ծրագիրն է, որ Սալմաստեցուն տարել էր դէպի Եւրոպա, բայց իրերի ընթացքի գնահատման մէջ մոռանում է այդ հիմնականը եւ իր ամբողջ փաստարկուններն ուղղում է այն նպատակին, որ ապացուցի, թէ նա, Սալմաստեցին, անկեղծօրէն եւ անվերապահօրէն անձնատուր էր եղել Հռոմի աթոռին եւ ցմահ անձնուիրաբար ծառայել նրա պահանջներին ու շահերին: Պետրովիչն իր ընդհանուր եզրակացութիւնների մէջ ասում է, որ Սալմաստեցին «հետեւելով իր փառապանծ նախորդների հետքերուն՝ մեծ բարեպաշտութեան եւ կաթողիկէ ոգիի նշաններ ու վաւերագրիւններ տուաւ մինչ հոս կը գտնուէր», ինչպէս կ'ըսէր Յուլիոս Գ պապը¹⁰: Ըստ մեզ՝ ամէն հասկացողութիւն յարաբերական է: «Կաթողիկէ (ընդհանրական) ոգիի նշաններ ու վաւերագրիւններ (ապացոյցներ)» տալը Հայաստանեայց Եկեղեցու պետի ցուցաբերած քրիստոնէական սիրոյ եւ համերաշխութեան ոգին էր, քրիստոնէական ըմբռնումների ընդհանրութեան ոգու անկեղծ արտայայտութիւնն էր: Իսկ սրանից դուրս արդեօք դեռ ի՞նչ կարող էր հասկանալ Պետրովիչը. անպայման ու միայն հնազանդութիւն եւ հպատակութիւն: Բայց Պետրովիչը դեռ աւելացնում է հետեւեալը. «Ստեփանոս Ե. եռանդուն կաթողիկէ մը ըլլալու փաստը տուաւ Հռոմի չրջա. նակէն դուրսն ալ, այն է Լեհաստանի հայոց առջեւ»¹¹. Իսկ այս խօսքն էլ ակնարկու. թիւն է Լուսավում ուղարկնացի յունադաւան երկու երեսանների հետ կապուած մի պատմութեան, բայց այդ էլ, դարձեալ, ուրիշ հարց է. ոչ թէ հասկացողութիւն. ներքի յարաբերականութեան հարց, այլ սոսկ թիրիմացութիւն, եթէ չենք ուզում ասել՝ պատմական փաստերի կամաւոր աղաւաղում:

6 S.-E. Assemanus, p. 60.

7 Ibidem.

8 Հ. Մ. Չամչեան, «Պատմութիւն Հայոց», հտ. Գ, Վենետիկ, 1786, էջ 518:

9 ՊՍՍ էջ 16 եւ 28:

10 Անդ, էջ 108:

11 Անդ:

ՍՏԵՓԱՆՈՍ ՍԱԼՄԱՍՏԵՑԻՆ ԵՒ ՅՈՒՆԱԳԱՒԱՆՆԵՐԻ ՄԿՐՏՄԱՆ ԽՆԴԻՐԸ

Պետրովիչը, Սալմաստեցու եռանդուն հռոմէական լինելուն որպէս ապացոյց, առջ է բերում մի տեղեկութիւն, որի համաձայն նա, Սալմաստեցին, 1551 թուականին ուկրաինացի յունադաւաններից խել էր երկու տղայ՝ որպէս թէ «կաթողիկէ դաւանանքի դարձնելու նպատակով»¹²։ Այս տեղեկութեան համար Պետրովիչը որպէս աղբիւր է ցոյց տալիս «Լուովի դատական վճիռների ժողովածու»-ի Ժ հատորը¹³ եւ նրա հեղինակութիւնն ամրապնդելու համար վկայակոչում է նաեւ մեր օրերի մի ուսումնասիրութիւն¹⁴, որի աղբիւրը, սակայն, հենց նոյն «Լուովի դատական վճիռների ժողովածու»-ի նոյն Ժ հատորն է, ուրեմն՝ անարժէք։

Իր տարօրինակութեամբ անխուսափելիօրէն թերահաւատութիւն ներշնչող այս տեղեկութիւնը մեզ մղեց լծուելու՝ ցոյց տրուող աղբիւրների ստուգման աշխատանքին, որից եւ պարզուեց, որ «Լուովի դատական վճիռների ժողովածու»-ի Ժ հատորում վճիռների բնագրեր չեն հրատարակուել, այլ միայն վաւերագրերի ցուցակները լինելէն լեզուով՝ նրանց բովանդակութիւնը յայտնող համառօտ տեղեկութիւններով։ Հատորի 60-րդ էջի վրայ գտնուում է ցուցակի № 906 նկարագրութիւնը, որը վերաբերում է երկու տղաների խնդիրը շօշափող վաւերագրին։ Այս այդ նկարագրութեան հայերէն թարգմանութիւնը։

«906. Կրակովում, 19 մայիսի 1551 թ., լեհաց թագաւոր Սիգիսմոնդ Աւգոստոսը՝ Լուովի հայոց պատրիարք Ստեփանոսին, որպէսզի նա իրենց մօ՛րը վերադարձնի յունադաւան այն երկու տղաներին, որ նա խել էր կաթողիկէ դաւանանքին դարձնելու համար»։

Այս ծանօթագրութեան վերջում նշուում է, որ նկարագրուող անտիպ վաւերագիրը, որը լատիներէն է, գտնուում է Լուովի Բեռնարդինեան կոչուած դիւանատան (Archivum Bernardinum) Լուովեան ամրոցի դիւանում (Archivum Castri Leopoliensis), հատոր 328, էջ 666-667։

Ուրեմն՝ այս վաւերագիրը Սիգիսմոնդ Բ Աւգոստոսի մի նամակն է, գրուած 1551 թուականի մայիսի 19-ին, նամակ, որով նա Սալմաստեցուն յանձնարարում է յունադաւան համայնքին վերադարձնել յիշեալ տղաներին։ Բայց Պետրովիչն, իրեն յատուկ նկատառումով, հայ ընթերցողին ցոյց չի տալիս բուն՝ արքայական վաւերագիրը¹⁵ եւ միայն հետագայում է, որ լատին ընթերցողի համար ամբողջութեամբ հրատարակում է նրա լատիներէն բնագիրը¹⁶։ Իսկ այդտեղից ի՞նչ է պարզուում մեզ համար։

Նամակն ասում է, որ յունադաւանների՝ Հալիչի, Լուովի եւ կամենիցի առաջնորդ Արսէն Բալաբանի եւ Լուովի արեւելեան ծէսով հայերի պատրիարք Ստեփանոսի (Stepan patriarcha ritus orientalis Armenorum civitatis Leopoliensis) միջև վէճ էր առաջացել «յունական մկրտութիւնից հայկականի դարձումը ինչ-որ տղաների խնդրով» (occasione quorundam puerorum in baptismum Armeniorum ex graeco translatorum), այսինքն՝ իբրեւ հայ վերամկրտուած տղաների խնդրով, խնդիր, որն ընկել էր թագաւորի իրաւարտութեանը, եւ վերջինս Ստեփանոսին գրում էր, թէ այդ տղաներն իրենց հարազատ մօրից խլուելով «մկրտութեամբ ձեր հայկական ծէսի դաւանանքին են դարձուել [եւ] օծուել են ձեր ծէսով» (in fidem ritus vestri armenici transtulissent baptismo [ac] juxta ritum vestrum unxisse)¹⁷։

12 Անդ, էջ 44 եւ 108; PChA p. 97 e 101։

13 "Akta Grodzkie i Ziemskie", t. X, Lwów, 1884, str. 60, № 906.

14 K. Chodynieki, «Kościół prawosławny a Rzeczpospolita Polska; Zarys historyczny 1370-1632», Warszawa, 1934, str. 93.

15 Հմմտ. ՊՍՍ էջ 44։

16 PChA p. 97-98.

17 Բնագրի այս մասն ամբողջութեամբ բերենք, որպէս զի ակելի պարզ լինի ընթերցողի համար. «Exponi fecit nobis venerabilis Arsenius Balaban Haliciensis, Leopoliensis, Camenecensisque vla-

Տեսնում ենք, որ այստեղ «կաթոլիկ դաւանանքին դարձնելու» խնդիր չկայ, այլ պարզապէս՝ «հայադաւան դարձնելու»։ Եւ, իրօք, ուրիշ ի՞նչ կարող է նշանակել «հայկական ծէսի դաւանանք» արտայայտութիւնը, եթէ ոչ հայադաւանութիւնը, իսկ «կաթոլիկ դաւանանքին դարձնել» խօսքը գտնուում է այն № 906 լինելէն նկատագրութեան մէջ, որ ժողովածուի կազմող-խմբագրողը նուիրել է արքայական այգ լատիններէն վաւերագրին։ Նշանակում է՝ ժողովածուն կազմողի շարագրած տեղեկութիւնը, որ Պետրովիչը մեզ ներկայացրել էր որպէս պատմական աղբիւր, չի համապատասխանում Սիգիսմունդ Աւգոստոսի նամակի բովանդակութեանը։ Ուստի եւ այստեղ, իրաւամբ, կարելի է ընդհանրապէս հարց դնել, թէ, ճշգրտութեան առումով, արդեօք որքանով են վստահելի այս ժողովածուի լինելէն գրուած ծանօթագրութիւնները։ Իսկ այդ մասին Պետրովիչն ինքն արդէն յայտնել էր իր կարծիքը, երբ մեր նայն Սալմաստեցուն վերաբերող մի ուրիշ՝ 19 դեկտ. 1550 թուակիր թագաւորական վաւերագրի մասին էր խօսում, ասելով, թէ այնտեղ «գաղտնիքով լինողներու խմբագիրը լաւ հասկցած չէ վերոյիշեալ արքայական առանձնաշնորհումին բուն իմաստը»¹⁸ կամ, ինչպէս իր խաւերէն հրատարակութեան մէջ էր կրկնում Պետրովիչը, «կազմողը չի հասկացել խնդրոյ առարկայ արքայական արտօնագրի իմաստը»¹⁹, եւ իր թէ՛ հայերէն, թէ՛ իտալերէն հրատարակութիւններում ամբողջութեամբ բերում էր իսկական վաւերագիրը՝ իր այս կարծիքը հաստատելու համար։ Իսկ ներկայ դէպքում Պետրովիչն ինչպէս է փութկառութեամբ առաջ քաշում կազմողի «կաթոլիկ դաւանանքին դարձնելու նպատակով» խօսքը, երբ գիտի, որ դա՛ էլ սխալ է, եւ զլանում է հայ ընթերցողին ներկայացնել բուն վաւերագիրը, որի պատճէնն իր ձեռքի տակ է եւ որը տեսնելի կը դարձնէր այդ սխալը։

Առաջ դնանք մի քայլ եւս։

Պետրովիչը տիրապետում է լատիններէն լեզուին, բայց տուեալ դէպքում ժողովածուի կազմողին չի առարկել, թէ լատիններէն *ritus* բառը նշանակում է ոչ թէ դաւանանք, այլ ծէս։ Ընդհակառակն՝ լուեւոյն հաւանութիւն է տուել, որովհետեւ դա յարմար է «կաթոլիկ դաւանանքին դարձնելու» համար։ Սակայն տեսնում ենք, որ Պետրովիչը, բուն վաւերագիրը քննելիս, ուղեցել է *ritus* բառը հասկանալ նրա իսկական՝ ծէս իմաստով եւ *Armeni ritus orientalis* (արեւելեան ծէսով հայեր) անուան տակ հասկանալ լատինագաւան հայեր, որոնք արեւելեան (հայկական, ազգային) ծէսով եին վարուում, որպէս թէ ի տարբերութիւն այն լատինագաւան հայերի, որոնք թողել էին ազգայինը եւ վարուում եին արեւմտեան (լատինական) ծէսով։ Իսկ այս ձեւով՝ Լուովի հայերը երկու դէպքում էլ դուրս կը գային որպէս լատինադաւան։ Ինչպէս երեւում է, այսպիսի ելակէտով է, որ Պետրովիչն ուզում է արդարացի ցոյց տալ ժողովածուի կազմողին, որպէսզի Լուովի արեւելեան ծէսով հայերի (իմա՝ լատինադաւանների) պատրիարք Սալմաստեցին կարողանայ հանդէս գալ յաւնադաւան երեխաներին իբր թէ լատինադաւան դարձնող։

Աւելորդ է ասել, որ այսպիսի մօտեցումը քննադատութեան չէր դիմանայ, քանի որ, ինչպէս ի պատմութենէ գիտենք, Լուովի արեւելեան ծէսով հայերը լատին-

dica quod tempore nuper transacto Dominatio Tua, seu officialis Illius in spiritualibus, in civitate Leopoli ensi, certos quosdam pueros duos sexus masculini fidei graecae, in minorennitate existentes, ab illorum legitima matre violenter rapisset ac in fidem ritus vestri armenici transtulissent baptismo [ac] iuxta ritum vestrum unxisent" (Գերարգոյ Արսէն Բալաբանը, որը Հալիչի, Լուովի եւ Կամենիցի առաջնորդն է, մեզ տեղեկագրեց, որ վերջերս Քո Տէրութիւնը, եւ կամ՝ Լուով քաղաքում հոգեւոր գործերի դժով նրա պաշտօնատարը, իրենց հարազատ մօրից բռնի խլել է արական սեռի երկու անչափահաս երեխաների, որոնք յաւնական դաւանանքին են պատկանում, եւ նրանք մկրտութեամբ ձեր հայկական ծէսի դաւանանքին են դարձուել [եւ] օծուել են ձեր ծէսով)։

18. ՊՍՍ էջ 32։

19. PChA p. 96. Իսկ ձեռագրի լուսապատճէնը՝ 181։

նադաւան չէին, այլ հայադաւան. այդպէս էր դրութիւնը մինչեւ 1630-ական թուականները, երբ սկիզբ առան հայերի բռնի կաթողիկոսացման ձեռնարկումները: Իսկ մինչեւ այդ՝ եթէ լինահայ գաղութում պատահում էին լատինադաւանութեան յարած անհաւանք, նրանց ո՛չ հայ անուան էին տալիս, ո՛չ էլ անուանում էին աւելիկան ծեսով եւ կամ աւելիկան ծեսով: Հենց Պետրովիչի կողմից վկայակոչուած լատինական այնպիսի աղբիւրներում, որոնք խօսում են Լուովի հայերի գործերի մասին, դեռեւս ժԴ դարի երկրորդ կէտում հայ տակաւ հասկանում էին միայն հայադաւաններին. այդ աղբիւրների ընթերցում փաստերի հիման վրայ Պետրովիչն ինքը, մի այլ առիթով, գտնում էր, որ «կաթողիկոսի տերմինը դարձել էր լատինի համանիշ. իսկ հայ տերմինն՝ իմաստով նոյն էր դարձել հերձուածով տերմինի հետ», եւ մարդիկ այդ անում էին, ինչպէս եղբակացնում է նոյն Պետրովիչը. «յաճախ չփոխելով տարբեր ծէսերը տարբեր դաւանանքների հետ»²⁰:

Բայց թաղները Պետրովիչի մօտեցման եղանակների հարցը: Մասնագէտներին յայտնի է, որ լատինական աղբիւրներն *Armeni ritus orientalis* (աւելիկան ծեսով հայեր) կամ պարզապէս *Armeni orientales* (աւելիկան հայեր) անուանումով միշտ հասկանում են հայադաւան հայերին, որոնց ի տարբերութիւն, լատինադաւաններին անուանում են *Armeni uniti* (միացեալ հայեր). եւ այդպէս էլ ընդհանրացած է եւրոպական պատմագիտութեան մէջ, ինչպէս տեսնում ենք, օրինակ, հետեւեալ աշխատութեան վերնագրում. D. Dan, «Die orientalischen Armenier in der Bukowina», Czernowitz, 1890²¹: Այս գիրքը նուիրուած է Բուկովինայի հայադաւան հայերի ուսումնասիրմանը:

Գուցէ անհրաժեշտ է նաեւ յիշել, որ այսպիսի խնդիրներում Հռոմէական եկեղեցու տեսանկիւնից կայ նաեւ կանոնականութեան հարց: «Կաթողիկոսի հանրագիտարան»-ում, օրինակ, մկրտութեան հարցերին նուիրուած յօդուածը բացայայտօրէն ասում է, որ արեւելեան եկեղեցիների մատակարարած մկրտութիւններն անպայման վաւերական են եւ կրկնելի չեն²²: Նոյն հանրագիտարանի մի ուրիշ յօդուածում, ուր «քրիստոնէական Արեւելք» հասկացութիւնն է պարզաբանուած, ասում է, որ արեւելեան եկեղեցիներից էին Բիւզանդականը եւ նրանից ծագած եկեղեցիները, ի թիւս որոնց՝ սլաւոնականը (ռուսներ, ուկրաինացիներ եւայլն)²³, որոնց բոլորին յունադաւան էին անուանում:

Արդ՝ որքանո՞վ կարելի է հաւատալի համարել, թէ «եռանդուն կաթողիկէ» Սանփանոս Սալմաստեցին, Հռոմէական եկեղեցուն ծառայութիւն մատուցելու համար, ոտնակոխ անէր նրա ունեցած կանոնական կարգերը, այն էլ հենց նոյն եկեղեցու բացարձակ իշխանութեան սահմաններում գտնուող Լիսաբոնում: Եթէ որեւէ մէկը ուզենար կաթողիկ դարձնել այդ աղաներին՝ մկրտութեան հարց արդէն չկար յունադաւանների համար: Մեզ թուում է, որ բաւական է այսքանը:

Այսպիսով՝ անտարակուսելի է, որ Սալմաստեցին, լինելով հայոց կաթողիկոս, փորձ էր կատարել յունադաւան ուկրաինացի երեսաներին հայադաւան հայ դարձնելու եւ ոչ թէ, որպէս լատինական եկեղեցու գործիչ, նրանց կաթողիկ դարձնելու: Ինչպէս ներկայացնում է Պետրովիչը՝ օգտուելով «Լուովի դատական վճիռների ժողովածու»-ն կազմողի տգիտարար կատարած սխալից:

20 PChA p. 16.

21 Այս գիրքը թարգմանուած է հայերէն. Գեմետրիոս Տան (Դան), «Արեւելեան Հայք Ի Պաշտօնի» (Թարգմ. Հ. Գրիգորիոս Գալմաթեարեան), Վիեննա, 1891:

22 «Enciclopedia Cattolica», vol. II, Città del Vaticano, 1949, p. 1045.

23 Ibidem, vol. IX, 1952, p. 309-310.

ՍՏԵՓԱՆՈՍ ՍԱԼՄԱՍԵՑՈՒ ՄԱՀՈՒԱՆ ԹՈՒԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ

Մեր «Դիտողութիւններ» յօդուածի կարեւոր կէտերից մէկն էր Ստեփանոս Սալմաստեցու մահուան թուականի հարցը:

Սալմաստեցու մահուան թուականը որոշելու հարցում, ինչպէս տեսել էինք, կարեւոր նշանակութիւն ունէին Առաքել Դաւրիթեցու հաղորդած տուեալները, որոնց համաձայն Սալմաստեցին դեռ կենդանի էր 1557 թուականին: Դաւրիթեցու տուեալների արժանահաւատութիւնը Սալմաստեցու շրջանի կաթողիկոսների ժամանակագրական հարցերում՝ վեր է ամէն կասկածից, որովհետեւ դրանք հիմնուած են ձեռագրերի յիշատակարանների վրայ: Նա իր «Պատմութեան» մէջ յիշատակուած այս կամ այն դէպքի թուականները նշելիս՝ կարող է, իր ձեռքի տակ եղած աղբիւրների վրայ յենուելով, սխալուել: Բայց այստեղ՝ խնդիրն այլ է: Ձեռագրերի յիշատակարանների վրայ յենուելիս՝ նա չէր կարող սխալուել, որովհետեւ յիշատակարաններում գտած տուեալներով նա ոչ թէ կաթողիկոսների իշխանութեան սկիզբն ու վերջն է նշում, այլ միայն յիշատակման թուականները:

Արեւիկոսը, որը շատ մօտիկ յարաբերութիւնների մէջ էր եղել Հռոմում Սալմաստեցու հետ, գրում է, որ նա 1550 թուականին մեկնելով այնտեղից, «զնաց կարուս Ե կայսեր մօտ» Լեհաստանի եւ Մոսկովիայի վրայով հայրենիք վերադառնալու համար²⁴: Բայց Արեւիկոսը տեղեկութիւն չունի, թէ ինչպիսի՝ ընթացք ունեցաւ այդ ուղեւորութիւնը: Արեւիկոսի վկայութեանը հետեւելով՝ Հ. Մ. Չամչեանը կրկնում է, որ 1550 թուականին Սալմաստեցին Հռոմից անցաւ Գերմանիա՝ կարօլս Ե կայսրին այցելելու, եւ նրա ուղեւորութիւնը հասցնում է մինչեւ հայրենիք. «Եւ ապա անցեալ ընդ Լեհաստան եւ ընդ Մոսկովստան՝ եկն եհաս ի յաջորդ ամի յաշխարհն Հայոց», այսինքն 1551 թուականին²⁵:

Ըստ երեւոյթին Չամչեանը 1553 թուակիր մի յիշատակարանի վրայ է յենում իր այս լրացումը կատարելու համար, եթէ երբեք ուրիշ աղբիւր չունի: Սալմաստեցու մասին նա գրում է, թէ «Իբրեւ եմուտ յԷջմիածին, ընկալաւ զնա փառօք Միքայէլ կաթողիկոս [Սեբաստացի], եւ ետ նմա զառաջին պատիւ նորին եւ զնախագահութիւն. ուստի եւ ի յիշատակարանի միում գրեալ ի նոյն աւուրս ի թուին Հայոց ՌԲ, այն է յամի տեառն 1553, նա ինքն Ստեփաննոս յիշի իբրեւ կաթողիկոս Հայոց»²⁶:

Այստեղ մեր խնդիրն այն չէ, թէ Ստեփանոս Սալմաստեցին Էջմիածին վերադարձել էր կամ ոչ, այլ այն, թէ նա, ըստ մի յիշատակարանի, 1553 թուականին կենդանի էր եւ յիշատակուում էր որպէս հայոց կաթողիկոս: Իբրեւ այդպիսին՝ նա յիշատակուում է նաեւ Դաւրիթեցու առաջ բերած ձեռագրական տուեալներով՝ մինչեւ 1557 թուականը, ինչպէս տեսանք արդէն: Մենք դեռ ունենք նաեւ Յովհաննիսուկ Մշեցու վկայութիւնն այն մասին, որ Սալմաստեցին 1555 թուականին կենդանի էր եւ Լուովում առաջնորդ էր կարգել Գրիգոր Վարազեցուն: Այս բոլորը ժխտուած են համարուում Պետրովիչի կողմից, թէեւ ժխտման փաստարկումները մեզ չեն համոզում: Այնուամենայնիւ, եթէ նոյնիսկ մի կողմ դնենք այս բոլորը՝ որպէս արտակայացնել, մենք ունենք ներքին տուեալներ, որոնք, ըստ Պետրովիչի, կարող են արժէք չենք լու ապացոյցն են տալիս 1550-ական թուականների ամբողջ ընթացքում եւ նոյնիսկ 60-ական թուականներին:

Հ. Մ. Բժշկեանը, որ 1830 թուականին հրատարակել է Լեհաստանի հայկական

24 S. - E. Assemanus, p. 60.

25 Հ. Մ. Չամչեան, էջ 518:

26 Անդ, էջ 518 - 519:

Նախ ասենք, որ Բժշկականի եւ Մինաստվիչի գրածները ոչ թէ վկայութիւններ են, ինչպէս համարում է Պետրովիչը, այլ աղբիւրներ, որոնք մեզ հաղորդում են Սալմաստեցու ձեռքով գրուած կտակի պարունակութիւնը. ուրեմն՝ վկայութիւնը Սալմաստեցու գրչից է։ Երկրորդ՝ նկատենք, որ այստեղ անտեղի է խօսել անճշտութիւնների մասին։ Ստեփանոս Սալմաստեցու կտակը, ըստ երկու աղբիւրների, պարզապէս ասում է, որ պապը նրան ուղարկել է Ֆերդինանդ կոյսեր մօտ, առանց տեսիլու, թէ ո՛ր պապն էր ուղարկողը եւ ո՛ր թուականին։ Այսքան փոքր եւ այսքան պարզ տեղեկութեան մէջ աւելորդ կը լինէր որոնել պատմական անճշտութիւններ։ Բայց Պետրովիչը իր հաշիւներով ինքն է ստեղծում անճշտութիւնները։ Ելակէտ ընդունելով Արեւախնոսի այն վկայութիւնը, թէ Սալմաստեցին 1550 թուականին Յուլիոս Գ-ի յանձնարարագրով Հռոմից մեկնել էր՝ Գերմանիայի կայսր Կարոլոս Ե-ի մօտ գնալու համար³¹, Պետրովիչը բնականօրէն հետեւեցնում է, որ նա, Սալմաստեցին, այդ թուականին Գերմանիայի կայսերական զահօի վրայ պիտի գտած լինէր Կարոլոս Ե-ին (1519-1558 թթ.)³² եւ ոչ թէ նրա կրտսեր եղբայր Ֆերդինանդ Ա-ին, որն այդ ժամանակ ոչ թէ Գերմանիայի կայսր էր, այլ Բոհեմիայի թագաւոր (1527-1558 թթ.), եւ հետագայում է միայն, որ Կարոլոս Ե-ին յաջորդեց որպէս կայսր (1558-1564 թթ.)³³։ Պետրովիչի հենց յիշեալ ելակէտն է, որ նրան մղել է կտակի տեղեկութեան մէջ

33 Ibidem, vol. IX, New York, 1929, p. 165-166.

տեսնելու հակասութիւնն եւ այն վերացնելու համար ենթադրութիւն անելու, թէ Սալմաստեցին 1550 թուականին պիտի միաժամանակ այցելած լինի Կարուսս Ե կայսրին եւ Ֆերդինանդ թագաւորին:

Բայց Պետրովիչը չի նկատում, որ իր ստեղծած հակասութիւնն ամենեւին էլ չի լուծուում իր առած մեկնարանութիւններով, որովհետեւ կտակը Ֆերդինանդին տալիս է ոչ թէ րազաւոր, այլ կայսր տիտղոսը: Եթէ Սալմաստեցին 1550 թուականին գնացած լինէր միաժամանակ թէ՛ Գերմանիայի կայսեր մօտ եւ թէ՛ Բոհեմիայի թագաւորի, կտակում ինչո՞ւ լռութեան պիտի մօտենէր Կարուսս Ե կայսեր անունը եւ յիշատակէր միայն նրան ենթակայ Ֆերդինանդ թագաւորի անունը, այն էլ նրան, Ֆերդինանդին, չպատկանող կայսր տիտղոսով: Այս փաստերն ասում են, որ Սալմաստեցու կտակի ներքին արժէքի գնահատման մէջ նախ Պետրովիչի ելակէտն է սխալ եւ ապա՝ այդ ելակէտի հետեւանքով առաջացած հակասութիւնը վերացնելու համար նրա առած բացատրութիւնը, որը չի պարզաբանում եւ ոչ մի բան:

Ուրեմն, ըստ Սալմաստեցու կտակի, նա պապի կողմից ուղարկուել էր Ֆերդինանդ Ա կայսր փոխ անշուշտ 1558 թուականին կամ յաջորդ տարիներին, երբ կայսերական գահի վրայ էր Ֆերդինանդ Ա-ը: Այս հետեւութիւնն ամենեւին չի հակասում Արեւմտեան աշխարհի այն վկայութեանը, թէ Սալմաստեցին 1550 թուականին Յուլիոս Գ-ից յանձնարարագիր էր ստացել Կարուսս Ե-ին ներկայանալու համար³⁴, որովհետեւ տարբեր դէպք է Արեւմտեան աշխարհի յիշատակածը եւ տարբեր դէպք՝ կտակում յիշատակուողը, վերջինս՝ ըստ Մինստովիչի եւ Բժշկեանի աղբիւրների: Արեւմտեան աշխարհի յիշատակած թուականին, 1550-ին, Սալմաստեցու գնացած լինելը Կարուսսի մօտ՝ մենք տարակուսական ենք համարում այն պատճառով, որ այդ շրջանում կայսրութեան քաղաքական դրութիւնն ալեկոծ վիճակում էր՝ բուն Գերմանիայում Լուծերական շարժման դէմ մղուող պատերազմներով, որոնք լուրջ մտահոգութեան մէջ պահեցին Կարուսս Ե-ին՝ մինչեւ Աուգսբուրգի հաշտութիւնը 1555 թ., իսկ Սպանիայում՝ տեղական ազնուականութեան հետ Կարուսս Ե-ի ունեցած մեծ զեւարութիւններով: Այդպիսի պայմաններում, ինչպէս երեւում է, 1550 թուականին ծրագրուած այդ ուղեւորութիւնն առկալս էր մնացած եղել մինչեւ Ֆերդինանդ Ա կայսեր (1558–1564 թթ.) օրերը: Իսկ թէ այս վերջին ժամանակաշրջանում կոնկրետ ո՞ր թուականին է այցելել Սալմաստեցին Ֆերդինանդ Ա-ին՝ յայտնի չէ: Սակայն այս ուղարկմանը պարզ եւ անտարակուսելի է միայն մի բան՝ այն, թէ Սալմաստեցին գեւ կենդանի էր առնուազն 1558 թուականին, որ է Ֆերդինանդ Ա կայսեր ընտրութեան տարին:

Ստեփանոս Սալմաստեցին, ըստ իր կտակի, չորս ամիս մնացել է Ֆերդինանդ Ա-ի արքունիքում: Այս ժամանակամիջոցի նկատելի երկարութիւնը ցոյց է տալիս, որ նա բանակցութիւնների մէջ էր կայսեր հետ. բայց թէ ի՞նչ ընթացք են ունեցել այդ բանակցութիւնները եւ ինչո՞վ են աւարտուել՝ յայտնի չէ: Հ. Ն. Ակինեանը, որը Վիեննայի պետական գիւմարում նիւթեր չէր գտել 1550 թուականին Կարուսս Ե-ի հետ Սալմաստեցու տեսակցութիւն ունեցած լինելու վերաբերեալ (սկզբնապէս պետական գիւմարը որ եւ իցէ յիշատակարան չէ պահպանած այս մասին, որչափ քննութիւնքս համոզեցին զիս)՝³⁵, հաւանաբար որեւէ արդիւնքի կը հասնէր, եթէ իր որոնումները յատկացրած լինէր Ֆերդինանդ Ա-ի իշխանութեան շրջանին:

Այնուհետեւ 1560-ական թուականներին դարձեալ յիշատակութիւն կայ Ստեփանոս Սալմաստեցու մասին եւ այս անգամ տեղեկութիւնը վերաբերում է նրա մահուանը: Տեղեկութեան աղբիւրը Յիսուսեան հեղինակ Բ. Հերբեստն է, որը ժամանակակից է դէպքին: Հերբեստը, Լուովի հայերի հետ իր ունեցած չփոխանակմանը նկարագրելիս, 1566 թուականին գրում է, որ այնտեղ Սիմոն երէցը նրան ասել էր, թէ

34 ՊՍՍ էջ 20–21 եւ 26–27: РСНД р. 93 с 180.

35 Հ. Ն. Ակինեան, «Ազատութեան շարժումը ԺԵ–ԺԶ դարերուն Հայոց մէջ», Հանդէս Ամսորեայ, 1917/18, էջ 147:

1980 Նոյեմբ. - Դեկտ.

ԱՐԻՍՏԱԿԷՍ ՎՐԴ. ԽԱՐԵՐԴՅԻ

(1580 ? - 1641 ?)

Ծնած է Խարբերդի եղեգի գիւղը Ժ. Դարու վերջին քառորդին մօտաւորապէս։ Որդին էր Կիրակոս քաջանայի և Հռիփ-օթմէի։ Աշակերտած է Շէնքուշցի Մարտիրոս վարդապետի, որմէ գաւազանի իշխանութիւն ստացած է 1618ին։

Կը թուի թէ իր սիրական ասպարէզը եղած է քարոզչութիւնը, յատկապէս նիւթ ունենալով Եսայի Մարգարէի գիրքը, որուն վրայ դասախօսած և քարոզած է երկար տարիներ, ինչպէս կը տեղեկացնէ Մաղապատի մասին գրած ոտանավորին առաջին տուններով։

Ան Կ. Պոլիս գացած է 1628ին, ըստ վկայութեան Յակոբ գրչի. «Եւ թվականութեանս հայկազեան տուժարիս Ռէէ . . . ոմն յերկրէն Հարբերդու, անուանեալ Արիստակէս վարդապետ, ուսեալ և հմուտ եղեալ Հին և Նոր Կտակարանաց, իջեալ ի Կոստանդնուպոլիս, վասն բանի Սր. Ա-

ւետարանին, զի քարոզեացէ յունկն հաւատացելոց»։ - Յիշատակարանք Ժէ. Դարի, Բ. Հատոր, էջ 288, թիւ 437։

Կ. Պոլսոյ մէջ իր կատարած դործերէն գովեստով յիշուած է Պալաթու Ս. Հրեշտակապետ եկեղեցիին նորոգման առթիւ իր բերած քարոյական մեծ օժանդակութիւնը։ Ահաւասիկ հակիրճ վկայութիւն մը։ Արիստակէս Վրդ. Խարբերդցի «բազում աշխատանս կրեաց թուին Հայոց Ռէէին, վերստին նորոգելով և զարդարելով զՊալաթու դրան Սր. Հրեշտակապետ եկեղեցին, դաս և քարոզ տանելով, և զժողովուրդն յորդարմամբ ժողովք անելով, հազիւ ազատեաց զեկեղեցին ի պարտուցն»։ - Յաւցակ Ձեռ. Ս. Յակոբեանց, Թ. Հատոր, էջ 141։ Ձեռ. Ս. Բ. Թիւ 2944։ Այդ մասին ընդարձակօրէն գրած է Գրիգոր Դարանազեցիին իր Ժամանակագրութեան մէջ (էջ 187 - 189)։

Արիստակէս Վրդ. ջանք տարած է նաև գիրքեր ստանալու, ինչպէս կը տեղեկանանք իր կամ ուրիշներու կողմէ գրուած հետեւեալ յիշատակարաններէն։

Երբ, մի քանի տարի առաջ, Հռոմ էր գնացել իր հպիսկոպոսի հետ, որը հիմա՞ Լուովում է թաղուած, վերջինս այնտեղ Ս. Պատարագ էր մատուցել հայկական ծէսով³⁶։ Հերբեստի այս վկայութիւնը յիշատակում է նաև Պետրովիչը՝ մի ուրիշ կապակցութեամբ եւ իրաւամբ դանում, որ ակնարկուած հպիսկոպոսը հենց Սալմաստեցին է³⁷, բայց հաշուի չի առնում, որ «մի քանի տարի» տանելով կարելի է հասկանալ 2-3 տարի, կամ՝ 3-4 տարի, կամ էլ շատ-շատ՝ 5-6 տարի, բայց ոչ 16 տարի, ինչպէս լռելեայն համարում է ինքը՝ Պետրովիչը, որպէսզի կարողանայ տանել-կապել 1550 թուականի հետ։ Եւ սրանով մենք ժամանակակից Հերբեստի վկայութեամբ տեղեկութիւն ենք ստանում այն մասին, որ Սալմաստեցին մահացել է 1560-ական թուականների սկզբի տարիներին եւ թաղուել է Լուովում։ Բացի այդ՝ Հերբեստի «մի քանի տարի առաջ» խօսքը միաժամանակ վկայութիւնն է այն ուղիւորութեան, որ Սալմաստեցին պիտի կատարած լինէր Լուովից դէպի Հռոմ, որպէսզի պապից յանձնարարագիր ստանար՝ Ֆերդինանդ կայսրին ներկայանալու համար։

Այժմ վերադառնալով, որ, ժամանակին, որոշ աղբիւրներում Սալմաստեցու մահուան որպէս տարեթիւ ցոյց տրուած 1551 եւ 1552 թուականների մասին խօսելիս, գրել էինք. «Մի շարք փաստեր մեզ ասում են, թէ յիշեալ քուականներին Սահփանոս Սալմաստեցին չէր մահացել Լուովում եւ չէր թաղուել այնտեղ»³⁸։ Այդ հին հաւատամանն են վերաբերում վերեւում մեր ներկայացրած փաստերն ու փաստարկները։

(Մնացեալը յաջորդիւ)

Թ. Ս. ԱՆԱՍԵԱՆ

36 B. Herbest, «Wypisanie drogi», MLUR, vol. 5, str. 4-8.

37 PChA p. 148.

38 Էջմիածին, 1956, № 11-12, էջ 76։

1. — «Ստացայ զսուրբ գիրքս [Տօնապատճառ] և հառա վերստին նորոգել և կազմել ի թվին Հայոց մեծաց Ռէշ. (1624)».
— Թիշտ. Ժէ. Դարի, Բ., էջ 124: — Զեռ. Երեւանի, թիւ 2039:

2. — «Ես ... Արիստակէս լոկ վարդապետ յորջորջեալ, ցանկացաւ եղէ Աստուածաշունչ սուրբ գրոցս և ելի ի խնդիր մին մեծաւ փափաքանաւք, մինչ զի հինգ և վեց ամ ի պանդըխտութեան շրջեցայ վասն սորա, միթէ լիցի զի հասից փափագանաց իմոց: Ապա ... յորժամ գնացաք ի Տիգրանակերտ, կամաւքն Աստուծոյ պատահացմեղ Աստուածաշունչ սուրբ գիրքս մեծագին և բազմածախ: Ստացայ զսա ի վայելումն անձին իմոյ և առաջնորդ հոգւոյս իմոյ» [1624]. — Թիշտ. Ժէ. Դարի, Բ., էջ 134-5: Զեռ. Երեւանի, թիւ 180 (թկ. 1295):

3. — «Ես Արիստակէս վարդապետ հառա գրել զՍաղմոսի Մեկնիչս [Ն. Լամբրոնացւոյ] և եղի յիշատակ ինձ և ծնողաց իմոց, ի Հարբերդ մեծահաշակ ուխտն ի Ս. Աստուածածինն, ի վանքն Դատեմայ» [1628]. — Թիշտ. Ժէ. Դարի, Բ., թիւ 437: Զեռ. Երեւանի, թիւ 1017:

4. — «Ի թվականութեանս հայկազեան տուժարիս Ռէթ (1630) ... ոմն յերկրէն իարբերթու, անուանեալ Արիստակէս վարդապետ, ուսեալ և հմուտ եղեալ Հին և Նոր կտակարանաց, եկեալ ի մայրաքաղաքս Հալապ վասն Երուսաղէմ գնալոյ, և ժամանակ ինչ աստ կեցեալ քարոզէր զբանն Սր. Աւետարանի ի լսելիս հաւատացելոց: Եւ ... ետ գրել ինձ Աստուածատուր սարկաւազիս զսուրբ Պատմագիրքս և զԼուծմունս» (= Ժողովածու). — Թիշտ. Ժէ. Դարի, Բ., էջ 375: Զեռ. Երեւանի, թիւ 2619:

5. — «Ես Արիստակէս վարդապետ իարբերդցի ի վաղուց հետէ հաւաքաւորս մինչայի դատանել զԵրկոտասան Մարգարէից Մեկնութիւնն, զոր արարեալ է հաւանելն սրբոյն վարդանայ վարդապետին: Արդ ... ստացա ... և հառա վերստին նորոգել և կազմել զսա Սեբաստացի մահապատի Մեկնոն Դպրի և քարտաղարի ... ի թվին Հայոց Ռէթ ... ».

Թիշտ. Ժէ. Դարի, Բ., էջ 500: Զեռ. Երեւանի, թիւ 1269:

6. — Ստացած է 1641ին, Մեկնութիւն Գործոց Առաքելոց՝ Գէորգ Սկեռացիի Դրիչ՝ իրաւասուր Երէց, ի Կ. Պոլիս. — Զեռ. Երեւանի, թիւ 1365:

Խարբերդցին գրած է ոտանաւորներու. ծանօթ են հետեւեալները:

1. — Ոտանաւոր ասացեալ Արիստակէս վարդապետի. — 1624 — Եկայք եղբայրք ամենեքեան, պատմեմ ձեզ բան յոյժ ողբական ... — Թիշտ. Ժէ. Դարի, Բ., էջ 125-128:

2. — Ոտանաւոր և ներբողեան վասն օրհնեալ քաղաքին Եղեասոյ. — Զեռ. Երեւանի, թիւ 1771, էջ 327բ-330բ. — Յասմիկ Սահակեան, Ուշ Միջնադարի Հայ Բանաստեղծութիւնը, 1975, Երեւան, էջ 61:

3. — Ոտանաւոր վասն Ծաղկատկին, Արիստակէս խնդրող բանի, ոտանաւոր շարադրեցի, վասն ծաղկատկի յունի, որ եղև մեր ժամանակի, որ ըստ հայկազան տուժարին, հազար լուծսուն լերեք թվին ... [= 1634]

Զեռ. Ս. Թ. թիւ 205, թկ. 1667: Յուցակ Զեռ. Ս. Յակոբեանց, Ա., էջ 575: Նոյնը կը գտնուի նաև Ս. Թ. թիւ 1456 ձեռագրին մէջ, ընդամենը 115 տուն, որոնցմէ ընտրովի առնուած 13 տունը կարելի է տեսնել Ս. Յակոբեանց Զեռ. Ճուլակի Ե. Հատորին մէջ (էջ 153):

Ասոնցմէ զատ Երեւանի Մատենադարանին թիւ 3680 Ժողովածուին մէջ կայ գրուածք մը սա խորագրով. «Հարցմունք Թոխաթեցի Պաղտատարի և Պատասխանիք Արիստակիսի իարբերդացւոյ»:

Արիստակէս վրդ. իարբերդցին ուրիշ համոնուն վարդապետներու հետ չփոթուած է յաճախ, և սխալմամբ իրեն վերադրուած են գրական այլևայլ գործեր ևս: Նման չփոթութիւններ յաճախագէտ են արդարև մեր միջնադարեան գրողներուն պարագային, և կը ներկայացնեն բանասիրական կնճառահարցերու կարկառուն դէպ մը:

Ն. ԱՐՔ. ՄՈՎԱԿԱՆ

ԱՐՔՈՒՆԻ ԶԱՐՏԱՐԱՊԵՏ ԱՐԱՊՈՂԼՈՒ ՄԵԼԻՏՈՆ ԽԱԼՖԱՅԻ ՄԱՀՈՒԱՆ ՄԱՍԻՆ ՆՈՐԱՅԱՅՏ ՎԱԽԵՐԱԳԻՐ ՄԸ

Վերջերս պատահով թիւնը ունեցանք աչքէ անցընելու Պալատու Ս. Հրեշտակապետ Եկեղեցւոյ վազֆիլէյի հնագոյն տաճարը, որ կը կրէ 829 թուահամարը: Նախ կ'ընենք անոր նկարագրութիւնը:

Մեծութիւնն է $20 \times 30 \times 5$ մմ.: Ունի վարդապոյն կաշեպատ ընտիր կողք, որուն վրայի և տակի կափարիչներուն վրայ ոսկեզօծ գեղեցիկ զարդեր կան: Իսկ քովի եզերքն ալ հակառակ կողմէն դրոշմուած է ՄԵԼԻՏՈՆ անունը կրող կնիք մը, որ կամ կազմարարին և կամ Արապօղլույի պէտք է որ պատկանի: Որովհետեւ վերջինս այս անունով ալ ծանօթ է: Արդարեւ Գրիգոր Շղթայակիր պատրիարք (1669-1749), իր նամակներուն մէջ զինքը առաւելապէս այս անունով յիշած է: Տոմարին գրուած վերջին էջին թուահամարն է 578: Թուղթը ընտիր և հաստ է:

Սկիզբը 12 էջ պարապ է: 13րդ էջին վրայ գրի առնուած է հայաստան թուրքերէն յառաջաբան մը, որուն հայերէն խորագիրն է «Վառապարտութիւն առաջիկայ գործոյ, Աստուծով հանդերձ»:

Յառաջաբանին մէջ կը յայտնուի թէ՛ նախապէս այսպիսի «Բիւրիւկ» մը գոյութիւն ունեցած է: Սակայն կարգ մը տպերասան իշխաններ, այսինքն եկեղեցւոյ միւլթէվէլիներ կամ եկեղեցականներ, անոր պարապ էջերը փրցուցեր են, որուն հետեանքով դիմացի կողմի գրուած էջերն ալ ինկեր և անյայտացեր են: Մնացեալը, մեծ դժուարութեամբ և տքնութեամբ, ներկայ տոմարին մէջ ընդօրինակած է նշանաւոր լեզուաբան ու պատմաբան Գէորգ Դպիր Պալատեցի (1737-1812): Յետոյ գրիչը մասնաւորապէս կը խնդրէ որպէս զի սոյն տոմարին մէջ «վազֆիլէյ»ներէն զատ ուրիշ բան մը չգրուի, զոր օրինակ վարձքերը, խնամքները, տուրքերը, եկամուտները, ծախքերը եւայլն:

Տոմարին 567-574րդ էջերուն վրայ կը տեսնուի այրուբնական անուանացանկ մը, որ ըստ գրչութեան Գէորգ Դպիրի կողմէ պատրաստուած է: Նոյնպէս 576-577րդ էջերուն վրայ ալ 1834ին գրի առնուած նոր ցանկ մը կայ:

574րդ էջին վրայ գտնուող յիշատակագրութեան մը յայտնի կը գտնուի թէ սոյն տոմարը կը պարտինք բազմերախտ Գէորգ Դպիր Տէր Յովնանէսեանի: Բնագիրը հետեւեալն է. —

«Օրինակեալ նորոգեալ զիբա ըստ կարի ուղղալի կարգաւորութեամբ յամի Տեառն 1786, յեղանակի ամսուան նորին, ՚ի միւրեմբիութեան Գերապետի Սահակ Ամիրային, եւ հոգեւեւ ընկերակցի նորին Խոնա Սիմեոնին. գրչութեամբ Գեորգայ ուրումն անարժանի, որչոյ Տեառն Յովնանու. Բահանայի ՚ի Տէր հանգուցելոյ: Օրհնեալ է Սուրբ Նորոգութիւնն»:

Տոմարը կը պարունակէ յիշեալ եկեղեցւոյ վազրձ եղած շէնքերուն և գետիններուն «հեօնք»ներուն բնագրերը:

Յառաջաբանէն ետք կը գտնուի Արքունի շարտարապետ կեսորացի Արապօղլու Մահմետի Մելիտոն Խալֆայի յաջորդը եղող Մարտիրոսի որդի Կիւրեղի ընտրութեան «հեօնք»ը, որ կը կրէ Հիմարէթի 19 Ռամազան 1158 թուականը (Փրկչական 4/15 Հոկտ. 1745): Նախ սոյն թուականէն խաբուելով կարծեցինք թէ Մելիտոն Խալֆա այդ միջոցներուն մահացած է: Բայց երբ «հեօնք»ները մի առ մի աչքէ անցուցինք, տեսանք թէ Արապօղլու առաջին անգամ 21 Սէֆէր 1139ին (Փրկչական 1727ին) և վերջին անգամ ալ 1155 տարւոյ Ռէճէպ տմոյ սկիզբը (1742 Յուլիսին) միւլթէվէլի ըլլալով յիշատակուած է: Այս պարագան ալ 1742ին մահացած ըլլալը կը հաստատէ:

Իսկ իր յաջորդը՝ Մարտիրոսի որդի Կիրակոս, Հիմնադրի 1156 թուին երկու անգամ, իսկ 1157ին ալ անգամ մը միւթէվէլիի Ըլլալով յիշուած է: Այս պարագան կը փաստէ թէ վերջինս միւթէվէլիու թեան «Հիւնեքի Շեքիյե» կոչուած դատական պաշտօնագիրը դեռ չստացած, շուրջ երկու կամ երեք տարի միւթէվէլիու թեան կատարած է:

Թէ՛ ներկայ վաւերացիրը և թէ՛ միւս «հեօնեք»ները մահուընէ զատ կարեւորութիւն ունին նաև Մելիտոն Խալֆայի ցարդ անծանօթ հողոյ յիշուող եկեղեցւոյ 1727-1742 թուականներու միջև միւթէվէլիի Ըլլալը յայտնելուն, ինչպէս նաև հօրը անուան Մարգիս Ըլլալը երեան գալուն պատճառաւ:

Այժմ կը ներկայացնենք «հեօնեք»ին և սկիզբի թուրքերէն բացատրականին բնագիրը:

Տէֆթէր օլտուր քի, իշպու 1158 (Արաբական թուանշանով) սէնէսի, մահի ումէզանի շէրիֆին զուրբէսինտէ միւպաշիրէթ օլունմուշտուր:

Պալադտա սուրը Հրեշտակապետ եկեղեցինին վագֆիլէլէրինի պէյան իսէր:

Պունտան էվվէլ պապամրգ մահտեսի Մելտոն հիւննէթի շէրիէ իլէ միւթէվէլի օլուպ, պիլ էմրի Խիւտա կէչինտիքտէ, հիւննէթի թէվլիսթի պուլունմատը, տէֆա ճէմլյէթ օլունուպ մէշվէրէթլէ մահտեսի Կիրեղի ճայիզ կնօրիւփ. վարքի միւնէտտէտէն Իսթանպուլ էֆէնտիսինտէն հիւննէթ իսթէտիքտէ, պիզ տախի պապամրգ դարաֆրնտան վէրեալէթլէ ֆէրաղէթ էթտիք մահտեսի Կիրեղ իւզէրինէ. վէ հիւննէթ օլունտու. օլ հիւննէթին սուրէթի տախի պու տուր:

Մահմիյէլի Իսթանպուլտա Պալադ գափուսի տախիլինտէ էլ հանն Իսայ մահալէսինտէ վագֆ Իստրաթի քէնիսէսի տիմէրլէ մարուֆէր մէշնի քէլիսասընըն վագֆրնա վէ դալլէսի նիւզիւ վէ տալարըզնա մէվգուֆէ մէնագիլէ վէ ֆիւզարայէ մէվգուֆէ նիւզուտէ պէր մուհիպի հիւննէթ պիլ ֆիլի միւթէվէլի օլան Արապօղլու Դրիգոր վէլէտի Մելտոն նամէրմէնի մէնիսի շէրի խաղիյր լագըմիթ թէվգիյրտէրաֆիի հագէս սիֆր Կիրեղ վէլէտի Մար-

տիրոս նամ էրմէնի միւվաճէհէսինտէ քէլիսայի մէզքիուրէնին փափաս վէ ճէմալէթինտէն պաշ փափաս Գարրէլ վէլէտի Նուրսէս. վէ Գագէր քէշիշ վէլէտի Սիմաւօն. վէ Միթրիֆան վէլէտի Գագէր. վէ Ալիքսան վէլէտի Արթին. վէ Մարգար վէլէտի Առաքիլ. վէ Սիմաւօն վէլէտի Մարկոս. վէ Պալի վէլէտի Նիկողոս. վէ Վարդան քէշիշ վէլէտի Վարդան. վէ Արրահամ վէլէտի Էլմաս. վէ Մանուէլ վէլէտի Երեմիա. վէ Աստուր վէլէտի Մօսէս. վէ Օվանէս վէլէտի Մուրատ. վէ Ովանէս վէլէտի Առաքիլ. վէ Տէվլէթ վէլէտի Արրահամ էրմէնիլէր հագըր օլտուրը հալտէ, թագրիքի քէլամ, վէ թապիրի անիլ մէրամ իյտիւպ, պէնիմ ումուրի վագֆի կնօրմէքտէ աճղիմ օլուպ, վէ իշպու մէրգում Կիրեղ էրմէնի պալատէ մէզքիուրէ քէլիսա փափասլէրինին վէ ճէմալէթինին էմին վէ միւթարլէրի օլմաղլէ, թէվլիյէթի մէզքիուրէի մէսֆուր Կիրեղ (էջ՝ 16) էրմէնիէ ֆէրաղ վէ դասրի եւտ իյլէտիկիմտէ, օլ տախի պէր վէնի մուհարրէր թէվլիյէթի մէզքիուրէի գապուլ. վէ խիտմէթի լագըմէսին քէմա եւնպէզի էտայէ թասհիւտ իյլէտի տիտիքտէ, զըպպէթ թաստիզիշ շէրի պալատէ իսիմէրի մէզքիուր էրմէնիլէր ֆարիղի մէրգում Արապ օղլու Դրիգոր էրմէնի միւթէվէլի նասպ օլունան Կիրեղ ումուրի թէվլիյէթտէ միւսպէնէթ իչին նագըր նասպ վէ թային իյլէտիքլէրինտէ, օլ տախի նէզարէթի մէզքիուրէի գապուլ. վէ մէրասիմինի էտայէ թասհիւտ իթմէկին մա հիւվէլ վագֆ պիդ դալապ քէթպ օլունտի ֆիթ թասի աշէրի մին շէրի ումէզանիլ միւպարէք Սէնէ սէման վէ խամսին վէ միյէ վէ էլֆ (որ է 1158 ումէզանի 19):

Շահիտլէր

Էլհանն Մուսղաֆայ Արապ գատէ:

Էսսէյիտ Մուսղաֆայ ուհալի:

Էսսէյիտ Ալի պին Մուսղաֆայ:

Արապ էլհանն Անմէտ:

վէ դայրի հիւմ

Վերագրեալ վաւերագրին սկիզբի բացատրականէն յայտնի կը դառնայ թէ Արապօղլու Մելիտոն Խալֆայի մահուընէ ետք, իր միւթէվէլիու թեան հեօնեքը չէ գտնուած և խորհրդակցութեամբ Մահտեսի

1980 Նոյեմբ. - Դեկտ.

կիրևիզը այս պաշտօնին յարմար դաստառած է: Ան ալ անհրաժեշտ հեռոքից ստանալու համար դատարան դիմած է: Ասոր նախընտրանքը որդիներն ալ իրենց վրայ Արապօղլուի որդիներն ալ իրենց հօրը կողմէ միւթէվէլիեթիւնը փոխանորդագրով Մահմետի կիրևիզի փոխանցած են:

Իսկ հեռոքից ըստանալու թան մէջ ալ կ'ըսուի թէ եկեղեցւոյ օրինաւոր միւթէվէլիին եղող Արապօղլու Մելիտինի որդին Գրիգոր, Ս. Հրեշտակապետ եկեղեցւոյ կրօնական և աշխարհական վարիչներու ներկայութեան, այս պաշտօնը կատարելու անկարող ըլլալը գրաւոր կերպով յայտնելով, միւթէվէլիեթիւնը Մարտիրոսի սրդի կ'ընդունանցած է:

Այս առթիւ նշենք թէ Արապօղլու Գրիգոր 18 Ռէպիլ Խալի 1171ին (Փետրվարի 1758ին) դարձեալ միւթէվէլի ըլլալով յիշուած է:

Վերջապահութեան, Արապօղլու Մելիտինի Խալի Խալի մասին կ'ըսենք հաղորդել երկու նոր տեղեկութիւններ, զորո մեր նախորդ գրութեան մէջ չէինք յիշատակած:

Ասոնցմէ առաջինը Սամաթիայ Սուրբ Գեորգ եկեղեցւոյ 1722ի վերաշինութեան միջոցին, Կոստ Պատրիարքի կողմէ աւելցուած Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ շինութեան արտօնութիւնը Մելիտինի Խալի կողմէ առնուած ըլլալն է, ըստ Հաննա Վրդ. ի(*):

Իսկ երկրորդը՝ Պալատու Ս. Հրեշտակապետ եկեղեցւոյ 1729ի վերակառուցման առին վարպետներուն վրայ աւելան հսկողութիւն կատարելը, շինութեան ծախքերուն համար 160 զրուշ նուիրելը և նոյն նպատակաւ 1000 զրուշ ալ փոխ առած ըլլալն է(**):

Գ. ԲԱՄՊՈՒՔՃԵԱՆ

Ստանպուլ, 1980

(*) «Պատմութիւն երեստեղի», Պոլիս, 1734, էջ 170-171:

(**) Մեղքոն - Ասատուր, «Երեմիայեան Պատմութիւն Պալատու Ս. Հրեշտակապետ եկեղեցւոյ», Պոլիս, 1931, էջ 91:

ՄԱՐՏԻՐՈՍ ՊԱՏՐԻԱՐԷ ՊՈՒՐՍԱՅԻ

(1420? - 1501)

Մարտիրոս Պատրիարք Պուրսացի ծնած է ԺԵ. Դարու առաջին քառորդին վերջերս: Ծնողքը կը կոչուէին Սահիանոս և Հռիփսիմէ: Իր կեանքի նախնական շրջանին վերաբերեալ տեղեկութիւններ չեն յայտնուած, բայց որոշ է թէ ան ուսեալ և կարող անձ մըն էր:

Ձինքը իրրե կ'սկսուի կը տեսնենք 1450ին, երբ սկսած է օրինակել մէկ Բարսղիբը՝ Գր. Տաթևացիի, Թորգոմայ Վանքին մէջ, զոր ապա շարունակած է ի Պուրսա (1460), և աւարտած է Երուսաղէմ, 1462ին. — Զեռ. Երեանի, Թ. 5223:

Երկրորդ գրքի մը — Մաշտոց Զեռնադրութեան — ընդօրինակութիւնը կատարած է Պուրսայի մէջ, 1457ին. — Զեռ. Ս. Յ., Թիւ 2928:

Յաջորդ տարին, 1458ին, սկսած է օրինակել և ծաղկել մագաղաթեայ շքեղ Աւետարան մը, «Ղարիպ» վիճակով, զոր աւարտած է Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց Վանքին մէջ, 1464ին: Այդ թանկարժէք Աւետարանը այժմ կը կրէ Ս. Յակոբեանց Զեռագրատան 2567 (12) թիւը:

Այդ միջոցին Երուսաղէմի մէջ կը ծաղկէ նաև Յայամաուրք մը, ընդօրինակուած 1463ին, Մարգարէ արեղայի ձեռքով: Սոյն Յայամաուրքը կը պահուի այժմ Սրբոց Յակոբեանց Զեռագրատան մէջ, 27 թիւին ներքև:

Մարտիրոս Եպիսկոպոս ռԵր կը գրանդէր իրրե «Ղարիպ», չէ յիշուած, բայց նկատելով որ ան 1463ին Երուսաղէմ կը դառնար եղիպտոսէն (Տես Սիւր, 1966, էջ 538-539), կրնայ ենթադրուի որ Աւետարանի ընդօրինակութեան սկսած էր եղիպտոսի մէջ:

Մարտիրոս Եպիսկոպոս Պուրսացիին իր կեանքին վերջին տասնամեակին պաշտօնավարած է իրրե Երուսաղէմի Հայոց Պատրիարք (1491-1501), Վրթանէս արեղայ, որ Երուսաղէմի մէջ Դանձարան մը օրինակած է 1497ին, կը յիշէ զինքը այդ թուականին իրրե Եպիսկոպոս Երուսաղէմի (Տես Ա. Արք. Սիւրմէնեան, Յուլիոս Հայրէն Զեռագրաց Հալէպի, 1935, էջ 151):

Իր պատրիարքութեան սկիզբը տեղի կ'ունենայ Ամերիկայի գիւտը Քրիստափոր Դոլոմպոսի կողմէ (1492):

Ն. ԱՐՔ.

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

“ԳԻՐՔ ԴԻԻՑԱԶՆԵՐԳՈՒԹԵԱՆՑ”

Հեղինակ՝ ԿՈՍՏԱՆ ԶԱՐԵԱՆ.

Տպ. Ս. Յակոբեանց, 1978, էջ՝ 277:

Բարձր է ու պատուարեր տեղը՝ զոր կը գրաւէ Կոստան Զարեան ժամանակակից հայ գրականութեան մէջ: «Գիրք Դիւցազներգութեանց» ծաւալուն քերթադադիրքը վերջին բերքն է բեղմնաւոր ու երկարատեւ կեանքով մը բախտաւորուած հեղինակին:

Կ. Զարեան մէկն է արդի մեր գրականութեան սակաւթիւ մշակներէն, որոնք մեծ իրազօրծումներ, ուշադրաւ նուաճումներ արձանագրած ըլլան թէ՛ մեր բանաստեղծութեան և թէ՛ մեր արձակ գրականութեան կալուածներէն ներս: Իր տաղանդը հաւասար յաջողութեամբ փայլած է գրական զոյգ սեւերուն ալ մէջ:

Զարեան իր պատկառելի այս հատորին առաջին էջերը գրի առած է 1940-ական թուականներուն, երբ կը գտնուէր Լիբանան: Հայրենիք ներգաղթելէն ետքն է որ ամբողջացուցած է զայն, աւելի ճիշդը՝ իր այժմու ձեւն ու ծաւալը տուած է անոր: Կ'ընենք այս հաստատումը, հիմնուելով հեղինակին ծանօթ անձերու հաղորդումին վրայ, թէ ան առիթը չէ ունեցած վերջնական վերանայումի ենթարկելու իր ձեռագիրը, որ շատ հաւանաբար աւելի ճոխ ու յարգարեալ պիտի դուրս գար մամուլէն: Իր մահէն ետք, իր բնատանկան պարագաները ձեռագիրը պահուած են Վեհ. Հայրապետին մօտ, որ իր նախաձեռնութեամբ և անձնական ծախքովը հրատարակել տուաւ զայն Ս. Աթոռոյս Ս. Յակոբեանց Տպարանէն:

Կ. Զարեան մեր ընթերցող հասարակութեան ծանօթ է առաւելաբար «Նաւը Լերան Վրայ» հոյակերտ ու տարածուն վէպով, որուն Հայրենիքէն ներս կատարուած երկրորդ տպագրութեան առիթով ընդունած փոփոխութիւնները, յապաւումներն ու յաւելումները ատենին

մեծ աղմուկ հանեցին գրական մեր շրջանակներուն մէջ:

Զարեանի գլխաւոր ճիշդ եղած է, իր այս հատորի պարագային, առասպելախառն հէքիաթներու մշուշէն դուրս բերել ու կենդանի գոյնեղ կարկառել Դիւցազներք մեր ժողովուրդին: Անահիտ, Վահագն, Հայկ Դիւցազն, Մհեր և ուրիշներ իր մաքի պրիսմակէն դուրս եկած են իրենց նկարագրի ցայտուն յատկանշերով, իրենց կարելի առաքինութիւններուն ինչպէս անխուսափելի մեղքերուն գումարովը ծանրաբեռն:

Կ. Զարեան ունի պատկերաւոր ու հիւթեղ ոճ ու բառակերտումի զմայլելի նարբ: Ստուար իր այս հատորին մէջ շկայ էջ մը ուր կարելի չըլլայ հանդիպիլ նորակերտ բառերու կամ ոճային ճարպիկ դարձուածքներու, որոնք իր քերթողական արուեստը կ'ընեն վսեմ ու ինքնադրոշմ:

Պէտք է խոստովանիլ սակայն թէ Զարեանի այս քերթողագիրքը քիչ մը «դժուարամար» է միջին ընթերցողին համար: «Մէկ չունչով կարդացուելիք» կամ «բարձի գիրք» մը չէ «Գիրք Դիւցազներգութեանց»ը: Իմացական վայելքներու և տղնուական տպրումներու ճաշակը ունեցողները միայն պիտի յօժարէին կէս ճամբան շինալ, մինչև վերջին էջը պահել խայծը իրենց ընթերցասիրութեան: Անոնք որոնք այս հատորին մէջ փնտռել կը փնտռեն պերճախոհ վսեմութիւնը Վարուժանի քերթուածներուն կամ հեղասահ կշռոյթը, գաշնաթաւ գնացքը Թէքէ-հանի հնչեակներուն՝ յուսախար պիտի ըլլան: Միւս կողմէ, Զարեանի էջերը չունին մթութիւնն ու ծանրութիւնը, նոյնիսկ տարտամութիւնը Մխիթարեան Հայրենի ստորագրուած նոյնատեղ ստեղծագործութիւններուն: Չեն խոցելի նոյնպէս մեղքերովը Ինտրայի «Նոճեստան»ին:

Իր տարիներուն մեծագոյն մասը անցուցած ըլլալով Եւրոպայի մէջ, իր գործը, քերթողութիւնը մանաւանդ, կնիքին տակն է տպաւորապաշտ արուեստին, որը մեր գրական կալուածէն ներս ընկալելու, հայկական կաղապարովը ձեւաւորելու ճիշդ

Սոֆիա, 21 Յուլիս 1980

Ամենապատիւ Տ. Սղիբեկ Ս. Արքեպիսկոպոս Տերտերեան
Պատրիարք Հայոց Սրուսաղեմի

Ամենապատիւ Սրբազան Հայր,

Ինչպես յայտնի է Ձեր բարձր Սրբազնութեան, անցեալները Պուլկարիա այցելութեան
առթիւ այցելեցիք նաեւ Փլովաիվ քաղաքը ու հիւր եղաք տեղւոյն մեսրապոլիս Ն. Ս. Վառլամի:
Ն. Սրբազնութիւն մեսրապոլիս Վառլամ խօսակցութեան ընթացքին յայտնեց, թէ
Ռիլայի պատմական վանքին մէջ կը պահպանուի հայ յեղափոխականի մը գրութիւնը՝ Ֆո-
տոպատկերներ:

Յիշեալ Ֆոտոպատկերներ յանձնուեցաւ մեզի:

Ներքին կը ներկայացնենք սոյն Ֆոտոպատկերներ մէկ օրինակը: Յայտնի կ'ըլլայ, որ
«Ռաւի» կեղծանունով հայ յեղափոխական մը հինգ ամիս մնացած է Ռիլայի վանքը:
Կ'ենթադրենք թէ յիշեալ յեղափոխականը 1906ին եկած է Պուլկարիա ու Ռիլայի վանքին
մէջ գործակցած Մակեդոնական յեղափոխականներու հետ:

1908ի Թրակիան սահմանադրութեան յետոյ Թրակիան կառավարութեան կողմէ նոյն
առթիւ Պուլկար կառավարութեան մօտ կ'աշտարուած դիւանագիտական դիմումներու վրայ
արգիլուած է Հայ եւ Մակեդոնացի յեղափոխականներու աշխատանքը Պուլկարիայի հո-
ղամասի վրայ:

Կը կարծենք թէ ներքին Ֆոտոպատկերներ պահպանումը Հայկական բանգարանի մէջ
առիթ կը ստեղծէ Հայ գիտնականներու կողմէ խոր ուսումնասիրութեան ու պատմական
դիպքներու պարզաբանութեան:

Խորին յարգանքներով՝

Ամենապատիւ

ՕՆՆԻԿ ԱՍԼԱՆԵԱՆ

գերագանց յաջողութեամբ իրագործած է
Ջարեան, շնորհիւ իր իւրացումի դժայ-
լելի կարողութեան և բարձր տաղանդին:

Արագութեան մեր դարը գոյցէ դժ-
ուար հանդուրժէ սակայն կեդրոնական
միակ դադարի մը շուրջ դարձող, կար-
ծես միաձոյլ կադապարի մը մէջ թափ-
ուած նման մեծածառաւ քերթողագիրք մը:

Ըսինք թէ նորակերտ բառերու սքան-
չելի ու անմրցելի վարպետ է Ջարեան:
Ստորեւ կու տանք նմոյշներ իր սրամիտ
խօսքի դարձուածքներէն, ուշադրաւ փո-
խարհութիւններէն և նորագիտ պատ-
կերներէն, ինքնակերտ բառերու փունջի
մը հետ միատեղ. —

Բանանք, պատահար, 73րդ էջը,
հոն գտնելու համար հրահաս, բիւրասա-
ղարք, ոսկեմանգալ, բոցակրակ, բիւրեղա-
քել և կարկաչազոռ բառերը:

Փոխարհութիւններէն տանք, քանի
մը էջերու վրայէն միայն, հետեւեալները.

— Հայաստանի մկանները, լուսալեցուն մար-
մին, ոսկիաեղ առասպել, ակօս հերկող
արեւ, հորիզոնների ոսկեղը, ծաղկեց եր-
կինքը, հրացայ մեղեդի, կանաչ կրակ,
դեղին հառաչ և մարգարիտակերտ փայլեր:
Բարդուղիմէնէն՝ փայլակնակայծակ, ա-
հագնաղողորդ, խորհրդախառնափ և այլն:

Պատկերներէն՝ լացող ծաղիկ, կարմիր
ծայն, լերկ ողկոյզ, հրացայ գոմէ, հուրէ
դանակ և շատ ուրիշներ:

Ընել համապարփակ վերլուծումը Կ.
Ջարեանի վիթխարի վառարկին՝ դուրս
կը մնայ ծիրէն ու ծրագրէն մեր այս հա-
մեսաւ ու հպանցիկ նկատողութիւններուն:

Ջարեանի այս հատորը կարեւոր ներ-
դրում մըն է արդի հայ գրականութեան
մէջ: Մէկը՝ դարերը արհամարհող հաս-
տարուն կաղնիներէն, հազուադէպօրէն
բուսնող գրական մեր անդաստանէն ներս:

Գ. ՃԱՐՏԱՐ

25 Մարտ 1907 թ.

Յուստով եկայ, յուսահատ վերադառնում եմ (Հայերէն)

Ստորագրութիւնը անընթեռնելի

Քաղաքացիական ռուսերէնէ

Սուրբ Իվան Ռիլիսկիի վանքը 6 ամիս ապրելէ յետոյ ստիպուած եմ ցաւ ի սիրտ եւ արցունքոտ աչքերով հեռանալ: Վաղը անսփոփ հրաժեշտ պիտի տամ վանքին յաւէտ լուռ պարիսպներուն, հպարտ, դէպի երկնային կապոյտը խոյացող խաչին: Մնաք բարով, իմ չիրականացած յոյսերուն լուռ վկաններ ... մնացէք բարով:

Վաղը կը մեկնիմ, թերեւս ծեղ երբեք չտեսնեմ, բայց գիտցէք, որ այս վանքին մէջ ամէն ինչ մօտ է իմ սրտին, ամէն ինչ թանկ, հակառակ որ այստեղ ամէն ինչ օտար էր, բայց վեց ամսուան ընթացքին ընտելացայ բոլորին, այնպէս որ այս միջավայրը ինձ հարազատ է ու սիրելի, որովհետեւ իմ ամենաթշուառ հայրենիքին պատկերն է ...

Երբեմն մութ գիշերով, ծանր խոհերէ ձերբազատուած, պատշգամէն դիտած եմ աշխարհի սոյն հրաշագեղ վայրը: Խորհրդաւոր կիսախաւարին մէջ ընկղմած վանքի անոյշ եւ խաղաղ բունը ու զգացած բնութեան շունչը: Օ, որքան խորհրդաւոր եւ վեհ էին այդ պահերը ..., բոլորովին անծնատուր եղած երազանքներու: Բայց յանկարծ, ըստ զուգորդութեան օրէնքներուն, դաւաճան խոհ մը ուրիշ պատկեր մըն է սփռած առջեւ ...: Հեռաւոր, արցունքի եւ արիւնի, Հայաստան կոչուած երկրի բարձր ժայռերն ու հպարտ զագաթները, ուր միայն արքայական արծիւներն են բոյն շինողները, հինաւուրց վանքի մը աւերակները: Այդ տեսիլը սարսուռով կը պատէ հոգիս: Տխրութիւն եւ խաւար կը տիրէ այդ աւերակներուն վրայ, ուր մահը ամէն ինչ առած է իր սառն սաւանիւններէ ու գիշերուան խաւարին մէջ բուրբը չար ոգիներու նման կ'ողբան իրենց չարագուշակ ըղաւանքը ... Այնտեղ, երկրի վրայ իջնողը խաւարն է ու մահը ...:

Ծանր մղձաւանջէն զարթնած, դարձեալ կը զգամ Ռիլայի խաղաղ գիշերուայ շնորհալիութիւնը:

Ոհ, Աստուած իմ, ոհ, սուրբ Ազատութիւն, ինչո՞ւ լքեցիր իմ թշուառ Հայրենիքս, ինչո՞ւ ամէն ինչ թողիք բռնակալի քմահաճոյքին ...

Երկար ծմրան գիշերներ, իմ մօայլ խոհերուս ծինապատ գիշերներ: Զինք օդին մէջ կը խայտան ծինի փաթիլներ, միայն Ռիլսկա գետակի հոսքը եւ անոր առեղծուածային երգն են որ կը խանգարեն ծինապատ գիշերուայ անդորրը: Կ'երգէ գետակը ... գուցէ անցեալի թրքական վայրագութիւններուն կամ քրճալիներու արշաւանքներուն համար, կամ ժողովրդի պաշտպան հայդուկներու, պուլկար հերոսներու քաջագործութիւններու գովերգը ... չեմ գիտեր, բայց այդ վսեմ երգը հարազատ է իմ սրտին:

Խցիկիս ճրագը մարած, պատուհանին մօտ նստած կ'ունկնդրեմ քամիին վայրի մուռնչը ... Օ՛, ինչպիսի թշուառութիւններու մասին կը պատմէ քամին ... Իր սոսկալի մռնչիւնը կը յիշեցնէ իմ քոյրերու եւ եղբայրներու արիւնախառն արցունքները, կը զգամ անոնց մեծ վիշտը:

Մնաս բարով, վանահայր, քո հայրական հոգատարութիւնը եւ սիրալիր վերաբերմունքը դէպի վտարանդիս երեք չպիտի մոռացուի: Տարիներ պիտի անցնին, եթէ օր մը իրականանայ մեր երազանքը՝ ազատ Հայաստանը, անոր աշուղները գիւղէ գիւղ թափառելով իրենց քաջաց գովքը երգելու, անպայման պիտի յիշատակեն եւ Խոսիփ վարդապետը: Իսկ եթէ հայութեան վիճակուած է մահ, ես՝ իմ ժողովրդիս վերջին գաւազնը, գէնքը ձեռքիս փառապանծ մահով գոհունել առաջ, վերջին պահուն, ժպիւղ դէմքիս պիտի ըսեմ. — Մնաս բարով եւ դուն, ազնուական վանահայր Խոսիփ ...

Մնացէք բարով, սրբավայր, վանահայր եւ վանականներ, ես կը մեկնիմ ուրախ նախազգացումով, որ շուտով պիտի մեռնիմ, իսկ դուք, աշխարհիս այս չքնաղ անկիւնը դեռ երկար պիտի ապրիք: Ես հետս պիտի տանիմ հիանալի յիշատակներ:

«ՍԻՈՆ» Ի ԼՈՒՍԱԲԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ՅԻՍՈՒՆ ՏԱՐԻ ԱՌԱՋ

Պէյթ-Հանինայէն, Տիար Յ. Աղապէկ-
եան կը հարցնէ. —

Գիտենք թէ Հայց. եկեղեցին Տաղա-
ւար կամ այլ կարեւոր տօներուն համար
սահմանած է պահեցողութեան շրջանները
ի՞նչ բացատրութիւն կրնաք տալ սակայն
Ս. Սարգսի, եղիական և Ս. Յակոբայ
չարաթապահներուն, քանի որ յիշեալ
երեք սուրբերու յիշատակի օրերը հրա-
մայլած տօներ չեն մեր Օրացոյցի մէջ:

Նախ յայտնենք հարցասէր ազգայի-
նին թէ Ս. Սարգսի անունով պահք չունի
գոյութիւն մեր Տօնացոյցին մէջ: Այդ-
պէս է կոչուած ժողովուրդին կողմէ, ո-
րովհետեւ կը գրաւէ Ս. Սարգսի տօնովը
փակուող եօթնեակը, իրականութեան մէջ
ան կը կոչուի Առաքաւորաց պահք, որ
հաստատուած է Ս. Լուսաւորչի կողմէ,
իբր նախապատրաստութիւն Մեծ Պահոց:
Եղիա մարգարէն կը հանդիսանայ մարգա-
րէից դասուն ամենէն կարկառուն գէմքը:
Բաց աստի, Յինանց երկարատե ուտիքի
շրջանէն ետք, բնական է որ մեր եկեղե-
ցին սահմանէր պահեցողութեան եօթնեակ
մը: Գալով Ս. Յակոբայ չարաթապահին,
ան կը կենայ կեդրոնը Յիսնակի միջոցին,
որ կը գրաւէ Ս. Ծննդեան տօնը կանխող
եօթը եօթնեակները: Փոխանակ, Արեւել-
եան այլ եկեղեցիներու նման, ամբողջ
այդ շրջանը պահք բռնելու, մեր եկեղե-
ցին բաւականացած է այդ շրջանին առա-
ջին, միջին և վերջին եօթնեակներու
պահեցողութեամբ: Անոնք կը կոչուին,
յաջորդաբար, Յիսնակի (և ոչ՝ Յիսնակաց,
ինչպէս ոմանք կը գրեն), Ս. Յակոբայ
(Սուրբին տօնը կանխող օրերուն իյնա-
լուն) և Ս. Մենդեան, որ մէկ օրով երկար
է միւսներէն, ճրագաւորացը չհաչուած:

ԴՈՒՐԵԱՆ ՅՈՐԵԼԵԱՆԻ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԵԱՆ ԱՐԴԻՒՆՔԸ

Դուրեան Յոբելեանի առթիւ Ամերի-
կայի մէջ կատարուած հանգանակութեան
գումարը, 1393 Սթերլին և 10 շիլին,
ստացուեցաւ Ս. Աթոռոյ Տեղապահ Սըր-
բաղանին (Մեսրոպ Արքեպս. Նշանեան —
Մ. Խ.) կողմէ — որ նոյն տունն Ատենա-
պետն է Յոբելինական կեդր. Յանձնաժո-
ղովոյ — Հ. Բ. Ը. Միութեան Փարիզի
կեդր. վարչութեան միջոցաւ: Սոյն գու-
մարը փոխանցուեցաւ Յոբելին. կեդր.
Յանձնաժողովին, իր նպատակին յատ-
կացուելու համար: Սիոնի ընթերցողները
գիտեն թէ հանգանակութեան արդիւնք
մօտ 3613,15 Սթերլինի գումարը պիտի
յատկացուի Ս. Աթոռոյ Տնօրէն Ժողովի
կողմէ ի յիշատակ Դուրեան Յոբելեանին
նուիրուած գետնին վրայ (որ Մեծ Արտ
կոչուած թանկարժէք հողին մէջ է) հա-
ստեալներ անշարժ կալուած մը շինելու,
և ասոր արդիւնքով, արդէն կազմեալ
կանոնագրի մը համեմատ՝ հայերէն գիր-
քեր տպելու:

Այս շէնքի շինութեան համար Յանձ-
նախումբ մը արդէն ընտրուած և գործի
սկսած է:

Այս առթիւ Յոբելին. կեդր. Յանձ-
նաժողովը խորին շնորհակալութիւն կը
յայտնէ Ամերիկայի հայութեան՝ իր նուիր-
ատուութեան համար, և Ամերիկայի Յո-
բելինական Յանձնաժողովին՝ իր օգնե-
րուն համար:

(«Սիոն», 1930. Դ. Տարի, Դեկտեմբեր,

թիւ 12, էջ 399 - 400:)

Միակ խնդրանքս է ձեր աղօթքներուն մէջ լմոռնաք յիշել Հայաստանի համար ան-
յոյս կռուող եւ հերոսի մահով զոհուող հայդուկները: Աղօթեցէք, թերեւ Աստուած լսէ...

28 Մարտ 1907

ՔէՈՏՈՐ ՓԱՆՈՎ
(Ռաշիտ)

Ռիլայի վանք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱԹՍՈՒՆԱՄԵԱԿ

Նոյեմբերի վերջաւորութեան, Մայր Հայրենիքը տօնեց իր հաստատման վաթսու-
նամեակը, շքեղ հանդիսաւորութեամբ: Ուրախ այս առիթով, Ազգիս Վեհափառ Կաթո-
ղիկոսը հրաւիրած էր Ամենապատիւ Տ. Եղիշէ Ս. Պատրիարքը եւ Դերշ. Տ. Շահէ
Արքեպիսկոպոսը մասնակցելու համար հանդիսութիւններուն: Վեհափառ Հայրապետէն
ստացուած էր հետեւեալ հեռագիրը. —

Ամենապատիւ Տ. Սղիշէ Պատրիարք

Պատրիարքարան Հայոց

Երուսաղեմ — Իսրայէլ

Հայաստանի Վարսուճամեակի ուրախ առիթով, Մայր Աթոռ իս մեզ տեղի պիտի ու-
նենան եկեղեցական արարողութիւններ եւ հանդիսութիւններ՝ նուիրուած մեր Մայր Հայ-
րենիքի վերածնունդին եւ հոգեւոր-մեակութային ծաղկումին: Եղբայրական սիրով կը
հրաւիրեմք Ձեզ եւ Շահէ Արքեպիսկոպոսին Ս. Էջմիածին Նոյեմբեր 20-ից Դեկտեմբեր 2,
մեր կողմին մասնակցելու տօնակատութեանց: Հանեցե՛ք մեզ հեռագրել Ձեր մասնակցու-
թեան մասին: Սիրոյ ողջունելու՝

ՎԱԶԳԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ

Ամենապատիւ Սրբազան Պատրիարքը եւ Դերշ. Տ. Շահէ Արքեպիսկոպոս պա-
տասխանեցին հրաւերին եւ հեռագրաւ յայտնեցին իրենց ուրախութիւնը. իրենց պատ-
րաստակամութեան հետ, երթալու Ս. Էջմիածին, հակառակ Պատրիարք Սրբազանի ան-
ցուցած հիւանդութեան եւ ապաքինումի վիճակին, որու մէջ կը գտնուէր տակաւին:

Սակայն Դիւտ Խաչի նախատօնակին, երբ Ամենապատիւ Պատրիարք Սրբազանը
կը նախագահէր թափօրին եւ Խաչափայտը ձեռին կ'իջնէր Դիւտ Խաչի Սրբատեղին,
ոտքը դարձուց: Յաջորդ օրերուն, ոտքին ցաւը սաստկացաւ եւ անհրաժեշտ եղաւ գահի
մէջ առնել զայն: Հակառակ անակնկալ միջադէպին, Պատրիարք Սրբազանը որոշած էր
երթալ Մայր Հայրենիք, տօնակատարելու համար Վաթսուճամեակը: Եւ ամէն պատ-
րաստութիւն տեսաւ: Սակայն, վերջին օրերուն, բժիշկը արգելք հանդիսացաւ համար-
դութեան: Պատրիարք Սրբազանը յայտնեց իր զգացումները հետեւեալ հեռագրով. —

Նորին Սրբութիւն

Տ. Վազգէն Կաթողիկոս

Էջմիածին

Պատրաստուած էինք տօնախմբելու Հայաստանի Վարսուճամեակը սիրով եւ խանդա-
վառութեամբ: Սակայն Ֆիզիկական մեր վիճակը չարտօնեց: Կր յայտնենք մեր հիացումը
մեր եկրի վաթսուն տարիներու հերոսական իրազօրձումներուն եւ մեր ժողովուրդի վե-
րածնունդին՝ խաղաղութեան եւ բարգաւաճումի պայմաններու մէջ: Ներկայացուցե՛ք մեր
ենդհաւորութիւնները մեր Կառավարութեան: Յարգանքով՝

ԵՂԻՇԷ ՊԱՏՐԻԱՐԺ

Հանդիսութիւններէն նտք, Վեհափառ Հայրապետէն ստացուեցաւ հետեւեալ հեռագիրը. —

Ամենապատիւ Տ. Սղիբեկ Պատրիարք

Երուսաղէմ

Հայաստանի Վարսունամեակի մեր հանդիսութիւնները տեղի ունեցան խանդավառ մրցուոյթի մեջ գրեթէ մեր բոլոր բեմերու մասնակցութեամբ: Ձեր հեռագիրը կարդացինք մեր հանդիսաւոր նիստին եւ փոխանցեցինք Ձեր բարի մտադրանքները մեր հայրենի Կառավարութեան, որ ընդունեցաւ մասնաւոր գնահատանքով: Ձեզի մեր եղբայրական սէրը եւ ողջոյնը, սպասելով բարի լուրեր Ս. Աթոռէյ: Արդեօք մօտ ապագային շնորհի կը բերե՞ք Մայր Աթոռ, Ձեր եւ Շանեկ Սրբազանի այցելութեամբ: Կարօտով պիտի սպասենք Ձեզ:

Սիրոյ ողջագուրմամբ՝

Վ. ԱԶԳԵՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ

«Սիրոն» կը միանայ Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հօր, յայտնելու համար որդիական իր հարազատ զգացումները վերածաղկած Հայաստանին եւ Հայրենիքի անխորշ սէրը: Եւ իր իրաւունքները, որուն իրազօրծումները փառք եւ պարծանքն են ամբողջ հայութեան:

Հայաստանի Հանրապետութեան հաստատման 60ամեակի առիթով, իմքազրուածութիւնս պատշաճ նկատեց յաջորդ էջին դնել «Հայ Բանաստեղծութեան Իշխանին» Մայր Հայաստանի ծօնած գողորիկ բերթուածը, անոր ալ Անգլերէն թարգմանութիւնը, յաջողապէս կատարուած մեր բանաստեղծ — աշխատակից Մ. Մանուկեանի կողմէ, կցելով հանդիպակաց էջին:



Դ Ո Ւ Ն Մ Ե Ր Ի Ն Ն Ե Ս

ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

Եւ արդ նորէն ես ֆազի, իբր առաքւան մէջ կեանքիս,
Կը մըտածեմ ուժգնութեամբ եւ ուժովցած կը զգամ զիս.
Դուն մերինն ես ... կը բաւէ այսֆանը լոկ. միայն դուն,
Դուն մերինն ես ... եւ ահա անջրպէսէն դարեւուն


Կը զգամ դառնալը ինծի եւ միանալը ֆեզմով
Իմ պապերուս հոգիին որ համակ ուժ ու կորով
Եւ փափկութիւն եւ լոյս է՝ շինուած ֆեզմէ, ֆու հուէդ,
Քու ջինջ օդէդ ու ջուրէդ, հոգի՛ն որմէ շիթ մը գէթ


Երակներուս մէջ կ'ապրէր, գաղտնածածուկ կ'ապրէ՛ր դեռ
Եւ ըզֆեզ գալ գրկելու զիս արժանի դեռ կ'ընէր ...:
Դո՛ւն մերինն ես ...: Թէեւ ֆեզ մենէ խըլած ըլլային,
Քեզ կոխոտած ու ֆամած, եւ ա՛լ կըմախֆ ցաւագին՝

Քու մերկ լեռներդ ու դաշտերդ ըլլային լոկ մեզ թողած,
Բայց դուն մերինն ես, կ'ըսեմ ու կը կրկնեմ երկիւղած,
Եւ զերթ տղայ մը յիւող իր նրբանածն հեռաւոր՝
Հրնուանք մ'ու դող մը յանկարծ կը լեցնէ սիրքս այսօր ...:

1914

ՎԱՀԱՆ ԹԷՔԷԵԱՆ





TO ARMENIA

Now again I think of you, — as in days when I was young —,
Vehemently, and I feel that I am growing strong;
O, you are ours, Armenia, and that alone is enough,
You are ours ... and behold from the centuries far off


I feel the return to me, and I feel linked through you
To my ancestors' soul, all vigour, light, tenderness, due
To your soil, and to you, to your pure water and air,
To your soul, a breath of which still in my heart I bear,

And in my blood secretly it lived and made me worthy
To come to you, to embrace and caress you heartily.
You are ours ...: And although they have seized you from us,
And have trampled over you, squeezed you and left you thus

A doleful skeleton of your mountains and plains bare,
Yet you are ours, I say so and ardently repeat it here;
And as a youth rememb'ring his betrothed love far away,
A sudden joy and shiver fills my heart and makes it sway.

Trans. M. MANOUKIAN

VAHAN TEKEYAN



ԱՄԵՆԱՊԱՏԻՒ Տ. ԵՂԻՇԷ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐԻՒ

ԱՆՀԱՆԳՍՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՎԻՐԱԲՈՒԺԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

Հ Ա Ղ Ո Ր Դ Ա Դ Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն

Օգոստոսի 21ին, Հինգշաբթի օր, իր գահակալութեան 20րդ տարեդարձի օրը, Ամեն. Ս. Պատրիարք Հայրը Հասասա հիւանդանոցի մէջ վիրաբուժական գործողութեան մը ենթարկուեցաւ իր գանկին վրայ: Փոքր երակի մը պայթումին հետեւանքով, արեան կուտակում մը գանկի ոսկորին եւ ուղեղի մաշկին միջեւ ճնշել սկսած էր արդէն ուղեղին վրայ եւ անոր հետեւանքով՝ ծանրացած էր ոտքերուն քալուածքը: Վիրաբուժական միջամտութեամբ, պարպուեցաւ արեան կուտակումը եւ Պատրիարք Սրբազանը վերագտաւ իր բնականոն քալուածքը:

Օգոստոսի 28ին, Նորին Ամենապատուութիւնը հիւանդանոցէն վերադարձաւ Ս. Աթոռ: Ս. Յակոբեանց Միաբանութիւնը, Ժառանգաւորները եւ ժողովուրդը ուրախութեամբ դիմաւորեցին Պատրիարք Սրբազանի վերադարձը (այդ պահուն կը ղօղանջէր զանգը Մայրավանքին մինչ Վանքի դրան կը զենուէր ոչխար) եւ թափօրով առաջնորդեցին զայն Ս. Յակոբեանց Մայր Տաճարը, ուր կատարելէ ետք իր ուխտը Ս. Գլխադրի մատրան մէջ, բարձրացաւ Պատրիարքարան «Օրհնեցէք զՏէր» շարականի երգեցողութեամբ: Պատրիարքարանի մուտքին, զինք դիմաւորեց Ամեն. Տ. Շնորհք Պատրիարքը, որ հիւրաբար կը գտնուէր երուսաղէմ: Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպիսկոպոսնեց Նորին Ամենապատուութեան վերադարձը, փառաբանելով զԱստուած, որ վերականգնեց առողջութիւնը արժանաւոր Գահակալին Ս. Յակոբեանց Առաքելական Աթոռին, որուն պատասխանեց Ս. Պատրիարքը, ինք եւս գոհութիւն յայտնելով Տիրոջ, որ հաճած էր իրեն վերադարձ ի գլուխ իր պաշտօնին:

ԴԻՒԱՆ Ս. ԱԹՈՌՈՅ

Այս առթիւ, Վեհափառ Հայրապետէն ստացուած է հետեւեալ հեռագիրը. —

Ամենապատու. Տ. Եղիշէ Պատրիարք
Երուսաղէմ

Խոր ցաւով իմացանք Ձեր անհանգստութեան եւ վիրաբուժական գործողութեան մասին: Ձեզի բուժափոյք լիակատար ապաքինում՝ ի մխիթարութիւն մեզ եւ յառաւել պայծառութիւն մեր Մայր Եկեղեցւոյ: Ձեզի արեւոտ տարիներ, նորանոր պայծառ իրագործումներով:

Եղբայրական ողջագուրումով
ՎԱԶԳԷՆ ԿԼԹՈՂԻԿՈՍ

Հեռագիրներ եւ նամակներ ստացուեցան Պոլսոյ Պատրիարքարանէն, Հայ Բարեգործական Ընդհ. Միութենէն, թեմակալ Առաջնորդներէ, հայ բազմաթիւ հոգեւորականներէ եւ սրտցաւ բարեկամներէ:

Այժմ Նորին Ամենապատուութիւնը ամբողջութեամբ վերագտած իր առողջութիւնը՝ նուիրուած է իր գործին, կանոնաւորաբար դասաւանդելով նաեւ Սարկաւագաց եւ Ուրարակիրներու դասարաններուն:

Այս առթիւ «Սիոն» կը մաղթէ սիրեցեալ Գահակալին Ս. Աթոռոյս՝ երկար կեանք, առողջ եւ պայծառ օրերով առլցուն:

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԵՆ

Հ Ե Ռ Ա Գ Ի Բ

Երևանում, 30 Սեպտ. 1980

Ն. Ս. Օժուրին Ս. Ս. Վազգեն Ա.

Կարողիկոս Ամենայն Հայոց

Ս. Էջմիածին

Ձեր Գանակալության եւ Օժման Բան-
հինգամեակի բարեբասիկ առիթով, Ձեր
Սուրբ Օժութեան կը ներկայացնեմք Մեր, Ս.
Յակոբեանց Միաբանության եւ համայնքին
սրտով եւ յարգալից շնորհաւորութիւննե-
րը, երկուր եւ բազում կեանքի եւ Մայր Ա-
թոռոյ ու Մայր Հայրենիքի անսասնու-
թեան ու բարգաւաճման մղղրանքներով:

ԵՂԻՇԷ ԱՐՔԵՊՍ. ՏԵՐՏԷՐԵԱՆ

Պատրիարք Հայ Երևանում

Ե Կ Ե Ղ Ե Յ Ա Կ Ա Ն Ք - Բ Ե Մ Ա Կ Ա Ն Ք

● Ուր. 4 Յուլիս. — Նախատեսակին ի Ս.
Յակոբ Նախագահեց Լուսարարապետ Գերշ. Տ.
Հայրիկ Արքեպս. Ասլանեան:

● Շր. 5 Յուլիս. — Ս. Երկաստան առաջնորդ
Քրիստոսի եւ Պողոսի՝ երեսասաներով առաջնորդ:
Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի
Ս. Պողոսի վերնամասերէն մէջ: Ժամարարն
էր Արթէրիսինէն հիւրաբար Ս. Աթոռ Ժամանած
Հոգշ. Տ. Տաթև Մ. Վրդ. Ղարիպեան:

● Կիր. 6 Յուլիս. — Բարեկենդան վարդավառի
պահոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս.
Յարութիւն, մեր վերնամասերէն մէջ: Ժամա-
րարն էր Հոգշ. Տ. Համբարձում Արդ. Քէշիշեան:

● Ուր. 11 Յուլիս. — Նախատեսակը պաշ-
տուեցաւ Մայր Տաճարին կից՝ Ս. Էջմիածին
մատրան մէջ: Նախագահութեամբ Լուսարա-
րապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպս.:

● Շր. 12 Յուլիս. — Յիշատակ Տաղանակին:
Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Էջմիածին
մատրան մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Սեան
Վրդ. Ղարիպեան:

— Այլակերպութեան մեծահանգէս Նախա-
տեսակը պաշտուեցաւ Մայր Տաճարին մէջ:
Հանդիսապետն էր Գերշ. Տ. Շահէ Արքեպս.:
Յետոյ «Տէր ողորմեա» երգուեցաւ ծննդի
հատարուեցաւ Տեառնեղբոր Գահակալութեան
նուիրուած հանդիսութիւն:

— Գերշ. Սրբազանը Նախագահեց Նախ. Ի-
րիկնադէմին Մայր Տաճարին մէջ պաշտուած
«Եկեցէ՛ք» եւ Հսկման կարգերուն:

● Կիր. 13 Յուլիս. — ՎԱՐԴԱՎԱՌ (Տոն Այլա-
կերպութեան Տեառն): Օրուան հանդիսաւոր Ս.
Պատարագը՝ Մայր Տաճարի Աւագ Սեղանին
վրայ մատոյց Գերշ. Տ. Շահէ Արքեպս. Անէմ-
եան եւ քարոզեց Պայծառակերպութեան մեծ
խորհուրդին շուրջ:

— Գերշ. Տ. Նորայր Արքեպս. Նախագահեց
Կէսօրէ ետք, Ս. Յակոբեանց Մայր Տաճարին
մէջ կատարուած «Անդաստանին»:

● Բշ. 14 Յուլիս. — Յիշատակ մեռելոց: Ս.
Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի
Աւագ Սեղանին վրայ: Պատարագեց եւ քարո-
զեց Հոգշ. Տ. Ոսկի Արդ. Որդիքեան, բնաբան
ունենալով օրուան ծաշու Աւետարանէն. «Զի
օրէնքն ի ձեռն Մովսիսի տուան, շնորհք եւ
նշմարտութիւն ի ձեռն Տիմոթէի Քրիստոսի ե-
ղեն» (Յովհ. Ա. 17): Ս. Պատարագէն ետք կա-
տարուեցաւ հոգեհանգստեան պաշտօն, Նա-
խագահութեամբ Գերշ. Տ. Շահէ Արքեպս.:

● Ուր. 18 Յուլիս. — Նախատեսակին ի Ս.
Յակոբ Նախագահեց Գերշ. Տ. Շահէ Արքեպս.:

● Շր. 19 Յուլիս. — Ս. Թաղեօսի առաջնորդ
մերոյ եւ Սանդիսոյ կուսին: Ս. Պատարագը մա-
տուցուեցաւ ի Ս. Դիւանդիր: Ժամարարն էր
Հոգշ. Տ. Վանիկ Արդ. Մանկասարեան:

● Կիր. 20 Յուլիս. — Ս. Պատարագը մա-
տուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամաս
մատրան մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Բար-
սեղ Արդ. Գալէմտեան:

● Շր. 26 Յուլիս. — Որդոց եւ բոռանց Ս.
Գրիգորի Լուսաւորչին: Ս. Պատարագը մատուց-
ուեցաւ ի Ս. Դիւանդիր: Ժամարարն էր Հոգշ.
Տ. Անուշաւան Վրդ. Զղջանեան:

● Կիր. 27 Յուլիս. — Ս. Պատարագը մա-
տուցուեցաւ ի Ս. Յակոբ: Պատարագեց եւ քա-
րոզեց Շիքակոյէն հիւրաբար Ս. Աթոռ Ժամա-
նած Հոգշ. Տ. Ժիրայր Վրդ. Թաշճեան:

● Շր. 2 Օգոստ. — Ս. Պատարագը մա-
տուցուեցաւ ի Ս. Դիւանդիր: Ժամարարն էր
Բանաստայէն հիւրաբար Ս. Աթոռ Ժամանած
Արթ. Տ. Սեղարք Բշ. Խաչատուրեան:

● Կիր. 3 Օգոստ. — Ս. Պատարագը մատու-
ցուեցաւ ի Ս. Յարութիւն, վերնամասն մեր
մատրան մէջ: Ժամարարն էր, Մարտիրոսայէն
հիւրաբար Ս. Աթոռ Ժամանած Հոգշ. Տ. Վաչէ
Մ. Վրդ. Իգնատիոսեան:

● Շր. 9 Օգոստ. — Հայրապետաց Արամասի եւ
Կիրիլի: Արեւմտեան Եւրոպայի Թեմին Կաթո-
ղիկոսական Պատուիրակ եւ Փարիզի Առաջնորդ-
Գերշ. Տ. Սերովքէ Արքեպս. Մանուկեան հան-
դիսաւոր Ս. Պատարագ մատոյց Ս. Դիւանդիր
մատրան մէջ եւ քարոզեց, բնաբան ունենա-
լով «Եթէ մոռացայք զքեզ, Երուսաղէմ...
հանրածանօթ համարը Սաղմոսին»:

● Կիր. 10 Օգոստ. — Թուրքիոյ Հայոց Պատերիարք Ամեն. Տ. Շնորհք Արքեպս. Գալուստեան հանդիսաւոր Ս. Պատարագ մատոյց Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ և քարոզեց, բնարան ունենալով Վերինատան ի մէջ մեր յայտնեցաւ: Սոյն քարոզը լոյս տեսաւ Ամսագրի Բայառիկ թիւին մէջ (Յուլիս-Նոյեմբեր 1980): Քարոզէն ետք, Ամեն. Տ. Եղիշէ Ս. Պատերիարքը նախագահեց Ս. Աթոռոյս հանգուցեալ Պատերիարքաց հոգիներուն համար կատարուած հանգստեան պաշտամունքին:

● Եր. 16 Օգոստ. — Ս. Իրիգորի Աստուածաբանի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխագիր: Ժամարարն էր Ս. Էջմիածնէն հիւրարար Ս. Աթոռ ժամանած Արթ. Տ. Մովսէս Քնյ. Ղաղարեան: Ս. Պատարագէն ետք կատարուեցաւ տաղապարհներէ յիւրաքանչիւր արարողութիւնը, նախագահութեամբ Ամեն. Տ. Շնորհք Ս. Պատերիարք Նոր:

● Կիր. 17 Օգոստ. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Երեւոյթիւն, մեր վերնատան մատրան մէջ: Ժամարարն էր Ս. Էջմիածնէն հիւրարար Ս. Աթոռ ժամանած Արթ. Տ. Յովհաննէս Աւագ Քնյ. Մարութեան: Քարոզեց Ամեն. Տ. Շնորհք Պատերիարքը, բնարան ունենալով Վերինատանէն օր ըստ օրէ զվերկոթիւն Տեառն: Սաղմոսին խօսքը:

● Բշ. 18 Օգոստ. — Այսօր սկսաւ Ս. Կոյսի վերափոխման տունը կանխող ամէնօրեայ հանդիսաւոր Ս. Պատարագներու մատուցումը, Գեթեմանիի Ս. Աստուածածնայ Տաճարին մէջ, Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ:

● Եր. 23 Օգոստ. — Եփեսոսի Ս. Ժողովոյն (431): Սոյն սրբավայրին մէջ պատարագեց Նոգչ. Տ. Սեան վրդ. Ղարիպեան:

● Կիր. 24 Օգոստ. — Բարկեղդան Ս. Աստուածածնի պահոց: Սոյն սրբավայրին մէջ պատարագեց Նոգչ. Տ. Բարսեղ Արք. Գալէմտէրեան:

● Ուր. 29 Օգոստ. — Նախատունակը պաշտուեցաւ Մայր Տաճարին Կից Ս. Էջմիածին մատրան մէջ: Հանդիսապետն էր Ամեն. Տ. Շնորհք Պատերիարք Կ. Պալոյս:

● Եր. 30 Օգոստ. — Տօ՛ւ Շողկապի Ս. Էջմիածնի: Ս. Պատարագը մատուցուեցաւ Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ ի Ս. Աստուածածնին: Ժամարարն էր Նոգչ. Տ. Վանիկ Արք. Մանկասարեան:

— Կէսօրէ ետք, Ամեն. Տ. Շնորհք Պատերիարք Գալուստեանի գլխաւորութեամբ, Միարանու թիւնը ինքնաշարժերով իջաւ Գեթեմանի ձոր ու շրջապատով մուտք գործեց Ս. Աստուածածնայ Տաճար, ուր պաշտուեցան երեկոյեան ժամերգութիւնն ու նախատունակը:

— Ամենապատիւ Սրբաղանը նախագահեց նաև իրիկնագէթին նոյն Տաճարին մէջ կատարուած Վեհացէի և Հսկման արարողութիւններուն, որոնց յաջորդեցին գիշերային և առաւօտեան ժամերգութիւններ, տեւելով մինչև ժամը 10:

● Կիր. 31 Օգոստ. — Վերնօթնոյթն Ս. Աստուածածնի: Առաւօտուն, Ամեն. Տ. Շնորհք Պատերիարքի գլխաւորութեամբ, Միարանու թիւնը ինքնաշարժերով իջաւ Գեթեմանի ձոր ու շրջապատով մուտք գործեց Ս. Աստուածածնայ Տաճար, ուր Ամեն. Սրբաղանը մատուց օրուն հանդիսաւոր Ս. Պատարագը Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ և քարոզեց, բնարան ունենալով Վերինատանէն անձն իմ զՏէր և Ս. Պատարագէն ետք նախագահեց Վերնօթնոյթն:

— Կէսօրէ ետք, Մայր Տաճարին մէջ պաշտուեցաւ Վերնօթնոյթն և նախատունակին նախագահեց Նոգչ. Տ. Սեան վրդ.:

● Բշ. 1 Սեպտ. — Յիւսէփ մեռնոց: Մայր Տաճարի Ս. Գլխագիր մատրան մէջ պատարագեց Նոգչ. Տ. Ասպետ վրդ. Պալեան: Ապա, Գերշ. Տ. Կիրեղ Եպս. Գարիկեանի նախագահութեամբ, կատարուեցան հոգեանդատեան կարգեր, նախ Մայր Տաճարին մէջ և ապա Կոթիք՝ Երանաշնորհ Տ. Կիրեղ Պատերիարք Նոր շիրմին վրայ:

● Կիր. 7 Սեպտ. — Ը. օր Վերափոխման: Այսօրուն Ս. Պատարագը, որ կը մատուցուէր Ս. Երեւոյթիւն Տաճարի վերնատան Երախաւոր Ս. Աստուածածնին մատրան մէջ, մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Աստուածածնայ խորանին վրայ, Ժառանգաւոր սաներ շարթուան մը արձակուրդով Գալիլիոյ և Տիրերիոյ տնօրինական սրբավայրերու այցելութեան մեկնած ըլլալուն: Ըստ սովորութեան, պատարագիչն էր Ս. Երեւոյթիւն Տաճարի Տեառն Նոգչ. Տ. Վաղարշ վրդ. Խաչատուրեան:

● Բշ. 8 Սեպտ. — Նախատունակին ի Սուրբ Եղիշէ նախագահեց Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպս.:

● Գշ. 9 Սեպտ. — Ս. Յովակիմայ եւ Աննայի: Ս. Պատարագ մատուցուեցաւ Գեթեմանիի Ս. Աստուածածնայ Տաճարին մէջ, Հայր Յովակիմ Գերեզմանին վրայ: Ըստ սովորութեան, պատարագիչն էր Տաճարին Տեառն Նոգչ. Տ. Հայրիկ Արք. Գալայանեան:

● Եր. 12 Սեպտ. — Ս. Թովմայի առաքելոյն: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխագիր: Ժամարարն էր Նոգչ. Տ. Վանիկ Արքեպս.:

— Նախատունակին ի Ս. Եղիշէ նախագահեց Գերշ. Տ. Տանէ Արքեպս.:

● Կիր. 14 Սեպտ. — Գիւր Գոսի Ս. Աստուածածնի: Ս. Պատարագը մատուցուեցաւ Գեթեմանիի Ս. Աստուածածնայ Տաճարին մէջ, Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ: Ժամարարն էր Նոգչ. Տ. Անուշահ և Վրդ. Ջոզանեան: Երթ ուղարձի թափօրները գլխաւորեց Գերշ. Տ. Կիրեղ Եպս. Գարիկեան:

● Եր. 20 Սեպտ. — Նիկիոյ Ս. Ժողովոյն (325): Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխագիր: Ժամարարն էր Նոգչ. Տ. Ասպետ վրդ. Պալեան:

— Նախատունակին ի Ս. Եղիշէ նախագահեց Գերշ. Տ. Տանէ Արքեպս.:

● Կիր. 21 Սեպտ. — Ծնունդ Ս. Աստուածածնի և Բաբեկեկեղան Ս. Խաչի պահոց: Առաւօտունը Գերշ. Տ. Շահէ Արքեպս. Անէմեանի գլխաւորութեամբ, Միաբան Հայրեր ինքնաշարժերով մեկնեցան Գեթեմեանի ծորր ու շէրաշափառի թափօրով մուտք գործեցին Ս. Աստուածածնայ Տաճար, ուր Տիրամօր Ս. Գերեզմանին լըլաօրուն հանդիսաւոր Ս. Պատարագը մատուցեց և Շնորհաւարդ պայծառացող զգաւաղան իշխանութեան մերոյ հայրապետին բնաբանով յարողեց Գերշ. Հանդիսապետ Սրբազանը:

● Եր. 27 Սեպտ. — Տոն եկեղեցւոյ ի նաւակա-
սիս Ս. Խաչին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ի
Ս. Գլխադիր: Ժամաբարն էր Հոգշ. Տ. Հայրիկ
Աբղ. Գալայնեան:

— Խաչվերացի մեծահանգույն նախատեսակը պաշտոնեցու է Ս. Յակոբը, նախագահու թեմաթը Լուսաբարար պետ Դեբը: Տ. Հայրիկ Արքեպոսի, որ ապա Ս. Խաչի մասունքը թափօրով փոխարկեց Անույ Սեդու:

— Դիշերաստիւն Մայր Տաճարին մէջ կատարուեցան եկեղեցւոր և Հոգևոր կարգեր: Հանդիսացան էր Գերշ. Տ. Կիւրեղ Եպս:

● Կիր. 28 Սեպտ. — ՏՈՒ ՎԵՐԱՑՄԱՆ ՍՐԵՈՑ
ԽԱՉԻՆ: Օրոշան հանդիսաւոր Ս. Պատարագը՝
Մայր Տաճարի Աւագ Սեղանին յորայ մատոյց
լուսաբարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպս.
Ասլանեանն Ս. Պատարագէն ետք, ընկալիալ
սովորութեան համաձայն, հոգեհանգստեան
պաշտօն կատարուեցաւ Մեկզոնեան բարերար
եղբարց հոգիներուն համար: Հանդիսապետն
էր Գերշ. Տ. Կիւրեղ Եպս. Գարիկեան:

— Կէսօրէ ետք, Մայր Տաճարին մէջ տեղի ունեցաւ Խաչմերացի մեծ Անդաստանը, ի ներկայութեան բազմաթիւ ժողովուրդի: Հանդիսացանք տնէ էր Լուսարարայի տն Սրբապանը՝ Գեղոս Տ. Հայրիկ Լուսարարի սկոպս:

● ԲՆ. 29 Սեպտ. — Յիսասակ մեռելոց: Մայր
Տաճարի Ս. Գլխադրի մատրան մէջ պատարա-
գեց չոգչ. Տ. Համբարձում Արդ. Քէչիչեան:
Ապա, Գերշ. Տ. Կիւրեղ Եպս. Գարիկեանի նա-
խադաշնութեամբ կատարուեցան հանգստեան
կարգեր, նախ Մայր Տաճարին մէջ և ապա
գաւիթը՝ Երանաշնորհ Տ. Կիւրեղ Պատրիարք
Հօր չիբմին վրայ:

● Եր. 4 Հոգիտ. — Տոն հաշի: Ս. Պատարագէ
մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր, Ժամարարն էր
Հոգի. Տ. Անուշաւան Վրդ. Զղ. Գանեան:

● Կիր. 5 Հոկտ. — Բարեկ. Վարդգայ Ս. Խաչի
պահոց: Ս. Գատարապետ մատուցո՞ւնչա՞ն Ս. Յա-
րութեան Տաճարի վերնատան մեր մատրան
մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Կոմիտաս Արղ.
Շէրպէթեան:

● Ուր. 10 Հոկտ. — Նախատեսակը պաշտուրւեցաւ Ղպտոց Ս. Գեորգի եկեղեցւոյ մէջ: Հանդիսապետն էր Գեորշ. Տ. Արիս եպս.:
Ս. Գեորգի գործարհն:

● ՇԲ. 11 Հոկտ. — Ս. Գեորգյայ զորավարն:

Ս. Պատարագը մատուցուեցաւ Ղպտոց Ս. Գէորգ լիանքի հեկղեցւոյ մէջ: Ժամաւարն էր շոգչ: Տ. Հայրիկ Արղ. Գալաշեան: Ս. Պատարագէն ետք, Միաբանութիւնը պատուաւարուեցաւ Ղպտոց շոգչ: Տեսչիւնն էր թ ու զարմի թափօրեանը գլխաւորեց Դերշ: Տ. Արիս Եպս.:

— Ահաօրէ Ետք, Դերշ. Տ. Արիս Եղգ. Շիր-
վանեանի գլխաւորութեամբ, Միաբանութիւնը
Հրաշափառով մուտք գործեց Ս. Յարութեան
Տաճար, ուր պաշտօնեցան ժամերգութիւնն ու
նախատօնակը՝ վերնատան մեր մատրան մէջ։
Ապա կատարուեցաւ Տնօրինական Սրբատեղ-
եաց այցելութեան հանդիսաւոր թափօր Տա-
ճարէն ներս։ Թափօրապետն էր Հոգշ. Տ. Անու-
շաւան Վրդ. Զղջանեան։

● Կիր. 12 Հոկտ. — Տօն Վարդգայ Ս. Խաչին: Գիշերային և առաւօտեան ժամերգութիւնները պաշտօնեցան ի Ս. Յարութիւն, մեր վերնա-մատրան մէջ: Ապա, Գերշ. Տ. Արիս Եպիսկ. մատոյց օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը՝ Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ և քարոզեց, քնարան Խնննալով օրուան ծաշու Աւետարա-նէն ևեւ ապա երեւեցի ի նշան Որդւոյ Մարդոյ յերկրին» (Մատթ. ԻԴ. 30): Գարողին ետք, Գերշ. Տ. Շահէ Արքեպս. նախագահեց Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Վաղգէն Ա. ի օծման 25օր տարեդարձի առթիւ կատարուած «Հայ-րապետական Մաղթանքին»:

● Շր. 18 Հոկտ. — Ս. 72 առաջերեսին Քրիստոսի: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի ներքին դռնից: Ս. Գէորգայ սեղանին վրայ: Ժամարան էր Հոգւ. Տ. Ասպետ Վրդ.:

● Գիր. 19 Հոկտ. — Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Կարապետի խորանին վրայ: Ժամարան էր Հոգի. Տ. Ոսկի Աթղ. Որդիքեան:

— Այսօր տեղի ունեցաւ Ռեմէիէի Ս. Գէորգի վանքի տարեկան ուխտապահացութիւնը: Պատարագեց շոգը. Տ. Անուշաւան վրդ. Ձղիանեան և քարոզեց Գերշ. Տ. Արիս Եղիսկ. Երվանեան, ներկայացնելով կեանքն ու մարտնչութեան մահը Ս. Գէորգի:

● Ուր. 24 Հոկտ. — Թարգմանչաց հանդի-
սասւոր նախատեսակին ի Ս. Յակոբ նախագա-
հեց Գերշ. Տ. Նորայր Արքեպս. Պօղոսեան:

● Ծր. 25 Հոկտ. — Ս. Թարգմանչաց վարդապետացն մեռոց (Տոն ազգային եւ եկեղեցական): Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարին մէջ, Աւագ Սեղանին վրայ: Պատարագեց եւ իբրեւ աղագրական մասն աղգէի մայր լեզուի կարեւորութեան մասին քարոզեց Հոգշ. Տ. Անդրեասեան իր Զ. Զգանեան: Ս Պատարագէն

հետք։ Ընկալվելով սովորութեան համաձայն,
կատարում ենք հոգեհանգստեան հանդիսաւոր
պաշտօն։ Վիւլպէնկեան բարերար գերզաս-
տանի նշնեցելոց հոգիներուն համար։ Հանդի-
սապետն էր Լուսաբարապետ Գերշ. Տ. Հայրիկ
Արքեպս. Ասլանեան։

1975-1976

● Կիր. 26 Հոկտ. — Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Զարուբին, վերնատան մեր մատրան մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Վանիկ Արդ. Մանկասարեան:

● Եր. 1 Նոյեմ. — Ս. Զորից Աւետարնչաց: 20րդ տարին ըլլալով, այսօրուան Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Գլխադիր, փոխան Ս. Զարուբեան գաւթի Ս. Յովհ. Աւետարանչի մատրան մէջ, Տաճարի նորոգութեանց պատճառաւ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Անուշաւան Վրդ. Զղջանեան:

● Կիր. 2 Նոյմ. — Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Աստուածածնայ խորանին վրայ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Սեան Վրդ. Ղարիպեան: Վէր ողորմեայի պահուն, ներկաներէն խնդրուեցաւ աղօթել ազատ արձակմանը համար Ս. Ուխտիս Միաբան Հոգշ. Տ. Մանուէլ Վրդ. Երկաթեանի, որ Պոլիս, իր պարագաներուն տուած այցելութեանէ վերադարձին, ձերբակալուած էր տեղական իշխանութեան կողմէ:

— Նոր երուսդէմի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ մէջ ևս մատուցուեցաւ Ս. Պատարագ: Պատարագից համայնքի նոր Հովիւը՝ Հոգշ. Տ. Հայրիկ Արդ. Գալայեան:

● Բշ. 3 Նոյեմ. — Ս. Յովսէփայ Աստուածհօրն: Ս. Պատարագ մատուցուեցաւ Գեթեմանի Ս. Աստուածածնայ Տաճարին մէջ, Հայր Յովսէփի գերեզմանին վրայ: Ժամարարն էր Արժ. Տ. Ներսէս Քչ. ձեպէնեան:

● Եր. 8 Նոյեմ. — Ս. Երկաստան վարդապետաց: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Գլխադրի մատրան մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Բարսեղ Արդ. Գալէմստերեան:

— Կէտօրէ ետք, Ամեն. Ս. Պատրիարք Հօր գլխաւորութեամբ, Միաբանութիւնը Վերաշափառուով մուտք գործեց Ս. Զարուբեան Տաճար: Ս. Գերեզմանի և Դիւտ Խաչի այրի ուխտերէն ետք, վերջնայ կից Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ մէջ պատուեցան ժամերգութիւն և նախատօնակ: Ապա կատարուեցաւ Տնօրինական Սրբատեղեաց այցելութեան հանդիսաւոր Թափօր Տաճարէն ներս: Թափօրապետն էր Հոգշ. Տ. Արժիար Արեղայ:

● Կիր. 9 Նոյեմ. — Դիւս Խաչի: Դիշերային և առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան և Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Լուսաւորիչ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Արժիար Արդ. Տէմիրճեան: Ապա կազմուեցաւ մեծահանդէս Թափօր, որ նախ իջաւ Դիւտ Խաչի այրը և յետոյ բարձրացաւ Ս. Գերեզմանի շրջափակը, երիցս դարձմամբ Սրբափայլին շուրջ: Հանդիսապետ Գերշ. Տ. Շահէ Սրբազան ամպոյտանի տակ և Կենաց Փայտի մասունքն ի ձեռին, կ'օրհնէր ներկայ ժողովուրդը: Պատանատեղւոյ կարգէն և Վաչի քո Քրիստոս շարականի երգեցողութենէն ետք, Թափօրը վերջացաւ Ս. Լուսաւորիչ Եկեղեցւոյ մէջ:

● Եր. 15 Նոյեմ. — Տօն Ամենայն Սրբոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Գլխադրի: Ժամարարն էր Հոգշ. Տ. Մեսրոպ Արդ. Մուշթեան:

● Կիր. 16 Նոյեմ. — Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Զարուբին, մեր վերնատան մատրան մէջ: Ժամարարն էր Արժ. Տ. Ներսէս Քչ. ձեպէնեան:

● Ուր. 21 Նոյեմ. — Ս. Հրեշտակապետաց նախատօնակը պաշտուեցաւ համանուն եկեղեցւոյ մէջ: Հանդիսապետն էր հիւրարար Ս. Աթոռ ժամանած Աւետարալիոյ Կաթ. Պատուիրակ Գերշ. Տ. Գարեգին Արքեպս. Գալանճեան:

● Եր. 22 Նոյեմ. — Տօն Ս. Հրեշտակապետաց Գարբիէի եւ Միխայէլի: Առաւօտեան ժամերգութիւնը պաշտուեցաւ և Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Հրեշտակապետ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Անուշաւան Վրդ. Զղջանեան: Ս. Պատարագէն ետք, ընկալեալ սովորութեան համաձայն, կատարուեցաւ հոգեհանգստեան պաշտօն: Ս. Աթոռոյս բարերարուհի Աղանի ձեպահիրճեանի և պարագայից հոգիներուն համար, նախագահութեամբ Գերշ. Տ. Գարեգին Սրբազանի: Յետոյ Միաբանութիւնը պատուաւորուեցաւ վանուց Տեսչարանին մէջ, Տեսուչ Հոգշ. Տ. Սեան Վրդ. Ղարիպեանի կողմէ:

● Կիր. 23 Նոյեմ. — Ս. Պատարագը մատուցուեցաւ դարձեալ Ս. Հրեշտակապետ: Պատարագեց, ըստ սովորութեան, վանուց Տեսուչը՝ Հոգշ. Տ. Սեան Վրդ. Ղարիպեան:

● Եր. 29 Նոյեմ. — Անդրէի եւ Փիլիպպոսի առաքելոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Գլխադրի: Ժամարարն էր Հոգշ. Տ. Ռուբէն Վրդ. Յովակիմեան:

● Կիր. 30 Նոյեմ. — Բարեկեցողան Յիսակի պահոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Զարուբին, մեր վերնատան մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Ասպետ Վրդ. Պալեան:

● Դշ. 3 Դեկտ. — Ընծայման հանդիսաւոր նախատօնակին Ս. Զակար նախագահից Գերաշնորհ Տ. Կիրեղ Եպիսկոպոս:

● Եշ. 4 Դեկտ. — Ընծայումն Ս. Աստուածման: Առաւօտեան, Գերշ. Տ. Կիրեղ Եպս. Գարեգին գլխաւորութեամբ, Միաբան Հայրեր ինքնաշարժերով մեկնեցան Գեթեմանի ձորը և Վերաշափառուով մուտք գործեցին Ս. Աստուածածնայ Տաճար, ուր Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը մատուց Գերշ. Հանդիսապետ Սրբազանը, որ ապա նախագահեց աղագային բարերար Կիւլապի Կիւլպէնիկեանի և Կիւլպէնիկեան գերդաստանի նշնեցելոց հոգւոյն կատարուած տարեկան հոգեհանգստեան պաշտամունքին:

● Եր. 6 Դեկտ. — Գրիգորի Սմանչեացոյցին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Գլխադրի: Ժամարարն էր Հոգշ. Տ. Կոմիտաս Արեղայ Շէրպէնճեան:

● Կիր. 7 Գեկտ. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ, Աւագ Թորանի վրայ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Համբարձում Արեղայ:

● Ուր. 12 Գեկտ. — Նախատօնակը պաշտուեցաւ ի Ս. Յակոբ: Հանդիսապետն էր Գեորգիոս Տ. Արիս Եպս. Շիրվանեան:

● Շր. 13 Գեկտ. — Առաք. Թաղէոսի եւ Բարդղիմէոսի: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Գլխադրի մատրան մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Բարսեղ Արք. Գալէմտէրեան:

● Կիր. 14 Գեկտ. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ, Ս. Աճաճնայ խորանին վրայ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Անուշաւան Վրդ. Զղջանեան:

● Դշ. 17 Գեկտ. — Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Գերշ. Տ. Կիւրեղ Եպս.:

● Եշ. 18 Գեկտ. — Տօն Ս. Հարցն եղիպացոց: Մայր Տաճարի Ս. Մակարայ մատրան մէջ պատարագեց, ըստ սովորութեան, Թատտօվանա հայրը՝ Հոգշ. Տ. Մաշտոց Վրդ. Բարիլուսեան:

● Շր. 20 Գեկտ. — Ս. Նիկողայոսի Սփանջեալ գործին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադրի: Ժամարարն էր Հոգշ. Տ. Ռուբէն Վրդ. Յովակիմեան: Վերաբերումը կատարուեցաւ Ս. Նիկողայոսի Սեղանին վրայէն, ի դաւիթ Ս. Յակոբայ:

— Այսօր ըլլալով անուան տօնը Եաֆայի մեր վանքին ու եկեղեցիին, Գերշ. Տ. Կիւրեղ Եպս. ի գլխաւորութեամբ, քանի մը վարդապետներ, դպրոցականներ և երգեցիկ երիտասարդներ, մեկնեցան Եաֆա, ուր տեղւոյն փոքրաթիւ գաղութի ներկայութեան, Ս. Պատարագ մատուցուեցաւ Ս. Նիկողայոս Եկեղեցոյ մէջ: Պատարագեց Հոգշ. Տ. Սեան Վրդ. և քարոզեց Գերշ. Տ. Կիւրեղ Եպս., խօսելով Ս. Նիկողայոսի կեանքին ու վարքին մասին:

● Կիր. 21 Գեկտ. — Բարեկենդան Ս. Յակոբայ պահոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Ասպետ Վրդ. Պալեան:

— Յղութեան հանդիսաւոր նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Գերշ. Տ. Կիւրեղ Եպս.:

● Բշ. 22 Գեկտ. — Յղութիւն Ս. Աստուածածին: Առաւօտուն, Գերշ. Տ. Կիւրեղ Եպս. Գարիկեանի գլխաւորութեամբ, Միաբան Հայրեր ինքնաշարժերով մեկնեցան Գեթսեմանի ձորը ու շէրաշափառով մուտք գործեցին Ս. Աստուածածնայ Տաճար, ուր Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը մատուց Գերշ. Հանդիսապետ Սրբազանը:

● Ուր. 26 Գեկտ. — Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Գերշ. Տ. Շահէ Արքեպս.:

● Շր. 27 Գեկտ. — Ս. Յակոբայ Մքնայ հայրապետին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադրի: Ժամարարն էր Հոգշ. Տ. Համբար-

ձում Արք. Քէշիշեան: Վերաբերումը կատարուեցաւ եկեղեցոյ դասին մէջ, սուրբին նկարով շինուած շարժական սեղանին վրայէն:

● Կիր. 28 Գեկտ. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ, Ս. Յովհ. Կարապետի խորանին վրայ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Սեան Վրդ. Ղարիպեան:

Պ Ա Շ Տ Օ Ն Ա Կ Ա Ն Ք

● Եշ. 3 Յուլիս. — Ս. Ուխտիս Միաբան և Գորտոպայի Արժէնթին) Հոգեւոր Հովիւ Հոգշ. Տ. Տաթև Ծ. Վրդ. Ղարիպեան ժամանեց Սուրբ Աթոռ և վերադարձաւ շաբաթ մը ետք:

● Ուր. 4 Յուլիս. — Ամերիկայի Միացեալ Նահանգաց անկախութեան 204րդ տարեդարձի առթիւ, Ամերիկեան Հիւպատոսարանի մէջ տրուած ընդունելութեան ներկայ գտնուեցան Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, Դիւանապետ Գերշ. Տ. Շահէ Արքեպս. և Տիար Գ. Հինգլեան:

● Բշ. 14 Յուլիս. — Ֆրանսական Ցեղափոխութեան 191րդ տարեդարձի առթիւ, Ֆրանսական Հիւպատոսարանի մէջ տրուած ընդունելութեան ներկայ գտնուեցան Գերշ. Տ. Շահէ Արքեպս. Աճէմեան և Հոգշ. Տ. Ասպետ Վրդ.:

● Կիր. 3 Օգոստ. — Հոգշ. Տ. Անուշաւան Վրդ. Զղջանեան ներկայ գտնուեցաւ Ասորոց Ս. Մարկոս Եկեղեցոյ մէջ, Անտիոքի Համայն Ասորոց Պատրիարք Մար Իգնատիոս Եագուպ Գ. ի մահուան քաւասունքին առթիւ կատարուած հոգեհանգստեան պաշտամունքին:

● Ուր. 22 Օգոստ. — Ս. Ուխտիս երիտասարդ Միաբաններէն Հոգշ. Տ. Կոմիտաս Արք. Շէրպէթեան աւարտած ըլլալով աստուածաբանական եռամեայ իր դասընթացը ի Գանատա, վերադարձաւ Ս. Աթոռ: Ներկայիս ան կը հետեւի Institute of Holy Land Studies ի դասընթացին:

● Բշ. 25 Օգոստ. — Ս. Աթոռ ժամանեց Կրեւտէի Հոգեւոր Հովիւ Արժ. Տ. Յովսէփ Բճ. Հալւանեան և վերադարձաւ երկու շաբաթ ետք:

● Դշ. 9 Սեպտ. — Երեկոյեան, Russian Compound ի մէջ, Համայն Ռուսաց Պատրիարք Պիմէնի անուան տանին առթիւ սարքուած ընդունելութեան ներկայ գտնուեցան Գերշ. Տ. Կիւրեղ Եպս. Գարիկեան, Հոգշ. Տ. Սեան Վրդ. Ղարիպեան, Աւագ Թարգման Հոգշ. Տ. Ասպետ Վրդ. Պալեան և Տիար Գէորգ Հինգլեան:

● Բշ. 15 Սեպտ. — Առաւօտուն, Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, ի գլուխ Միաբանութեան, բացումը կատարեց Ժառ. Վարժ. և Ընծայաբանի 1980-81 դպրոցական տարեշրջանին:

● Բշ. 29 Սեպտ. — Հրէից Սուքքօթի (Տաղաւարահարաց) տօնին առթիւ, Բագրապետարանի կողմէ Դաւթի բերդին մէջ տրուած

ընդունելութեան ներկայ եղան Գերշ. Տ. Կիւրեղ Եպս. և Հոգշ. Տ. Բարսեղ Արեւիյայ:

● Եշ. 2 Հոկտ. — Կալկաթայէն Ս. Աթոռ ժամանեց Գերշ. Տ. Արիս Եպս. Երկրանեան, որ ատեն մը պիտի մնայ մեր մէջ:

● Բշ. 6 Հոկտ. — Արժ. Տ. Ներսէս Քչ. ձեպէճեան Նիւ Եորքէն ժամանեց Սուրբ Աթոռ, ստանձնելու համար Տեսչութիւնը Ալեքս. և Մարի Մանուկեան ժառանգաւորաց վարժարանին և Ընծայարանին, փոխան Տ. ար Գայլակ Անթապեանին, որ քառամեայ պաշտօնավարութենէ ետք (նախ իբրև ներքին Տեսուչ, վերջին տարին իբրև Տեսուչ) վերադարձաւ Մայր Հայրենիք:

● Գշ. 7 Հոկտ. — St. John's Ակնարուժարանի մէջ, Խնամակալութեան անդամ Տէր և Տիկին Քէյթ Լիլի ի պատիւ տրուած ընդունելութեան ներկայ գտնուեցան Հոգշ. Տ. Անուշաւան Վրդ. և Հոգշ. Տ. Բարսեղ Արեւիյայ:

● Բշ. 13 Հոկտ. — Ծոպպէի և Զաֆայի Հոգևոր Հովուութեան պաշտօնը առժամաբար յանձնուեցաւ Ս. Աստուածածնայ Տաճարի Տեսուչ Հոգշ. Տ. Հայրիկ Արդ. Գալայճեանի, փոխան Հոգշ. Տ. Նուրհան Վրդ. Մանուկեանի, որ երէկ մեկնեցաւ Ամէլոյ, Հոլանտա, իբրև առաջին հովիւր տեղւոյն փոքրաթիւ գաղութին: Իսկ Հոգշ. Տ. Բարսեղ Արդ. Գալէմտէրեան հրաժարած ըլլալով Մատակարարութեան իր պաշտօնէն, Ս. Հրեշտակապետաց վանքի Տեսուչ Հոգշ. Տ. Սեան Վրդ. Ղարիպեանը վերջտին կոչուեցաւ այդ պաշտօնին:

● Գշ. 14 Հոկտ. — Գիշերուան ժամը 10ին, Ս. Թարութեան Տաճարի մեր Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ ծագեցաւ հրդեհ, որուն զոհ դնաց Տաճարին փառաւոր նկարներէն մին:

● Բշ. 20 Հոկտ. — Ծանօթ բանասէր Փրօֆ. Թ. Ս. Անասեան Քայիֆօրնիայէն ժամանեց երուսաղէմ, ուր իր անցուցած մօտ երկու ամիսներու ընթացքին հրատարակեց ուսումնասիրութիւն մը Ստեփանոս Սալմաստեցի կաթողիկոսի մասին, որը կը հրատարակուի նաև Սինոն մէջ:

● Գշ. 22 Հոկտ. — Նոթը Տամի կեդրոնական մատրան մէջ, Ն. Սրբութիւն Թով. Պօղոս Բ. Պապի գահակալութեան 2րդ տարեդարձի առթիւ կատարուած Գոհաբանական Մաղիանքին ներկայ գտնուեցան Գերշ. Տ. Կիւրեղ Եպս., Հոգշ. Տ. Ասպետ Վրդ. և Տիար Գ. Հինդլեան:

● Կիր. 26 Հոկտ. — Նոր Երուսաղէմի Y. M. C. A. ի աւագ մուտքի քարեկարգման գործադրութիւններու աւարտման առթիւ սարքուած ընդունելութեան ներկայ գտնուեցան Գերշ. Տ. Կիւրեղ Եպս., Հոգշ. Տ. Ասպետ Վրդ., Արժ. Տ. Ներսէս Քչ. և Տիար Գերոգ Հինդլեան:

— Նոյն օրը, Խարայէլի Նախագահ Իցնաք Նալօնի եփպոստոս տալիք առաջին այցելութեան առթիւ Պէն Կուրեօն օգակայան ողջերթ մարթելու գնաց Հոգշ. Տ. Անուշաւան Վրդ.:

● Բշ. 27 Հոկտ. — Քրիստոնեայ համայնքներու գործառնութեանց Կրօնից Նախարարութեան Տնօրէն Պր. Ռօզէն այցելեց Ամեն. Ս. Պատրիարք Հօր:

● Գշ. 28 Հոկտ. — Ս. Ուստիս երիտասարդ Միաբաններէն Հոգշ. Տ. Արփիար Արդ. Տէմիրճեան վերադարձաւ Ս. Աթոռ, Պեղծաբայի մէջ (Լուլէյնի Համալսարան) իր առած երկամեայ ուսման աւարտին: Ներկայիս ան կը հետևի Ecole Bibliqueի դասընթացներուն:

● Եշ. 30 Հոկտ. — Ն. Վսեմ. Նախագահին վերադարձին առթիւ, օգակայան զիմաւորութեան գնաց Գերշ. Տ. Շահէ Արքեպս.:

● Բշ. 31 Հոկտ. — Լուսերակաւ եկեղեցւոյ մէջ, Reformation Dayի 450րդ տարեդարձի առթիւ կատարուած արարողութեան ներկայ գտնուեցաւ Գերշ. Տ. Շահէ Արքեպս.:

● Ուր. 7 Նոյեմ. — Ամեն. Ս. Պատրիարք Հայրը Նախագահեց Հ. Մ. Բ. Մ. ի Ակումբին մէջ Հ. Թ. Գաշակցութեան Հիմնարկութեան 90ամեակի հանդէսին և բոլոր փառաւորները:

● Բշ. 10 Նոյեմ. — Կէսօրէ առաջ, Յրանչիսկեանց Միաբանութեան Նոր Մեծաւորին (Կիւսթոս) զիմաւորութեան, Ծոպպէի զբան մօտ, ներկայ եղաւ Գերշ. Տ. Շահէ Արքեպս.: Նոր Կիւսթոսը, Հայր Իկնաղիօ Մանչինի, ծանօթ դէմք մըն է քաղաքի քրիստոնեայ հասարակութեան և սիրուած բարեգործ: Անցեալ տարուան Ապրիլի 24ին բանախօսած էր Մեծ Եղեռնի և հայ ցեղասպանութեան մասին:

— Կէսօրէ ետք, Գերապատիւ Կիւսթոսը շնորհակալութիւն յայտնեց Ս. Թարութեան Տաճար: Զանազան համայնքներու ներկայացուցիչներու կարգին, մեր կողմէ ներկայ էին Գերշ. Տ. Կիւրեղ Եպս. և Հոգշ. Տ. Ասպետ Վրդ.:

● Կիր. 16 Նոյեմ. — Հոգշ. Տ. Անուշաւան Վրդ. Զղջանեան ներկայ գտնուեցաւ Թոյն-Կաթողիկոսներու Նաղարէթի Եպիսկոպոս Մաքսիմոս Սալլուսի կողմէ կատարուած երկու քահանաներու ձեռնադրութեան իրենց եկեղեցիին մէջ:

● Գշ. 19 Նոյեմ. — Աւստրալիոյ Հայոց Առաջնորդ Գերշ. Տ. Գարեգին Արքեպս. Գաղանճեան ժամանեց Ս. Աթոռ և մեկնեցաւ քանի մը օրեր ետք:

● Եր. 29 Նոյեմ. — Երեկոյեան, Սկոթլանդի St. Andrew's Եկեղեցւոյ հիմնարկութեան յիշմամեակի առթիւ, Scottish Hospiceի մէջ սարքուած ընդունելութեան ներկայ գտնուեցան Գերշ. Տ. Կիւրեղ Եպս., Հոգշ. Տ. Ասպետ Վրդ., Արժ. Տ. Ներսէս Քահանայ և Տիար Գերոգ Հինդլեան:

● Կիր. 30 Նոյեմ. — Նոյն առթիւ, Սկոթլանդի Եկեղեցւոյ մէջ Կէսօրէ առաջ կատարուած մասնաւոր արարողութեան և ընդունելութեան ներկայ եղան Հոգշ. Տ. Անուշաւան Վրդ. Զղջանեան և Հոգշ. Տ. Մեսրոպ Արեւիյայ Մոթաֆեան:

Տ. ԿՈՄԻՏԱՍ ԱՐՔԵՊՍ. Տ. ՍՏԵՓԱՆԵԱՆ

1925 — 1980

Դեկտ. 2ին, Ս. Էջմիածնէն Ս. Աթոռ հասած հեռագիր մը կը գումէր անժամա- նակ վախճանումը Մայր Աթոռոյ բարձրաստիճան Միաբաններէն Այրարատեան Թեմի բազմամեայ եւ սիրուած Առաջն. Փոխանորդ Գերշ. Տ. Կոմիտաս Արքեպս. Տէր Ստեփանեանի: Հանգուցեալը, հազիւ 55 տարեկան, ատենէ մը ի վեր կը տառապէր արդէն սրտի անկանոնութենէ: Մահն ալ արդիւնքն էր սրտի կաթնուածի:

Մայր Աթոռոյ Միաբանութեան հետ ու չափ Ս. Յակոբեանց Միաբանութիւնն ալ սգաւորուած է այս առիթով, ոչ միայն ոյ ուղեւորել իբրեւ անբաժան մասը Հայց. Ս. եկեղեցիին, ունի գիտակցութիւնը թէ արժէք մըն է որ կը գերեզմանուի իր մահով, այլ նաեւ անոր համար որ Հանգուցեալ Սրբազանը իբրեւ սնն եւ Սարկաւազ՝ հոս է որ առած է տարերքը հոգեւորական իր կրթութեան, իր ծննդավայր Դամասկոսէն իբրեւ ժառանգաւոր սնն Ստեփան Տէր Ստեփանեան երուսաղէմ գալով 1940ին եւ 1945ին Սարկաւազ ձեռնադրուելէ ետք տարի մըն ալ շարունակելով իր ուսումը Ընծայարանի բաժնին մէջ: Յետոյ ընտանեօք ներգաղթած է Հայրենիք, ուր լրացուցած է ընդհա- տուած իր կրօնական ուսումը աշակերտելով Ս. Էջմիածնի Հոգեւոր ձեմարանին: 1951ին կը ձեռնադրուի կուսակրօն քահանայ՝ երաջանկայիշատակ Տ. Տ. Գէորգ Զ. Կաթողիկոսէն, իսկ 1957ին՝ Եպիսկոպոս, Տ. Տ. Վազգէն Ա. Կաթողիկոսէն: Շատ չանցած կը նշանակուի Առաջնորդական Փոխանորդ Այրարատեան թեմին, եւ կը վարէ կարեւոր այդ պաշտօնը մինչեւ իր մահը:

Հանգ. Տ. Կոմիտաս Արքազան բանիցս եղած է արտասահման, ուղեկցելով Վե- հափառ Հայրապետին: 1975ին մաս կազմեց Ս. Աթոռ այցելող Վեհափառի շրջաւոր- րին: Հոս եղաւ ան տակաւին անցեալ Օգոստոսին, իբրեւ ներկայացուցիչը Մայր Աթո- ռոյ Սաղիմական Հոգեւորականներու Համագումարին, եւ բացման նիստին կատարեց ընթերցումը Վեհափառին յղած ողջոյնի եւ օրհնութեան խօսքին:

● Եւ. 4 Դեկտ. — Կէսօրէ առաջ, Գերշ. Տ. Արիս Եպս. եւ Հոգշ. Տ. Անուշաւան Վրդ. ներ- կայ գտնուեցան Յրանչիսկեաններու Ս. Փրկիչ Մայր եկեղեցւոյ մէջ, իտալիոյ մէջ վերջերս պատահած երկրաշարժի զոհերուն համար մա- տուցուած հանգստեան Ս. Պատարագին:

● Գշ. 9 Դեկտ. — Թէլ-Ալիլիի Շուէտական ղեկավար Տիար Թորոթէն Օրն այցելեց Ամեն. Ս. Պատրիարք Հօր:

— Երեկոյեան, Հրէից Խանուկայի տօնին առթիւ, Քաղաքապետ Վսեմ. Թէտի Քսէլէթի կողմէ, Քաղաքապետարանի սրահին մէջ տրե- ուած ընդունելութեան ներկայ գտնուեցան Գերշ. Տ. Կիրեղ Եպս. եւ Հոգշ. Տ. Ասպետ Վրդ.:

● Եւ. 18 Դեկտ. — Ս. Ուխտիս Միաբաննե- րէն Հոգշ. Տ. Վրդէն Վրդ. Այբաղեան եւ Հոգշ.

Տ. Խաթակ Վրդ. Պարսամեան 10 օրուան համար ժամանեցին Ս. Աթոռ: Հայր Վրդէն, Լոնտոնի մէջ աւարտելէ հոգ աստուածաբանական իր ուսումը, ներկայիս կը գտնուի Ժընև, իբրեւ Հովիւ Զուրցերիոյ փոքրաթիւ գաղութին:

● Ուր. 26 Դեկտ. — Եւրոպացւոց Ս. Ինըն- դեան տօնին առթիւ, Կէսօրէ առաջ, Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, ի գլուխ Միաբանու- թեան, շնորհաւորական այցելութիւն տուաւ Յրանչիսկեանց Գերշ. Կիրեթոսին եւ Լատինաց Ամեն. Ս. Պատրիարքին: Ապա, հետո ունենա- լով Գերշ. Տ. Շահէ Արքեպս. ր եւ Հոգշ. Տ. Աս- պետ Վրդ. ր, այցելեց Պապական Նուիրակին եւ Անկլիքեան Արքեպս. ին, իսկ Գերշ. Տ. Կիրե- ղ Եպիսկ., Հոգշ. Հայրերու ընկերակցու- թեամբ, այցելեց Կաթողիկէ եւ Բողոքական փոքր յարանուանութեանց Հոգեւոր ղեկերուն:

Տ. ԳՐԻԳՈՐ ԽԱՉԱԿԻՐ ՔՅՆՅ. ԱԻԱԳԵԱՆ

1912 — 1980

Դեկտեմբեր 8, Երկուշաբթի կանուխ առաւօտուն, Բեթղեմի Ֆրանսական Հիւանդանոցին մէջ, երկար եւ տանջալից հոգեվարքէ մը ետք իր յաւիտենական բունը մտաւ Ս. Ծննդեան Տաճարի բազմավաստակ ծառայող Արժ. Տ. Գրիգոր Խաչակիր Քահանայ Աւագեանը, որ բաւական ատենէ ի վեր կը տառապէր շաքարախտէ:

Հանգուցեալը, աւագանի անունով Լեւոն, ծնած է Վառնա՝ Պուլկարիա՝ 1912ին: Երուսաղէմ եկած է 1930ին, ուր տառի մը աշակերտած է Ժառանգ. Վարժարանին: Յետոյ ատեն մը ծառայած է իրրեւ Միարան ի Ս. Յարութիւն եւ Ս. Փրկիչ: Ատեն մը հետեւած է ոսկերչութեան: Ամուսնացած է 1948ին, բայց մնացած է անզաւակ: Քահանայ ձեռնադրուած է 1956 Ապրիլ 17ին, Ս. Ծննդեան Տաճարին մէջ, ձեռամբ հանգ. Տ. Հայկազուն Եպս. Արքահամանի, եւ այնուհետեւ իրր ժամարար ծառայած է նոյն Տաճարին, ճշմարիտ հոգեւորականի մը վայել նուիրուածութեամբ:

Տարիներու իր խղճամիտ ծառայութիւնը զինք արժանի կացուցած է նախ Աւագ Քանանայի եւ ապա Խաչակիր Քահանայի տիտղոսներուն:

Հանգուցեալ Տէր Հօր մարմինը Երուսաղէմ փոխադրուեցաւ նոյն օրը: Վերջին օծումն ու թաղումը կատարուեցան յաջորդ առաւօտ՝ Դշ. Յ Դեկտեմբերին, Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ: Ս. Պատարագը Աւագ Սեղանին վրայ մատոյց Հոգշ. Տ. Աւան Վրդ. Ղարիպեանը, իսկ վերջին օծումը կատարեց եւ դամբանականը խօսեցաւ Գերշ. Տ. Կիրել Եպս. Գաբրիկեան, վեր հանելով բարեմասնութիւնները ննջեցեալին, իրրեւ համեստ ու հաւատաւոր պաշտօնեաներէն մէկը Աստուծոյ Սուրբ Տան:

Ժամը 10.30ին կատարուած հանգստեան պաշտամունքին, բազմաթիւ ազգայիններէ զատ, ներկայ եղան նաեւ Ս. Ծննդեան Տաճարի Յունաց եւ Լատինաց Տնսուները, որոնք ապա քնկերացան Գերշ. Տ. Կիրել Սրբազանէ զխաւորուած յուդարկաւորութեան թափօրին մինչեւ Ս. Փրկչի գերեզմանատունը, ուր ամփոփուեցաւ հանգուցեալ Տէր Հօր մարմինը, որմէ ետք բոլորն ալ դարձան Հ. Ե. Մ.ի Ակումբ՝ հոգեսուրճ առնելու:

Տէրը իր լոյսերուն մէջ հանգչեցնէ հոգին համեստ իր պաշտօնէին եւ երկնային մխիթարութիւն պարգեւէ այրիացեալ երէցկնոջ եւ իր ազգականներուն:

Կոմիտաս Սրբազանի մահով Մայր Աթոռը կը կորսնցնէ պարտաճանաչ ու շնորհաւատ հոգեւորական մը, որ իր պաշտօնավարութեան ամբողջ տնօրդութեան հոգեւին սիրեց իր գործն ու հօտը, փոխադարձաբար սիրուելով ու յարգուելով անկէ:

Հոգեհանգստեան յատուկ կարգ կատարուեցաւ Հանգուցեալ Սրբազանի հոգւոյն Երուսաղէմի բոլոր եկեղեցիներուն մէջ, Կիրակի, 7 Դեկտ.ին, յաւարտ Ս. Պատարագի:

Հանգիստ յաւիտենական՝ խոնջած իր ոսկորներուն եւ երանութիւն յաւերժական՝ առաքինազարդ իր հոգիին:

ԱՄԵՆ. Տ. ՊԵՆԵՏԻԺԹՕՍ ՊԱՏՐԻԱՐԷ ՅՈՒՆԱՑ

1892 - 1980

10 Դեկտեմբեր, Չորեքշաբթի առաւօտեան ժամը Տին, Ս. Յարութեան Տաճարի մեծ զանգը ընդհատ ընդհատ կը գուժէր մահը Յունաց երուսաղէմի Պատրիարք Ամեն. Տ. Պէնէտրիթօս Ա.ի: Ճճամեայ ձերունազարդ հովուապետը իր յախտնական հանգիստը մտած էր նոյն օրը արշալոյսին, սրտի սուր տազնապի մը հետեւանքով, Սկոթոս լերան «Հատասա» հիւանդանոցին մէջ, ուր փոխադրուած էր 12 օրեր առաջ:

Հանգուցեալ Պատրիարքը, աւզանի անունով Վասիլիոս Փափատօփուլօս, ծնած է Նիկովիդիա նահանգի Պրուսա քաղաքը՝ 1892ին: Երուսաղէմ եկած է 8 Դեկտ. 1906ին եւ աշակերտած իրենց Ընծայարանին: 1914ին մեկնած է Յունաստան, ուր հետեւած է Աթէնքի համալսարանի աստուածաբանական եւ իրաւագիտական դասընթացներուն: Վերադառնալով Երուսաղէմ, ձեռնադրուած է արեղայ եւ քարտուղարութեան կոչուած Վանուց Դիւանատան մէջ: Յետոյ դարձեալ մեկնած է իր հայրենիքը: Ծնողքը զոհ գացած է 1922ին, Իզմիրի մէջ Թուրքերու կազմակերպած ջարդերուն: 1946ին վերջնականօրէն Երուսաղէմ եկած է եւ ընտրուած Սինոդի անդամ ու կարգուած Ելիւմօից Տեսուչ: 1951ին ձեռնադրուած է Եպիսկոպոս (յիշել որ մեր Պատրիարքն ալ նոյն թուականին բարձրացած է Եպիսկոպոսութեան աստիճանին) եւ Պատրիարք ընտրուած 1957 Յունուար 31ին, իրրեւ 96րդ գահակալը իրենց Աթոռին: Հիւսէյն Թագաւորէն ընդունելէ ետք Ճանաչման հրովարտակ՝ գահ բարձրացած է նոյն տարւոյ Մարտի 1ին:

Հանգուցեալ Պատրիարքի մարմինը երեք օրեր շարունակ մնաց Յունաց Վանքի Մայր եկեղեցւոյ — Ս. Կոստանդինոս եւ Հեղինէ — մէջ, ուր, հակառակ խիստ ան- նպաստ օդին, բազմաթիւ ժողովուրդ տողանցեց իր դագաղին առջեւէն։ Հանգստեան Ս. Պատարագը մատուցուեցաւ Կիրակի, 14 Դեկտ.-ի առաւօտուն։ Մեր կողմէ՛ ներկայ գտնուեցան Գերշ. Տ. Կիրեղ Եպս. եւ Աւագ Թարգման Հոգշ. Տ. Ասպետ Վրդ.։ Ապս- ընթացք առաւ յուղարկաւորութեան երկարածիք թափօրը, որ կանգ առաւ Ս. Յակոբ- եանց Մայրավանքի աւագ մուտքին առջեւ, ուր կը սպասէին Ամեն. Ս. Պատրիարքը, Միաբանութիւն, Ժառանգաւոր սաներ եւ ժողովուրդ։ Այդ միջոցին էր որ չորս օրերու անձրեւը տեղի կու տար երկնքի կապոյտին ու արեւին։ Մեծ զանգին ընդհատ ղօղանջ- ներուն եկան միախառնուիլ հանգստեան մեր սրտառուչ մեղեդիները։ Կարդացուեցաւ հանգստեան Աւետարան։ Ս. Պատրիարքը «Հոգւոց»ը արտասանելէ ետք, ծաղկեպսակ մը զետեղեց մեծ հանգուցեալի դագաղին վրայ եւ, ընկերակցութեամբ Տ. Շահէ եւ Տ. Կիրեղ Սրբազաններու եւ Տ. Ասպետ Վրդ.-ի, հետեւեցաւ թափօրին մինչեւ Զիթենեաց լեռ, ուր Գալիլիոյ վանքի (հանգուցեալի քնակավայրը) կից եկեղեցւոյ նկուղներէն մէ- լեռ, ուր Գալիլիոյ վանքի (հանգուցեալի քնակավայրը) կից եկեղեցւոյ նկուղներէն մէ- կուն մէջ, հանգստեան կարճ արարողութենէ մը ետք, ամփոփուեցաւ դագաղը հան- կուն մէջ, հանգստեան կարճ արարողութենէ մը ետք, ամփոփուեցաւ դագաղը հան- կուն մէջ, հանգստեան կարճ արարողութենէ մը ետք, ամփոփուեցաւ դագաղը հան- կուն մէջ, հանգստեան կարճ արարողութենէ մը ետք, ամփոփուեցաւ դագաղը հան-

Ներկաները, որոնց շարքին էր նաեւ Լատինաց Պատրիարքը, այլ համայնք- գուցեալին։ Ներկաները, որոնց շարքին էր նաեւ Լատինաց Պատրիարքը, այլ համայնք- ներու հոգեւոր պետեր եւ պետական ղէմքեր (որոնց զվեսուն՝ Ն. Վսեմ. Իցհաբ Նավօն՝ նախագահը Խորալէ(ի), իրենց ցաւակցութիւնները յայտնեցին Գերշ. Տ. Ճէրմանօ Նախագահը Խորալէ(ի), իրենց ցաւակցութիւնները յայտնեցին Գերշ. Տ. Ճէրմանօ Արքեպիսկոպոսին, որ Պատրիարքի վախճանման օրն իսկ Ս. Սինոդի կողմէ ընտրուած էր Պատր. Տեղապահ։ (Կ'արժէ յիշել թէ Ճէրմանօ Սրբազան մէկն էր 1976ին Ս. Էջ- էր Պատր. Տեղապահ։ (Կ'արժէ յիշել թէ Ճէրմանօ Սրբազան մէկն էր 1976ին Ս. Էջ- միածնի մէջ Միւռնօրհնէքի ներկայ եղող օտար բարձրաստիճան հոգեւորականներէն.)

S. Պէնէտիքթօս Պատրիարքի մահով, Յոյն-Օրթոտոքս եկեղեցին կը կորսնցնէ մին իր բազմարդիւն մշակներէն, որ հակառակ իր յառաջացեալ տարիքին, մինչեւ իր վերջին օրերը մնաց արթուն ու անխոնջ դիտապետը իր եկեղեցիին։

Թող Տէրը իր լոյսերուն արժանի ընէ հոգին բարձրաստիճան իր պաշտօնէին։

Բ Ա Ր Ե Պ Ա Շ Տ Ա Կ Ա Ն Ն ՈՒ Է Ր Ն Ե Ր

Շնորհակալութեամբ և օրհնութեամբ կ'արձանագրենք **1980** թաւոյ ընթացքին **Ս. Յակոբեանց Մայր Տաճարին** և այլ Սրբավայրերուն եղած եռեւեալ բարեպաշտական նաւերները:

1. — Տիկին Կիւլիանէ Ալեքսանեան, վանքաբնակ, Ս. Յակոբեանց Մայր Տաճարին կը նուիրէ 12 խաչի բռնիչներ և մէկ Աւետարանի բռնիչ, գոյնզգոյն ճերմակ ծոպերով հիւսուած:

2. — Տիկին Հռիփսիմէ Յակոբեան, վանքաբնակ, կը նուիրէ մէկ տարեկան փոքրիկի շապիկ մը:

3. — Տիկին Սիրածին Գրիգորեան, Մալաթիացի, վանքաբնակ, կը նուիրէ Քրիստոսի և Ս. Աստուածամօր Գերեզմաններուն, Ս. Գլխադրին և Ս. Հրեշտակապետաց եկեղեցիին երեքական պղնձեայ ծաղկամաններ:

4. — Գերմանահայ Տէր և Տիկին Սահակ Սինոպլեաններ կը նուիրեն Ս. Աստուածամօր Հեթումի խորանին առջև փռուելու եւրոպական փոքր գորգ մը:

5. — Նմանապէս կը նուիրեն Ս. Աստուածածնայ գերեզմանին ծածկոց մը և 12 խաչի բռնիչներ:

6. — Նմանապէս կը նուիրեն Ս. Մակարայ խորանին զոյգ մը պղնձեայ դեղին փոքր մոմի աշտանակ:

7. — Տիկին Ռենէ Զալուշեան, վանքաբնակ, Ս. Գլխադրին կը նուիրէ երկու (մին դեղին և միւսը սպիտակ) կանթեղներ և շիշ մը ձէթ:

8. — Տիկին Հերմինէ Սիսլեան, բնիկ Մարաշցի, Ապու Տապիարնակ, կը նուիրէ երկու բաց կապոյտ-դեղին փուլերով

հիւսուած խաչեր Սուրբ Աստուածածնայ պաակներուն:

9. — Յարութիւն Քէօրոզլանեան, երուսաղէմածին, Աւստրալիաբնակ, Ս. Աստուածածնայ Տաճարին կը նուիրէ ժամարարի զգեստի ամբողջական սարուածք մը:

10. — Լոս-Անճէլըսաբնակ Տէր և Տիկին Ոսկան և Էլիզ Ստամպոլիաններ կը նուիրեն Ս. Յակոբեանց Մայր Տաճարին 10 սպիտակ ծոպաւոր ժամարարի շապիկներ:

11. — Կ. Պոլսաբնակ Այրի Տիկին Աղաւի Մէրկէրեան և զաւակը՝ Տիար Լևոն Մէրկէրեան և Տիկինը կը նուիրեն Ս. Յակոբեանց Մայր Տաճարին ալպաստրէ զոյգ մը փոքրիկ աշտանակներ՝ իրենց ամուսնոյն և հօր մահուան 35րդ տարեկիցին առթիւ:

12. — Յուպպէաբնակ Տիկին Նուրիցա Գօփուշեան կը նուիրէ Hoover մեքենայ մը, իր յարակից մասերով, Ս. Յակոբեանց Մայր Տաճարի գորգերու մաքրութեան համար:

13. — Ամերիկայէն Տիկին Ազնիւ Յակոբեան կը նուիրէ Ս. Գլխադրին սպիտակ պրոնզէ կանթեղ մը՝ ձեռամբ Տիար Լիպարիտ Պետրոսեանի:

14. — Կ. Պոլսեցի Տիկին Էլմաստ Գարայեան կը նուիրէ կարմիր փուլերով յեռուած Աւետարանի բռնիչ մը:

15. — Ամերիկաբնակ Տիկին Լիտիա Պոյաճեան կը նուիրէ Ս. Աստուածածնայ պաակներին ոսկեայ փոքրիկ ձեռք մը:

ՀԱՅՐԻԿ ԱՐՔԵՊՍ. ԱՍԼԱՆԵԱՆ

Լուսաբարապետ Ս. Արոոյ

Ս Ի Ո Ն

ՅԱՆՎ ՆԻԻԹՈՅ 1980 ՏԱՐԻՈՅ

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն . —	Երկու հոսի՝ Սոսաղեմի	
ՓԱՅԼԱԿ ԱՆԹԱՊԵԱՆ. — Վարդան Ա-	Համագումարին մասնակցողներուն	147
րենկյու ճշտաբան Պոսմու-	Գ. ձ. — Եղիշե Պատրիարք Գուրեան	55
թեան կորած ողբերները	Ե. — Ժողովի մը առիթով	101
Ն. ԱՐՔ. ԾՈՎԱԿԱՆ. — Լուսանցա-	Ս. Յարութեան Տանարի նորոգու-	
գրութիւններ	թիւները	296
Արիստակէս Վրդ. Խաբերդցի		321
Մարտիրոս Պատրիարք Պուրսացի		325
Գ. ԲԱՄՊՈՒԹՅԱՆ. — Գրիգոր Շղթա-	Կ Ր Օ Ն Ա Կ Ա Ն . —	
յակիր Պատրիարքի երկու նորա-	Ռոմիէն Վրդ. ՅՈՎԱԿԻՄԵԱՆ. —	
յայն նամակները	Ամանորի պատգամ	21
Արմենի նախարարաց և Երազմուտ	ԱՂԱՆ Ծ. ՎՐԴ. ՊԱՆԻՉԵԱՆ. —	
Մելիքի խաչքարի մահուան մասին	Վարդանան	59
նորայայն վաւերացիր մը	Թարգմանաց	305
Յ. Ս. ԱՆԱՍԵԱՆ. — Սեփական Սալ-	ԳԵՈՐԳ Ս. ՃԻՆԻՎԻՉԵԱՆ. — Մեծ	
մասեցի	շարժումը	61
	Տօն Համբարձման	122
Բ Ա Ն Ա Ս Տ Ե Ղ Ծ Ա Կ Ա Ն . —	ՎԱԶԷ Ծ. ՎՐԴ. ԻԳՆԱՏԻՈՍԵԱՆ. —	
Եղիշե Վրդ. — Անվերնացի	Տեղեկական Աղբյուր՝ Քրիստոսի	
Մ. ՄԱՆՈՒԿԵԱՆ. — * (Աւետիք	չարչարանաց մէջ	302
Իսահակեանի)		
To Armenia (բրգմ. Վահան	Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն Վ Ա Ն Ք Ե Ր . —	
Թեֆեանէ)	Ն. ԱՐՔ. ԾՈՎԱԿԱՆ. —	
Գ. ՃԱՐՏԱՐ. — Օրերը	Ս. Կարապետի Վանք Կեսարիոյ	37
Քունը	Ս. Հրեշտակապետ Վանք Սեբասիոյ	83
Լուսմ	Կողմէ Վանք	128
Ամլուրիւն		
ԾՈՎԱԿԱՆ. — Քառեակներ	ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ .	
ՎԱԶԱՆ ԹԵՔԵՆԱՆ. — Դուռ	ՅՈՒՍԻԿ ՎՐԴ. ԶՈՂՐԱՊԵԱՆ. — Իզմիր-	
մերթնեա	լեան Կարողիկոսի հրաժարականը	78
Գ Ր Ա Խ Օ Ս Ա Կ Ա Ն .	Ս. Գ Ր Ա Կ Ա Ն . —	
Գ. ՃԱՐՏԱՐ. — «Գիրք Իւլյանցներ-	Ե. — Յետոյ կը կեցնէ արեւը	299
գուրեանց» (Կոստան Զարեանի)	Գ. — Ընծայումն ի Տանար	300
Գ Ր Ա Կ Ա Ն . —	«ՍԻՈՆ»Ի ԼՈՒՍԱԲԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ	
ԿԱՐԻԿ ՊԱՄՄԱՃԵԱՆ. — Եղիշե Գուրեան	Խնչէ «Ալիւրիա» Բառին բուն	
	իմաստը	84
Գ Ր Ա Մ Ա Գ Ի Տ Ա Կ Ա Ն . —	Օրոշոստներու խաչակնքումի	
ԶԱՐԵՀ ՊՏՈՒԿԵԱՆ. — Հայկական	ձեւի մասին	84
դրամներու նոր հաւաքածոն		
թանգարանէն ներս	Այլ Եկեղեցիներ ունի՞նք Բանան-	
	ներու անուանափոխութեան կամ	
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ. —	ապաշխարանքի սովորութիւնը	137
Ե. — Յոբելեարը	Կարգ մը շաբաթապահոց մասին	329

ՅԻՍՈՒՆ ՏԱՐԻ ԱՌԱՋ. —

Դուրեան Յոբելեան	85
Տօն Ս. Վարդանանց զօրավարաց	85
Տնանընդառաջ	85
Ժառ. Վարժարանը 7 մեակ կը շահի մրցախաղի մէջ	137
Դուրեան Յոբելեանի Ամերիկայի համալսարանէն արդիւնքը	329

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ. —

Յուն. - Փետր. Ամսօրեայ լուրեր	44
Մարտ - Ապրիլ » »	88
Մայիս - Յունիս » »	141
Նոյեմ. - Դեկտ. » »	335

ՏԽՐՈՒՆԻ. —

Տ. Կոմիտաս Արեւել. Տ. Սեփանեան	341
Տ. Գրիգոր Խաչակիր Քհյ. Աւագեան	342
Սիրանոյշ Մայրապետ Էմմէնեան	345
Ամեն. Տ. Պենէսիքոս Պատրիարք Յունաց	343

ԱՅԼԵԻԱՅԼՔ. —

ՇՆՈՐԶՔ ԱՐՔԵՊՍ. ԳԱԼՈՒՍՏԵԱՆ. —

Լուսաբանութիւններ եւ հեղուներ	34
Գ. — Եկեղեցիներու միութեան եօթն- եակը Երուսաղէմի մէջ	39
Նկատուութիւններ	84
Շ. — Եկեղեցիներու Համալսարանային խորհուրդ — Ժողով Աւաքելու- թեան եւ Աւետարանչութեան	105
ՓԱՅԼԱԿ ԱՆԹՈՊԵԱՆ. — Կեանքի 50 իմաստայից տարիներ	116
ԿԻՒՐԵՆ. ԵՊՍ. ԳԱԲԻԿԵԱՆ. — Տարե- կան Տեղեկագիր Ս. Թարգմանչաց Երկրորդական Վարժարանի	129
ՍԱՀԱԿ ԳԱԼԱՅՃԵԱՆ. — Տեղեկագիր Կիւլպէնկեան Մասնադպարանի	138
Ամեն. Ս. Պատրիարք Հօր Ծննդեան պատգամը Բերդեհէմի Ս. Այրէն	2
Շնորհաւորական գիր՝ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետէն	5, 51
Շնորհաւորական գիր՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսներէն	6, 52
Շնորհաւորական հեռագիր՝ Յովնան- եան - Պօղոս Բ. Պապէն	7

Շնորհաւորական գիր՝ Ռուսաց Պիմէն Պատրիարքէն	7, 53
Շնորհաւորական գիր՝ Քենթրալըրիի Արքեպիսկոպոսէն	8
Շնորհաւորական գիր՝ Վսեմ. Տիար Ալեքս Մանուկեանէն	8, 53
Շնորհակալութեան գիր՝ նոյնէն	54
Յոբելեանական Հանդէս՝ Վսեմ. Տիար Ալեքս Մանուկեանի Հ. Բ. Ը. Մ. ի Նախագահը. 25ամեակի առթիւ	12
Ն. Ս. Պապին Կոչը՝ Վեհապետութեան Օրոշուած առթիւ	16
Իսրայէլի Վսեմ. Նախագահին այցը Ս. Արքո	42
Ամանորի Հանդէս Ժառ. Վարժարանի եւ Ընծայարանի	43
Պատրիարքական Կոնդակ՝ Գեորգ. Տ. Գաբելլին Արք. Գաղանճեանի ուղղուած	50
65րդ Տա-Էդարն Ապրիլեան Եղեռնի	86
Կոնդակ՝ Ամենայն Հայոց Հայրապետէն	98
Ս. Պատրիարք՝ Վկայութիւն Աստուծոյ քաղաւորութեան եւ անոր արքա- յութեան փորձառութիւնը	110
Համագումարի Կոչը Եկեղեցիներուն	113
Ամեն. Ս. Պատրիարք Հօր պատմական եւ շնորհաբեր այցը Ռումանիոյ եւ Պուլկարիոյ բնակչութեան	114
Վրաց Պատրիարքի այցը Երուսաղէմ	139
Գաբրիէլեան Ամալթրէի Հանդէսներ	140
Եկեղեցականաց Համագումար	145-294
Պուլկարահայ լեզուափոխականի մը նամակը	327-28
Հայաստանի Վարդապետական Ամեն. Տ. Եղիշեկ Ս. Պատրիարք Հօր անհանգստութիւն եւ վիրաբու- ժական գործողութիւն	334
Յանկ՝ Կիւլպէնկեան Մասնադպարանի կողմէ ստացուած գրեւոր	94, 345
Բարեպաշտական նուէրներ	344
Յանկ ճիւղոց 1980 տարւոյ	346

Բ Ո Վ Ա Ն Գ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

ԽՄԱՌԱԳՐԱԿԱՆ

- Ս. Յարութեան Տանարի նորոգութիւնները Ծ. 296

Ս. ԴՐԱԿԱՆ

- Յետու կը կեցնէ արեւը Ե. 299
— Ընծայումն ի Տանար Գ. 300

ԿՐՈՆԱԿԱՆ

- Տեղումական Աղօթքը՝ Քրիստոսի ՎԱԶԷ Ծ. ՎՐԴ. ԻԳՆԱՏԻՈՍԵԱՆ 302
— շարժարանաց մէջ ԱՂԱՆ Ծ. ՎՐԴ. ՊԱԼԻՅԵԱՆ 305
— Թարգմանչաց

ՐԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

- Քառեակներ ԾՈՎԱԿԱՆ 309
— Լիում Գ. ՃԱՐՏԱՐ 310
— Ամլուրիւն » » 310
— Դուն մերինն ես ՎԱՀԱՆ ԹԷՔԷԵԱՆ 332
— To Armenia Թրգմ. Մ. ՄԱՆՈՒԿԵԱՆ 333

ՐԱՆԱՍԻՐԱԿԱՆ

- Տեփանոս Սալմասեցի Թ. Ս. ԱՆԱՍԵԱՆ 311
— Արիստակէս Վրդ. Խարբերդցի Ն. ԱՐԲ. ԾՈՎԱԿԱՆ 321
— Մարտիրոս Պատրիարք Պուրսացի » » » 325
— Արքունի ճարտարագիտական Արապոյի Մալիսոն Խալիպի մահուան մասին Գ. ԲԱՄՊՈՒՔՃԵԱՆ 323
— Նորայայտ վաւերագիր մը

ԳՐԱԽՅԱՐԱԿԱՆ

- «Գիրք Դրեցազներգութեանց» (Կ. Զարեան) Գ. ՃԱՐՏԱՐ 326
Պուլկարահայ յեղափոխականի մը նամակը 327-8
«ՍԻՐԱՆ», Ի ԼՈՒՍԱՐԱՆՆԵՐԻՆԵՐԸ
— Կարգ մը շաբաթագրական մասին 329

ՅԵՍՈՒՆ ՏԱՐԻ ԱՌԱՋ

- Դուրեան Յոբելեանի Ամերիկայի հանգանակութեան արդիւնք 329
Հայաստանի Վարսունամեակ 330

Ամեն. Տ. Նիլիէ Ս. Պատրիարք Հօր անհունգասութիւն

- եւ վիրաբուժական գործողութիւն 334

Ս. ՅԱԿՈԲ ԵՆԲՍԷՆ

- Հեռագիր 335
— Նկերգականք - Բեմականք 335
— Պատգամականք 339

ՏԵՐՈՒՆԻ

- Տ. Կոմիտաս Արեւայ. Տ. Ստեփանեան 341
— Տ. Դրիգոր Խաչակիր Քննչ. Աւագեան 342
— Ամեն. Տ. Պենեփքոս Պատրիարք Յունաց 343

Բարեպաշտական նուէրներ

344

Յանկ՝ Կիւլեկեկեան Մասնադարանի կողմէ ասացուած գրեթէ

345

Յանկ նիւթոյ 1980 տարւոյ

346

